This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

GRAD
EREN
422
BUHR

B 1,233,758

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴՈՒՐԵԱՆ

# ԸՆԹԵՐՑՔ
# Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

Ա ՄԱՍՆ

Ի ՊԷՏՍ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ

[illegible]

[illegible]

Ի ՊՈԼԻՍ

[illegible]

1880

237

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՐԵԱՆ

# ԸՆԹԱՑՔ

## Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

Ա. ՏԱՐԻ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

ԾԱԽԻՒՔ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆՈՐ–ԹԱՂԻ ՅԻՒՍԿԻՒՏԱՐ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՖԵԱՆ

1880

*Հեղինակին ստորագրութիւնն և Ընկերութեան կնիքը չկրող օրինակք անվաւեր կը համարուին ։*

1879

**ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ**
**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ**

**ԴԻՒԱՆ**
**ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՐԴՈՅ**
**ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

*Թիւ* 207

*Արժանապատիւ Ս. Հայր*

*Ազգային վարչութեան Ուսումնական խորհուրդս իւր քննիչ Մասնաժողովոյ միջոցաւ ուշի ուշով քննելով Ձեր արժանապատուութեան պատրաստած "Ընթացք 'ի գրոց բարբառ" անուն դասագիրքը, արժանաւոր գտաւ զայն 'ի հրատարակութիւն թէ՛ Հայ լեզուին կանոնաց համեմատ և աշակերտաց դիւրուսանելի եղանակաւ պատրաստուելուն և թէ՛ մինչև այսօր հրատարակուած լաւ դասագիրքերէն մին եղած լինելոյն պատճառաւ:*

*Ուստի Ուսումնական խորհուրդս շնորհաւորելով Ձեր այս օգտակար ձեռնարկը, կը փութայ լի վստահութեամբ Ազգին յանձնարարել զայն, յորմէ մեծապէս պիտի օգտի մեր ազգային մանկտին:*

25 *Ապրիլ* 1880

*Մնամք յարգանօք*
*Ազգ. Ուսումնական խորհրդոյ*

*(Կնիք)*

ԱՏԵՆԱԴՊԻՐ
**ՍԻՄԷՕՆ ԽԱԶԸՃԵԱՆ**

Փ. ԱՏԵՆԱՊԵՏ
**Ս. Ք. ԷԼԻԿԻՒՋԷԼԵԱՆ**

*Արժանապատիւ*
*Տ. Եղիշէ վարդապետ Դուրեան*
*յիւսկիւտար*

[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս դռւմնաքեայ աշխատասիրութիւնս՝ զոր 'ի պէտս ազգային մանկտւոյ աշակերտեցի՝ նպատակ ունի ըստ կարեւոյն դիւր եւ սթափեցուցիչ եղանակաւ շակերտաց ուսուցանել գրաբառ լեզուն : Այլ կը կանխեմ աստ ըսել թէ՝ պէտք որ աշակերտ մը իւր աշխարհաբառ ընթերցարանն ըստ ամենայնի կանոնաւոր երպով աւարտելէն վերջը , գոնէ երկու տարի շարունակ աշխարհաբառի ուսման պարապի (*) եւ ապա անցնի 'ի գրաբառն :

Գործոյս նախադուռն ըլլալով նախապատրաստական դասուց համար արժան էր քերականութեան ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ ի դիւրուսոյց դասագիրք մը յօրինել՝ որ ցարդ զանազան պատճառօք յետաձգեցաւ , սակայն կը յուսամ սուղ ժամանակի մէջ՝ 'ի լոյս ընծայել :

Հինգ տարիներու շրջան պիտի պարունակէ սոյն Ընթացքը , որոյ Ա. Տարին 'ի տիպ կ'արձանացնէ իւր ծախիւք Իւսկիւտարու Նոր—Թաղի Նպաստամատոյց ընկերութիւնը՝ որ ազնիւ եւ ազգասէր երիտասարդներէ կը կազմուի , եւ որոյ նպատակն արժանի է քաջալերութեան :

---

(*) Աշխարհաբառի ուսման համար լաւագոյն դասագիրքեր չեն պակսիր , յորոց եւ մին պիտի ըլլայ Գ. Գիպէռճեանի յօրինած դասագիրքն՝ զոր պատրաստուած է 'ի լոյս տալ .

# ԸՆԹԱՑՔ

## Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

### I

### ԹԶԵՆԻՆ ԱՆՊՏՈՒՂ

| | |
|---|---|
| *Խնդրել*, փնտռել | *Ընդէ՞ր*, ինչո՞ւ |
| *Այգեգործ*, այգի մշակող | *Խափանել*, արգելուլ |
| *Ամ*, տարի | *Բրել*, փորել |
| *Յորմէհետէ*, որմէ 'ի վեր | *Արկանել աղբ*, աղբ նետել |

*Թզենի մի էր ուրումն տնկեալ (տնկած էր մէկը) յայգւոջ իւրում, և եկն խնդրել պտուղ 'ի նմանէ և ոչ եգիտ: Ասէ զայգեգործն. Ահա* երեք ամք են՝ *(1) յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզենւոյդ՝ և ոչ գտանեմ,* արդ կտրեա զդա, ընդէ՞ր և զերկիր խափանէ *(2): Նա պատասխանի ետ և ասէ. Տէր,*

---

(1) Տէր բային՝ որ բային գործողութեան տէրն է՝ ուղղական հոլով կը դրուի երբ բայը դիմաւոր ըլլայ: Օր. Ահա երեք ամք են խօսքին մէջ տէր բայի է ամք բառը: Պէտք է որ տէր բային թուով ու դէմքով համաձայն ըլլայ իւր բային հետ եթէ ուղղ. է, այսինքն՝ մէկ միայն:

(2) Այն բառերը որ խօսքի մը ամբողջութեանը կը ծառայեն խնդիր կ'ըսուին, եւ երկու տեսակի կը բաժնուին սեռի և բնութեան խնդիր:

Սեռի խնդիր կ'ըսուի այն հայցական հոլովը՝ որ թէ՛ որոշեալ ըլլայ եւ թէ անորոշ՝ այսինքն թէ՛ զով եւ թէ առանց զ ի՝ տէր բայիին ըրածը կը ցուցնէ: Օր. Արդ կտրեա զդա, ընդէ՞ր և զերկիր խափանէ. հոս սեռի խնդիր են զդա եւ զերկիր բառերը, վասն զի այգեգործին կտրելիքը, եւ ծառոյն խափանածը գործողութեան առարկայ եղած են: իսկ բնութեան խնդիր ամէն հոլովով կըլլայ, որոնք գործողութեան մը պարագայներն կը ցուցնեն:

Թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից և ար-
կից աղբ, թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս
հատցես զդա ։ Ղուկ. ԺԳ. 6–10

2

## ՆԱԽԱՆՁ ՏԱՆ ՏԵԱՌՆ

Վաճառել, ծախել
Արջառ, եզն ու կով
Լումայափոխ, դրամ փոխող
Խարազան, գամչը

Հատավաճառ, լումայափոխ
Վաճառ, առուտուր
Տուն վաճառի, շուկայ
Աստի, ասկէ

Եւ եգիտ Յիսուս (1) 'ի տաճարին զի վաճառէին արջառս և ոչ-
խարս և աղաւնիս (2). և զլումայափոխսն՝ որ նստէին ։ Եւ արար
խարազան չուանեայ, և եհան զամենեսին 'ի տաճարէն, զոչ-
խարսն և զարջառս. և զպղինձս հատավաճառացն ցրուեաց (3) և զսե-
ղանսն կործանեաց. և որ (անոնք որ) զաղաւնիսն վաճա-
ռէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի (4), և մի առնէք զտուն
Հօր իմոյ տուն վաճառի ։ Ապա յիշեցին աշակերտքն նորա՝
թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս ։

Յովհ. Բ. 14–18

(1) Տես 7 էջ 1 կանոն ։ (2) Տես 7 էջ 2 կանոն ։

(3) Յատկացուցիչ կ'ըսուի այն սեռական հոլովը՝ որ գոյականի մը որո՛ւն ըլլալը կը ցուցնէ, եւ ընդհանրապէս անկէ ետեւ կը դրուի ։ Օր. Զպղինձս հատավաճառացն ցրուեաց ։ Որո՞ց պղինձները ցրուեց — հատավաճառներուն. ուստի հատավաճառացն յատկացուցիչ է, վասն զի պղինձներուն որո՛ւն ըլլալը ցուցուց ։ Յատկացուցիչին վերաբերող բառը յատկացեալ կը կոչուի, ուրեմն վերի խօսքին մէջ յատկացեալ է զպղինձս ։

(4) Աստի, այտի, անտի բառերը երբոր բայի կը վերաբերին մակբայ կ'ըլլան եւ կը նշանակեն ասկէ, ատկէ, անկէ ։ իսկ ածական են երբ եզակի կամ յոգնակի բացառական հոլովի մը հետ գործածուին՝ իբրեւ

Յայսմանէ կամ յայսցանէ (աստի)
Յայդմանէ կամ յայդցանէ (այտի)
Յայնմանէ կամ յայնցանէ (անտի)

## 3

### ԱՌԱՋԻՆՆ Ի ՊԱՏՈՒԻՐԱՆՍ

| | |
|---|---|
| 'Մատչիլ (մատուցեալ) մօտենալ | Լսել, մտիկ ընել |
| պէտր, [illegible] | Բարւոք, աղէկ |
| ու, ըսաւ | Ոչ գոյ, չկայ |

---

Մատուցեալ մի ոմն 'ի դպրաց՝ (1) լսէր Սադուկեցւոց մինչ իճէրինն. իբրեւ ետես թէ բարւոք ետ նոցա Յիսուս զպատասխանին, եհարց զնա եւ ասէ. Ո՞ր պատուիրան (2) է առաջին: Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին քան զամենայն (ամենէն առաջինը), ուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է. եւ սիրեսցես Տէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան: Եւ երկրորդն նման սմին (3). Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. Մեծ քան զսոսա այլ պատուիրան (4) ոչ գոյ:

Մարկ. ԺԲ. 28–32

---

(1) Թէ՝ որոշեալ եւ մէ անորոշ ածականներն ետեւնուն բացառական հոլով [illegible] կ'առնուն։

(2) Ո՞ր բառը երբ Յանկերէն ([illegible]) կը նշանակէ՝ անորոշ ածական մ'է, եւ պէտք չէ աշակերտը շփոթէ զայն ոչ յարաբերական դերանուան հետ։

(3) [illegible] կամ [illegible] բառերն են 1. [illegible] որ ամեն հոլովով խընդիր կրնան առնուլ. 2. [illegible] որ իրենց յատուկ եղած հոլովով խնդիր կ'առնուն. 3. [illegible] որոց առած սեռական խնդրոյն յատկացուցիչ կ'ըսենք։ 4. Ածականներ՝ որք իրենց նշանակութեան համեմատ խնդիր կը պահանջեն. Օր. նման սմին. հոս նման ածականը տրական հոլով առած է իր խնդիրն. վասն զի եթէ հարցնեմ — որո՞ւ նման. կը պատասխանեմ. ասոր նման (նման սմին), եւ իշտ որո՞ւ ([illegible]) հարցման պատասխանող հոլովն վերջահոլով տրական է։

(4) Այլ բառը եթէ [illegible] նշանակէ՝ շաղկապ է. իսկ եթէ [illegible] նշանակէ՝ ածական է։

## 4

### ԱՌ ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Տի, հասակ
Հանգոյն, նման
Առոյգ, կայտառ, կորէծ
Գարնային, գարնան
Վերակենցաղ, նորէն կեանք առ
Ամի ամի, տարուէ տարի
Չքնաղ, գեղեցիկ
Փախստեայ, փախչող, շուտ անց
Ոչ եւս դառնայ, ա՛լ չդառնար

---

Այո՛ հանգոյն
Առոյգդ հասակ
Է գարնայնոյն
Ո՛վ պատանեակ (1)․
Այլ նա ծնանի
Վերակենցաղ
Ամի ամի
Նոր և չքնաղ․
Իսկ փախըստեայ
Քոյդ մանկութիւն
Ոչ եւս դառնայ
Ի տես 'ի նոյն (2)։

---

(1) Կարդա այսպէս. Այո՛, ո՛վ պատանեակ, առոյգ հասակ քո հանգոյն գարնայնոյ ։ Վերի խօսքին մէջ հանգոյն ածականին գարնայնոյն վերջահոլով տրս խնդիրը՝ հեռու դրուած է։

(2) Ածականը երբեմն գոյականին նախդիրը իւր վրայ կ'առնու Թէ՛ յետս եւ Թէ նախադաս ըլլայ գոյականէն ։

5

## ՊԱՏԱՆԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՊԱՀ

| | |
|---|---|
| Յաւիտենական, [illegible] | Ի՞ւ իւիք, ինչ բանով |
| Ի մանկութենէ իմմէ, պզտիկ հա- | Ինչք, ընչից, ստացուածք |
| Զի՞, ինչո՞ւ [սակէս | Զկնի իմ, իմ ետեւէս |
| Տրտմեալ, ցաւած, տխուր | Բազում, շատ |

Եւ ահա մատուցեալ ոմն առ Յիսուս (1) ասէ. Վարդապետ բարի, զինչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս ։ Եւ նա ասէ ցնա. Զի՞ հարցանես զիս վասն բարւոյ, (2) Մի է բարի (3) եթէ կամիս 'ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա զպատուիրանսն ։ Ասէ ցնա. Զո՞րս (ո՞ր պատուիրանները) ։ Ասէ ցնա Յիսուս. Զմի սպանանիցես՝ և մի շնար, և մի գողանար, և մի սուտ վկայեր, պատուեա զհայր քո և զմայր, և սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո ։ Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն պահեցի 'ի մանկութենէ իմմէ, արդ զի՞նչ եւս պակաս (4) իցեմ ։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ ։ Իբրև լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս ։

Մատթ. ԺԹ. 16–23

(1) Նախդրիւ տրականի համար ։ Նախդրին տեղ — Նախդիրը կը դրուի երբ բառը շնչաւոր ըլլայ, ուստի չըսուիր մատուցեալ ոմն 'ի Յիսուս. այլ միայն կրնանք ըսել, մատուցեալ ոմն 'ի տեղւոջ, 'ի տաճար, եւ այլն. վասն զի տեղի եւ տաճար բառերն շնչաւոր չեն ։

(2) Զբարւոյ՝ բով առանց է ի բացառական մ'է՝ որ կը նշանակէ համար, վրայ, եւայլն.

(3) Ահաւասիկ նախադասութիւն մը՝ որ կը կազմուի էական բայէ մը, տէր բառէ մը եւ տէր բայիին ի՞նչ կամ ո՞վ ըլլալը ցուցնող ուղղական հոլով բառէ մը՝ որ ստորոգելի կ'ըսուի ։ Մի է բարի խօսքին մէջ ստորոգելին է Մի որ բարի տէր բայիին քանի՞ ըլլալը կը ցուցնէ ։ Եւ եթէ ըսեմ Գդ է Աստուած, ստորոգելին է Գդ որ Աստուած տէր բայիին ի՞նչ ըլլալը կը ցուցնէ ։

(4) Պակաս ածականը իւր խնդիրն գործիական հոլով առնլով եւս բային լրացեալ իմացուող եւս տէր բայիին ստորոգելին եղած է ։

6

## ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐ

*Ելանել* (նխդ. անց. ել), ելլալ
*Յաղօթս կալ*, աղօթք ընել
*Մաքսաւոր*, կիւմրիւկճի
*Մեկուսի*, մէկ կողմ
*Երկիցս*, երկու անգամ
*Տասանորդ*, օնտալըք
*Կամիմ*, կ'ուզեմ
*Ամբառնալ*, վերցնել
*Կոծել զկուրծս*, կուրծքը ծեծել
*Քաւել*, (մեղքը) ջնջել

---

*Արք երկու ելին 'ի տաճարն կալ յաղօթս*, մին փարիսեցի և միւսն մաքսաւոր (1)։ *Փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ*, գոհանամ զքէն (2), *զի ոչ եմ* իբրեւ զայլս 'ի մարդկանէ (3), *զյափշտակողս և զանիրաւս և զշունս, կամ իբրև զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչսն* ընդ երկինս (4) *ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր, և ասէր. Աստուած իմ, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա* (5)։

Ղուկաս ԺԸ. 9–14

---

(1) Այս խօսքին մէջ Եւ բայը լռելեայն կ'իմացուի։

(2) Գոհանամ զքէն (շնորհակալ եմ քեզ)։ Գոհանամ բայը իւր խնդիրը զով ա-ռանց է ի բացառական կը պահանջէ։

(3) Իբրեւ՝ Նախադրութիւն է երբ հայցական խնդիր առնու եւ նշանակէ պէս. Իբրեւ զայլս (ուրիշներու պէս). իսկ շաղկապ կամ մակբայ է Երբ նշանակած ատեն, եւ բայի քով կը դրուի։

(4) Ընդ Նախադրութիւնը անորոշ հայցական խնդրով ուղղութիւն կը նշանակէ. Ընդ երկինս ամբառնալ (դէպ 'ի յերկինս բարձրացնել)։

(5) Քան Նախադրութիւնը հայցական հոլով խնդիր կ'առնու եւ իրմէ առաջ կամ ետքը դրուած ածական բառի մը կը վերաբերի։ Օր. Էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա, խօսքին մէջ, քան զնա խնդիր է արդարացեալին (անկէ աւելի արդարացած)։

## 7

## ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՅՔ ԿՆՈՋՆ ԱՅՐՒՈՅ

| | |
|---|---|
| *Զիարդ*, ինչպէս | *Նաքարակիտ*, երկու լումայ արժող [դրամ |
| *Տառապեալ*, խեղճ | *Ամէն ասեմ*, ճշմարիտ կ'ըսեմ |
| *Արկանել պղինձ*, փարայ ձգել | *Չքաւորութիւն*, աղքատութիւն |
| *Մեծատուն*, հարուստ | *Գոյիւ չափ*, ունեցածը չունեցածը |
| *Բազում ինչ*, շատ բան | *Կեանք*, ինչք, ստացուածք |
| *Լումայ*, ստակ | |

*Կայր Յիսուս* ընդդէմ գանձանակին (1), *տեսանէր զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի և արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի։ Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ* շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի գանձանակն (2)։ *Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ, զամենայն ինչ՝ զոր ունէր, արկ* գոյիւ չափ (3) *զկեանս իւր։*

Մարկ. ԺԲ. 41–44

(1) Ընդդէմ նախադրութիւնն սեռական հոլովով կը պահանջէ իւր խնդիրը։

(2) Շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի գանձանակն։ Որ յարաբերական դերանունը հոս իրմէ յառաջ եկող զամենեսեանը կը յարաբերէ, եւ իւր այն յարաբերած բառը յարաբերեալ կը կոչուի։ Յարաբերեալը եթէ յոգնակի ըլլայ՝ յարաբերական դերանունն ալ յոգնակի կը դրուի։ Պէտք է գիտնալ նաեւ թէ՝ յարաբերական դերանուան եզակի ուղղականն ու հայցականը՝ իւր յոգնակի ուղղականին եւ հայցականին տեղ կրնայ գործածուիլ։

(3) Չափ նախադրութիւնն գործիական հոլով խնդիր կը պահանջէ եւ միշտ իւր խնդրէն վերջը կը դրուի։ Օր. Մահու չափ կռուեցաք (մեռնելու չափ կռիւ ըրինք)։

## 8

## ԳՈՀՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐՋ ՏԱՐՒՈՑ

Լրումն, լմնալը, վերջանալը
է, էք, էից, արարած
Պսակ, շըլլան (պսակ)
Տրիտուր, փոխարէն տրուած բան
Վսեմ, բարձր, շքեղ
Այժմ, հիմայ
Մինչ 'ի սպառ, մինչև վերջը, յաւիտեան

---

Դու, Տէր, դու զայս ամ (1)
Ի լրումն հասուցեր,
Ըզքէն գոհանամ
Աստուած իմ և Տէր:
Քեւ էից համայն
Պահպանին տեսակք (2),
Տարւոյ քաղցրութեան (3)
Քեւ օրհնի պըսակ:
Այլ նոցին (4) չետուր
Ճանաչել ըզքեզ,
Իսկ յինէն տրիտուր
Միայն սէր խընդրես:
Զըքնաղ և վըսեմ
Եւ ձրի տուրեւառ,
Ըզքեզ Տէր օրհնեմ
Այժմ և մինչ 'ի սպառ:

---

(1) Տես 10 էջ 2 կանոն:

(2) Տեսակք էից (արարածոց տեսակներն) Տես 8 էջ 3 կանոն:

(3) Երբեմն ածականը յատկացուցչի ձեւով՝ այսինքն սեռական հոլովով կը դրուի իր գոյականին քով, այսպէս Տարւոյ քաղցրութեան կը թարգմանուի (քաղցր տարւոյ):

(4) Հոս նոցին դերանունը էից բառին տեղ դրուած է՝ զայն նորէն չկրկնելու համար, վասն զի դերանուան պաշտօնն է ուրիշ բառի մը տեղ դրուիլ՝ զայն չը կրկնելու համար:

## 9

### ԲԺՇԿԵԼ Ի ՇԱԲԱԹՈՒ

| | |
|---|---|
| Անկեալ դնիլ, ինկած պառկիլ | Մահիճք, ճաց, անկողին |
| Ողջ լինել, առողջանալ | Յարեաւ (յառնել), ոտք ելլել |
| Ոչ զոք ունիմ, մէկը չունիմ | Շրջիլ, պտըտիլ |
| Յուզիլ, տակն ու վրայ ըլլալ | Խոյս տալ, փախչիլ |
| Դանդաղիլ, կամաց շարժիլ | Ամբոխ, բազմութիւն |

*Եւ էր անդ այր մի՝ որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում (որ երեսուն և ութ տարիէ հիւանդ էր)· զնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, և գիտաց թէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա (1)· կամիս ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն· Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն· և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս· Արի՛ առ զմահիճս քո և գնա։ Եւ ողջացաւ այրն· և յարեաւ, առ զմահիճս իւր և շրջէր· և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն հրեայքն ցբժշկեալն· Շաբաթ է, և ո՛չ արժան էր առնուլ քեզ զմահիճս քո (2)։ Պատասխանի ետ նոցա և ասէ· Որ բժշկեացն զիս (3), նա ասաց ցիս՝ առ զմահիճս քո և գնա։ Հարցին զնա և ասեն. Ո՞վ է այրն՝ որ*

---

(1) *Ասել, տալ, հարցանել* բայերն շատ անգամ *ց* նախդրով անորոշ հայցական հոլով եւ երբեմն վերջահոլով տրական *բնաբան խնդիր* կ'առնուն։

(2) Երբ երկու նախադասութիւն *և* կամ *ու* շաղկապով կապուած ըլլան, կըրնան այն շաղկապներն զանց առնուիլ, եւ երկրորդ նախադասութեան բայը *աներեւոյթի* փոխուիլ, եւ այն ատեն *տէր բային* տրական կը դրուի։ Օր. Ոչ էր արժան *առնուլ քեզ* զմահիճս քո, փոխանակ ըսելու՝ Ոչ էր արժան զի *առնուցես դու* զմահիճս քո։

(3) Երբ *որ* յարաբերական դերանունը խօսքի մը սկիզբը դրուի՝ ըռելեայն իր առջեւէն կ'ունենայ իւր յարաբերեալը, այսինքն այն՝ նա, կամ այնոքիկ՝ նոքա։ Այսպէս եզակի մէջ *ով որ*, *ան որ*, եւ յոգնակի մէջ *անոնք որ* կը թարգմանուի. Օր. Որ սիրէ զխրատ, ըսել է (այն՝ որ խրատը կը սիրէ). Որ գործեն զանօրէնութիւն (անոնք՝ որ անօրէնութիւն կը գործեն)։

*ասացին ցքեզ՝ առ զմահիճս քո և շրջեաց ։ Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ով իցէ, քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին (4) ի տեղւոջէ անտի ։* Յովհ · Ե · 5–14

10

## ԿՈՒՍԱՆՔՆ ԻՄԱՍՏՈՒՆՔ ԵՒ ՅԻՄԱՐՔ

| | |
|---|---|
| *Կուսան*, կոյս (աղջիկ) | *Եղեւ բարբառ*, ձայն լսուեցաւ |
| *Թառանալ*, առնել (հետը) | *Կազմել*, պատրաստել |
| *Յամել*, ուշանալ | *Շիջանիլ*, մարիլ |
| *Նիրհել*, մրափել | *Փակիլ*, գոցուիլ |
| *Ի քուն մտանել*, քնանալ | *Գիտել*, ճանչնալ |

*Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, Որոց* առեալ զլապտերս իւրեանց ելին (1) *ընդ առաջ փեսային և հարսին ։ Հինգն* 'ի նոցանէ յիմարք էին (2), *և հինգն՝ իմաստունք ։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ* ընդ իւրեանս (3) *ոչ բարձին ․ իսկ իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց ։ Եւ* 'ի յամել փեսային (4) *նիրհեցին ամենեքեան և 'ի քուն մտին ։ Եւ 'ի մէջ գիշերի եղև բարբառ ․ Ահա փեսայ գայ, ելէք* ընդ առաջ նորա (5) ։ *Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և*

---

(4) Վասն նախադրութիւնը սեռական խնդիր կառնու, եւ համար կը նշանակէ ։

(1) Երբ ւ շաղկապով կապուած երկու բայ մի եւ նոյն տէր բային ունենան, կրնայ ւ շաղկապը զանց առնուիլ, եւ առաջին բայը անցեալ դերբայի փոխուիլ. այն ատեն տէր բային կրնայ սեռականի դրուիլ. Օր․ Որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին. փոխանակ ըսելու, Որք առին զլապտերս իւրեանց ւ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին ։

(2) Տես 9 էջ 1 կանոն ․ — 11 էջ 5 կանոն ։

(3) Ընդ նախդիրը յոգնակիի մէջ անորոշ հայցականով հետ կը նշանակէ ։

(4) Ի յամել փեսային (փեսին ուշանալու ատենը) ։ Փեսային բառը թէ՛ իբրեւ յատկացուցիչ եւ թէ տէր բայի կրնայ ըլլալ 'ի յամել աներեւոյթին ։

(5) Ընդ առաջ նախադրութիւնը սեռական հոլով խնդիր կ'առնու եւ կը նշանակէ (դէպ 'ի մէկու մը առջեւ) ։

կազմեցին զլապտերս իւրեանց ։ Ասեն յիմարքն ցիմաստուն-սըն․ Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր ։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն․ Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական (6)․ այլ երթայք 'ի վաճառականս, և գնեսջիք ձեզ ։ Իբրև նոքա գնացին գնել, եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա (7) 'ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն ։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն․ Տէր Տէր, բաց մեզ ։ Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ ։ Մատթ․ ԻԵ․ 1–13

11

## ՄԻ՛ ԲԱՐՁԸՆՏԻՐ ԼԻՆԵԼ Ի ԿՈՉՈՒՆՍ

| | |
|---|---|
| Բարձընտիր լինել, առաջին տեղը [բռնել | Գուցէ, կըլլայ որ |
| Կոչնական, կոչուած հրաւիրեալ | Ունել, բռնել |
| Հայիլ, նայիլ | Ի վեր մատիր, վեր համբարձ՛ |
| Բազմիլ, նստիլ | Բարձակից, միեւնոյն սեղան նստող |
| | Բարձ, նստարան |

Ասաց Յիսուս և առ կոչնականսն առակ մի, հայեցեալ եթէ զիա՛րդ բարձընտիր լինէին (1)․ Ասէ ցնոսա․ Յորժամ կոչիցէ ոք (2) զքեզ 'ի հարսանիս կամ 'ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին

(6) Այս խօսքին մէջ լռելեայն կիմացուի դա դերանունը՝ իւղ բառին տեղ։ — Բաւական ածականը իւր խնդիրներն վերջահոլով տրական առած է, եւ ինքն ստորոգելի է դա լռելեայն իմացուող դերանուն տէր բայիին ։

(7) Ընդ նախադրութիւնը եզակիի մէջ վերջահոլով տրականով նմա կը նշանակէ․

(1) Բարձընտիր բառն հոս ստորոգելի կամ ուղղական խնդիր մ'է, վասն զի լը-ռելեայն իմացուող կոչնականք տէր բայիին ի՛նչ ըլլալը կը ցուցնէ․ (Տես 11 էջ 5 կանոն)։

(2) Ոք՝ որ անորոշ կամ միջակ ածական մ'է՝ իբրեւ գոյական գործածուած ըլ-լալով է տէր կոչիցէ բայիին․ Պէտք է գիտնալ որ ածական բառ մը առանձին գոր-ծածուած ատեն գոյականի զօրութիւն ունի, վասն զի իւր մէջ լռելեայն կը պահէ իրեն վերաբերող գոյականն ։

2

բարձին․ գուցէ (³) պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ 'ի նմանէ․ և եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց, ասիցէ ցքեզ՝ տուր սմա տեղի, և ապա սկսանիցես ամօթով ըզ յետին տեղին ունել։ Այլ յորժամ կոչիցես, երթիջիր բազմիջիր 'ի յետին տեղւոջ․ զի յորժամ գայցէ որ կոչեացն ըզ քեզ, ասիցէ ցքեզ․ բարեկամ 'ի վեր մատիր․ յայնժամ եղիցի քեզ փառք (պիտի փառաւորուիս) առաջի բարձակցացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

Ղուկ․ ԺԴ․ 7–11

12

## ՎԱՍՆ ԸՆՏՐԵԼՈՑ ԶՊՌՈՑՄԱՆ ԿԵՆԱՑ

Ռահ, ճանբայ
Ածել, տանել, բերել
Անմահ, որ չմեռնիր
Պայման, [illegible]

Անսասան, անխախտ
Լցցին (Լնուլ, կր․), կատարուէլ
Ցաւէտ, միշտ
Փրկաւէտ, [illegible]

Փրկիչ իմ Յիսուս,
Զիմ [illegible] ես
[illegible] (1),
Ընտրեւ ինձ [illegible] (2)
Որ ուղիղ 'ի կեանս

(³) Գուցէ մակբայ է երբ [illegible] նշանակէ, իսկ երբ նշանակէ [illegible] [illegible]

(²) փոխանակ ըսելու՝ [illegible] եւ այլն։ (Տես 15 էջ 2 կանոն)։

Ածէ զիս անմահ,
Եւ տուր 'ի կոչման
Յոր չեմն կոչէս,
Կուսին ծնողան (3),
Զի կրցելն յաւէտ
Ցիս յամենայնի
կամք քո փրրկաւէտ ։

~~~~~~~~~~

13

## ՏԱՂ ՋԿԱՑՍԵՐ՝ ԿԱՑՍԵՐ

| | |
|---|---|
| Առաքել, գրել | Ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ, |
| Որսալ դանել ... | [ ... |
| [ բռնել | Հարկ, ... ( ... ) |
| Նենգութիւն, խաբէութիւն | Դաշնական, ... |

Ո՞յր է, որո՞ն է

---

Եւ առաքեն առ Յիսուս զոմանս 'ի փարիսեցւոց անտի և 'ի Հերովդիանոսաց (1), զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին. Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ, զի ոչ հայիս յերեսս մարդկան (2), այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես (3). Արդ ասա մեզ, արժան է հարկ տալ կայսեր՝ թէ ոչ(4). տացո՞ւք թէ ոչ տացուք։ Եւ Յիսուս գի-

---

(³) Այսպէս կարդա՝ Եւ տուր ինձ կոչ ... 'ի կոչման ... ։ Տաղ բառը երբեմն աներեւութի քով դրուելով ... նշանակութիւնը կուտայ, ուստի այսպէս կը թարգմանուի վերոյգրեալ խօսքը. (Թող որ անխափան կենամ ես այն կոչման մէջ որում կը կանչես զիս)։

(¹) Տես 9 էջ 1 կանոն։

(²) Հայիլ բայը նախդրիւ տրական հոլով բնութեան խնդիր կ'առնու։

(³) Տես 8 էջ 3 կանոն։

(⁴) Պէտք է իմանալ թէ ... եւ այլն։
~~~~~~~~~~

տաց զկերծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա. Զի՞ (5) փորձէք զիս, կեղծաւորք, բերէք ինձ դահեկան մի զի տեսից։ Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս այս կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. Կայսեր (6)։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյ՝ Աստուծոյ։ Մարկ. ԺԲ. 13–17

14

## ՋՈՒՐՆ ԿԵՆԴԱՆԻ

| | |
|---|---|
| Վաստակեալ, յոգնած | Արդեօք, երանիցէ |
| Հանել ջուր, ջուր առնել, քաշել | Դոյլ, (գովա) |
| Գնել, ծախու առնել | Խաշն, խինք, ոչխար և այծ |
| Խառնակիլ, խառնուիլ | Միասանգամ, երկրորդ անգամ |

Գայ Յիսուս 'ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, մերձ 'ի գեօղն (1) զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յովսեփայ, և անդ էր աղբիւր մի Յակովբայ։ Եւ Յիսուս վաստակեալ 'ի ճանապարհէն՝ նստէր 'ի վերայ աղբերն, և էր ժամ իբրեւ վեցերորդ։ Գայ կին մի 'ի Սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել (Ջուր տո՛ւր ինձ)։ Զի աշակերտքն նորա երթեալ էին 'ի քաղաք անդր (2) զի կերա-

(5) Չէ բառը երբ Ինչու նշանակէ՝ որ ատեն պէտք է որ իր վրայ պարոյկ (°) նշանն ունենայ մակբայ է. Եթէ նշանակէ Ոչ է կամ Չէ շաղկապ է. իսկ եթէ նշանակէ Ինչպէս, ինչ որ անորոշ ածական է։

(6) Պէտք է յաւելուլ՝ Կայսեր է դրոշմս այս կամ գիր։ Այս տեսակ խօսից ձեւը զեղչում կ'ըսուի երբ մէկ կամ աւելի բառեր զեղչեալ ըլլան, այսինքն՝ լռելեայն եթէ իմացուին։

(1) Մերձ նախադրութիւնը նախդրիւ տրական խնդիր կ'առնու։

(2) Ինչպէս աստ, այդ, անդ բառերը բացառականի քով նոյնպէս եւ այսր, այդր, անդր ածական են նախդրիւ տրական բառի մը քով. այս, այդ, այն ցուցական դերանուանց նախդրիւ տրականին տեղ գործածուելով։

կուրս գնեացեն ։ Ասէ ցնա կինն Սամարացի․ Դու որ Հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես 'ի կնոջէ սամարացւոյ ։ Զի ոչ երբէք խառնակին Հրեայք ընդ սամարացիս ։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ․ Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, և ո՛վ է որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի ։ Ասէ ցնա կինն․ Տէր, դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս (3), և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի ունիցիս զջուրն կենդանի ։ Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, և ինքն աստի արբ՝ և որդիք նորա և խաշինք նորա (4) ։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ․ Ամենայն որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ, բայց որ ըմպէ 'ի ջրոյն զոր ես տաց նմա, մի ծարաւեսցէ յաւիտեան․ այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ 'ի կեանսն յաւիտենականս ։ Յովհ․ Դ․ 5–14

Օր. 'ի տեղւոջ անդր կ'ըսենք փոխանակ ըսելու՝ 'ի տեղւոջն յայն
'ի գեղջ այսր » » » 'ի գեղջս յայս
'ի տան այդր » » » 'ի տանդ յայդ

Իսկ առանձինն մակբայ են շարժում ցուցնող բայերու քով դրուելով, եւ կը նշանակեն հոս, հոդ, հոն ։

(3) Իսկ բառը շաղկապ է երբ բայց նշանակէ, մակբայ է երբ անգամ (պիլէ) նշանակէ ։ Օր․ Դոյլ իսկ ոչ ունիս, կը թարգմանուի, Դոյլ անգամ չունիս ։

(4) Երբ խօսքի մը մէջ տէրբային բաղադրեալ ըլլայ այսինքն մէկէն աւելի՝ այն ատեն բայը յոգնակի կը դրուի, բայց երբոր բաղադրեալ տէրբայիններէն առաջինն եզակի ըլլայ՝ բայը եզակի կը դրուի, միւս տէրբայիններուն առջեւ բայը չկրկնուիր այլ պահանջուած ժամանակովն ու թուովն լռելեայն կ'իմացուի, ուստի այս խօսքին մէջ․ ինքն աստի արբ՝ և որդիք նորա և խաշինք նորա, վերջի երկու տէրբայինները լռելեայն կը պահանջեն համաձայնութեան օրինօք իրենց բայը որ է արբին ։

## 15

## ՀԱՆԴԵՐՁ ՀԱՐՍԱՆԵԱՑ

| | |
|---|---|
| Զուարակք , եզներ | Թշնամանել , նախատել |
| Պարարակ , գէրուկ | Անցք , անցնելու տեղ , ճամբայ |
| Զենուլ , մորթել | Բազմական , նստող , հրաւիրեալ |
| Ցուլանալ , ծուլանալ | Ատամն , ակռայ |
| Ագարակ , արտ , ( չիֆթլիք ) | Կոչեցեալ , հրաւիրեալ |

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի որ արար հարսանիս որդւոյ իւրում: Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս (1), և ոչ կամեցան գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ . Ասացէք հրաւիրելոցն , ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի , զուարակք իմ և պարարակք զենեալ են , և ամենայն ինչ պատրաստ է (2) . եկայք 'ի հարսանիսս : Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր , և ոմն ի վաճառ իւր (3) , և այլք կալան զծառայս նորա՝ թշնամանեցին և սպանին : Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ , և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ , և զքաղաքն նոցա այրեաց : Յայնժամ ասէ ցծառայս իւր . Հարսանիքս պատրաստ են , և հրաւիրեալքն չէին արժանի : Արդ երթայք յանցս ճանապարհաց , և զորս միանգամ գտանիցէք կոչեցէք 'ի հարսանիսս : Եւ ելեալ ծառայքն 'ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զոր և գտին՝ զչարս և զբարիս , և լցան հարսանիքն բազմականօք : Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես այր մի՝ որոյ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց , և ասէ ցնա . Ընկեր , զիարդ մտեր այսր , զի

(1) Անցեալ դերբայներն երբեմն իբրեւ ածական գործածուելով՝ իրենց բային պահանջած խնդիրը կ'առնուն :

(2) Տես 11 էջ 3 կանոն :

(3) Հոս երկու ստորոգելիներուն առջեւ բայը որ է էր՝ զեղչեալ է : Օր . Ոմն էր՝ յագարակ իւր , և ոմն էր՝ ի վաճառ իւր :

ոչ ունէիր հանդերձ հարսանեաց · և նա պապանձեցաւ : Յայնժամ ասէ թագաւորն ցպասաւորսն . կապեցէք զոտս նորա և ձեռս (4) · և հանէք 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց : Զի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք ընտրեալք : Մատթ. ԻԲ. 2–14

## 16

### ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

| | |
|---|---|
| Գթած, մեղքցող, ողորմած | Նոյն, (մկ.) նոյնպէս |
| Կայք, կայարան, բնակարան | Ի բաց կացուցանել, մերժել, հեռի [ընել |
| Եթեր, երկինք | Մնայուն, մնացող |
| Երանաւետել, երջանիկ ընել | Յաւիտեան, յար |
| Տես, կերպարանք, փառաւորութիւն | Ստորինք, բնակիչ երկրի |
| Համայն, բոլոր | |

Ո՛ Հայր մեր գըթած,
Որ զկայս եթերաց
Երանաւետես
փառաց քոց 'ի տես (1) ·
Անուն քո լիցի
Սուրբ և պաշտելի,
Եւ ծանիցեն զայն
Տիեզերք համայն :
Զարքայութիւն քո
Մեզ երեւեցո՛,
Եւ աստուածային
Կամք քո եղիցին
Որպէս 'ի յերկինս
Նոյն և 'ի ստորինս,
Զհաց մեր առօրեայ
Եւ այսօր շնորհեա՛ :
Թո՛ղ ըզպարտիս մեր,
Որպէս և մեք, Տէ՛ր,
Տամք ամենեցուն
Պարտեաց թողութիւն :
Մի՛ ընկղմութեան մեր
Ի փորձանս տայր · (2)
Այլ կացո՛ 'ի բաց
Յամենայն չարեաց ·
Զի արքայութիւն
Քո միշտ է մնայուն ·
Քեզ փառք վայելեն
Յաւիտեանս ամէն :

(4) Տես 18 էջ 1 կանոն :
(1) Ի տեսիլ փառաց քոց . (քու փառքին տեսքովը) :
(2) Մի տայր ի փորձանս ընկղմութեան մեզ . (Մեր տկարութիւնը փորձանքի մի մատնիր)

17

## ՄԵԾԱՏՈՒՆՆ ՑՈՒՄԱՑԵԱԼ ՑԻՆՁՍ ԻՒՐ

| | |
|---|---|
| *Անդ (յգ.) անդաստան , հողեր* | *Բարութիւնք , ինչք , ստացուածք* |
| *Տոհմականք , արդիւնք , ցորեան* | *Անմիտ , անխելք* |
| *Խորհիլ , մտածել* | *Ո՞ւմ լինիցի , որո՞ւն պիտի ըլլայ* |
| *Շտեմարան , ամբար* | *Գանձել , ժողվել* |
| *Համբարել , դիզել* | *Մեծանալ , հարստանալ* |

---

*Առն ուրումն մեծատան ետուն անդք տոհմականս* (1) , *և խորհէր 'ի միտս իւր և ասէր . Զի՞ գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ ։ Եւ ասէ . գիտեմ զի՞նչ արարից , քակեցից զշտեմարանս իմ՝ և նոր մեծամեծս շինեցից* (2) *և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ , և ասացից ցանձն իմ , Անձն , ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց . հանգիր , կեր , արբ և ուրախ լեր ։ Ասէ ցնա Աստուած . Անմիտ , յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն . իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի ։ Նոյնպէս և որ գանձէ անձին , և ոչ յԱստուած մեծանայցէ ։*

*Ղուկ. ԺԲ.* 16–21

---

(1) *Շատ բառերու սեռականն ու տրականը միեւնոյն ձեւովն ըլլալով՝ պէտք չէ շփոթել զանոնք . Տրականը դիւրին կ'ըլլայ որոշել սեռականէն . եթէ որո՞ւ հարցման պատասխանէ եւ բայի վերաբերի այն հոլովը վերջահոլով տրական է ։ Օր . Անդաստաններն որո՞ւ տոհմական տուին . — Առն ուրումն մեծատան . ( մեծատուն մարդոյ մը ) ուստի առն բառը տրական է հոս եւ իր ուրումն ածականը փոխանակ ճիշդ տրական ըլլալով ումեք դրուելու՝ իր գոյականին ձեւովն վարուած է ։*

(2) *Հոս մեծամեծս բառը գոյականաբար գործածուած ածական մ'է . ( Տես 17 էջ 2 կանոն ) ։ Եւ իր մէջ լռելեայն կը պահէ շտեմարանս բառը , փոխանակ ըսելու , Եւ նոր մեծամեծ շտեմարանս շինեցից ։ ( Ալ աւելի մեծ շտեմարաններ պիտի շինեմ ) ։*

18

## ՏՐՏՈՒՆՋՔ ՄՇԱԿԱՑՆ

Ընդ առաւօտս, առտուան դէմ
Ի վարձու ունել, վարձքով բռնել
Արկանել վարձս, վարձք կտրել
Աւուրն դահեկան, օրուան համար [մէկ դրուշ
Դատարկ, պարապ
Հրապարակ, մէյտան տեղ
Գաւառապետ, (վէքիլ խարճ)

Ցեառինք, նոբէյիններն
Մէն մի դահեկան, մէյ մէկ դրուշ
Համարել, կարծել
Հասարակորդ առնել, հաւասար [բաժին հանել
Տօթ, տաքին փաթաղութիւն
Զրկել, իրաւունքը յափշտակել
Սակ արկանել, պազարլըխ ընել

---

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն՝ որ ել ընդ առաւօտս (1) 'ի վարձու ունել մշակս յայգի իւր. և արկ վարձս մշակացն աւուրն դահեկան, և առաքեաց ըզնոսա յայգի իւր: Եւ ելեալ զերրորդ ժամու՝ (2) ետես այլս զի կային դատարկք 'ի հրապարակս, ասէ և ցնոսա. Երթայք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ տաց ձեզ. գնացին և նոքա: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու, և զինն ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմետասաներորդ ժամու ելեալ, եգիտ այլս՝ զի կային դատարկք, ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք աստ զօր ցերեկ (3) դատարկք: Ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ զմեզ 'ի

---

(1) Ընդ նախադրութիւնը անորոշ հայցականով դէպ այս կամ այն կը ցուցնէ. Օր. Ընդ առաւօտս (առտուան դէմ). ընդ աւուրսն ընդ այնոսիկ (այն օրերուն մէջ):

(2) Զ նախդիրը գործիական հոլովով երբեմն անորոշ ժամանակ կը ցուցնէ. Օր. Զերրորդ ժամու, զվեց ժամու, զինն ժամու, զմետասաներորդ ժամու եւայլն (ժամը երեքին, վեցին, իննին, տասն եւ մէկին) եւայլն.

(3) Հայցական հոլովներ կան՝ որ չորս պարագայի մէջ բացարձակ ձեւեր կըլլան. 1. Ժամանակի տեւողութեան. 2. Չափոյ. 3. Գնոյ. 4. Ձեւ կամ ոճոյ ցուցնող հայցականներն: Օր. Ընդէ՞ր կայք աստ զօր ցերեկ դատարկք, հոս կայք բայը չէզոք ըլլալով արդէն հայցական խնդիր չառնուր, վասն զի չէզոք բային տէր բային ընելիք առարկայ մը չունենար. Ուստի զօր հայցական հոլով բնութեան խնդիր մ'է ժամանակի տեւողութեան ցուցնող:

վարձու. ասէ ցնոսա. Երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք։ Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. Կոչեա զմշակսն՝ և տուր նոցա վարձս, սկսեալ ՚ի յետնոցն մինչև ցառաջինսն։ Իբրև եկին որք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահեկան. Եկեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն. և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբրև առին՝ տրտնջէին զտանուտեառնէն (4) և ասէին. թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւասարս մեզ արարեր զդոսա (5), որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ։ Նա պատասխանի ետ միում ՚ի նոցանէ և ասէ. Ընկեր՝ չզրկեմ զքեզ. ոչ դահեկանի միոջ (6) սակ արկեր ընդ իս։ Առ զքոյդ և երթ։ Մատթ. ի. 1–14

19

## ՍԵՐՄԱՆԱՑԱՆՆ

| | |
|---|---|
| Սերմանացան, սերմ ցանող | Լսել, հասկնալ |
| Խռնել, բազմութեամբ ժողովուիլ | Հիւթ, [illegible] (հող) |
| Ունել զցամաք, եզերքը [illegible] | Ջեռնուլ, տաքնալ |
| Վարդապետութիւն, [illegible] | Հեղձուցանել, խեղդել |

Դարձեալ սկսաւ Յիսուս ուսուցանել առ ծովեզերբն (1)։ և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև ՚ի նաւ մտանել նմա և նստել (2) ՚ի ծովուն և ամենայն ժողովուրդն զծովեզերբն՝ զցամաքն ունէին. և ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ։

(4) Տրտնջել բայն ռով բացառական բնութեան խնդիր կ՚առնու։
(5) Տես 5 կանոն այն դասին մէջ։
(6) Գնելու, առնելու, վաճառելու եւ այլն բայերը [illegible] բնութեան խնդիր կառնուն։ Հոս [illegible] սեռական հոլով բնութեան խնդիր է [illegible] բային։
(1) Առ նախադրութիւնը գործիական խնդրով կը նշանակէ [illegible], [illegible] ՚ի մէջ, [illegible]։
(2) Տես 15 էջ 2 կանոն։

Եւ ասէր նոցա 'ի վարդապետութեան իւրում. Լուարո՛ւք, ա-
հաւասիկ ել սերմանող սերմանել. և եղև 'ի սերմանելն, ոմն
անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և եկեր զնա։
Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ոչ գոյր հող բազում, և
վաղվաղակի բուսաւ՝ քանզի ոչ գոյր հիւթ երկրին (3), և յորժամ
ծագեաց արև՝ ջեռաւ, և զի ոչ գոյին արմատք՝ ցամաքե-
ցաւ։ Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց։ ելին փուշքն և հեղ-
ձուցին զնա, և պտուղ ոչ ետ։ Եւ այլն անկաւ յերկիր
բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ
միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր (4)։ Եւ ասէր.
Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Մարկ. Դ. 1–6

~~~~~~~~~~~~

## 20

## ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՐԻՆ

| | |
|---|---|
| Օրըստօրէ, (ած.) ամենօրեայ | Ցանկ, միշտ |
| Ապաշնորհ, ապերախտ | Զարթնուլ, արթննալ |
| Զուարթուն, արթուն | Ցայգուն, առաւօտուան |

---

Երկրպագեմ քեզ և օրհնեմ զքեզ Տէր,
Որ զիս 'ի ժամ երեկոյիս հասուցեր,
Տալով այսօր զօրըստօրէն ինձ ըղձից (1),
Եւ փրկելով զիս յամենայն փորձանաց.
Որ և զանաշնորհս պարգևեցեր ինձ շնորհս (2),

---

(3) Էական բայը սեռական հոլով բնութեան խնդիր առնլով ունենալ կը նշա-
նակէ։ Ուստի Ոչ գոյր հիւթ երկրին կը թարգմանուի, երկիրը հիւթ չունէր։
(4) Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով փոխանակ, տեղ կը նշանակէ. Օր.
Եւ բերէր ընդ միոյ երեսուն եւ այլն. (Մէկին տեղ երեսուն հատ կուտար եւ այլն)։
(1) Տես 10 էջ 2 կանոն։
(2) Տես 18 էջ 1 կանոն։
~~~~~~~~~~~~

Առ փրկութեան հոգւոյ իմոյ կարեւոր (3)։
Քո է պարգեւ եթէ այսօր ինչ բարի
Գործով՝ բանիւ կամ խորհրդով արարի.
Իսկ եթէ չար, յինէն է այն, թո՛ղ ինձ Տէր,
Որ ապաշնորհն մեղօք առ քոյդ սիրոյ էի (4)։
Քեզ ըզմարմինս իմ յանձն առնեմ և զհոգիս,
Պահել ամբողջ յառաջիկայ գիշերիս։
Եւ դու զուարթուն հոգիդ որ կաս ցանկ առ իս,
Լեր պահապան ինձ 'ի հանդիստ գիշերիս.
Խաղաղութեամբ ննջել ինձ յայսմ և 'ի սոյն,
Եւ զարթուցեալ օրհնել ըզՏէր 'ի յայգուն։

21

## ՄՇԱԿՔ ԱՅԳՒՈՅՆ

| | |
|---|---|
| Էր , կար | Քարկոծել , քարով ծեծել |
| Տար , հեռու | Ասել ընդ միտս , ինքնիրեն ըսել |
| Մերձենալ , մօտենալ | Ժառանգութիւն , ժառանգ ինչը |

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի, և ետ զնա ցմշակս. և գնաց 'ի տար աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակացն (1) զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշ-

(3) Կարեւոր ածականն իւր փրկութեան գոյականէն հեռի դրուած է։

(4) Կարդա՛ այսպէս. Ես որ մեղօք ապաշնորհն սիրոյ առ էի ես (Ես որ իմ մեղքերովս քու սիրոյդ դէմ ապերախտ գտնուեցայ)։

(1) Տես 16 էջ 1 կանոն։

շակքն իբրեւ տեսին զորդին. ասեն ընդ միտս. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն։ Եւ հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին։ Արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա (2) (անոնց ինչ ընէ) տէր այգւոյն, ո՞չ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, և տայցէ զայգին այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս 'ի ժամու իւրեանց։ Մատթ. ԻԱ. 33–41

## 22

### ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Կրտսեր, փոքր
Յետ, ետքը
Կեալ, կեանք անցնել, ապրիլ
Անառակութեամբ, գէշ ընթացքով
Վատնել, հատցնել, ցրուել
Յարիլ, բարեկամ ըլլալ, մօտենալ
Գալ 'ի միտս, խելքը գլուխը գալ

Վարձկան, վարձով բանող մարդ
Հացալից, փորը կուշտ, հացով լի
Սովամահ կորնչիլ, անօթութենէ [մեռնիլ
Եղջիւր, (եղջ. պտուղը)
Անկանել զպարանոցաւ, գիրկը [պլլուիլ
Ոչ բազում, քիչ
Ագուցանել, հագցնել

Առն միոյ էին երկու որդիք (1)։ Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. Հայր տուր ինձ բաժին՝ որ անկանի յընչիցդ. և նա բաժանեաց նոցա զկեանսն։ Յետ ոչ բազում աւուրց (2) ժողովեալ զամենայն կրտսերոյն. գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։ Իբրև ըսպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ և սկսաւ ինքն չքաւորել։ Գնացեալ յարեցաւ 'ի մի ոմն քաղաքացւոց (3) աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ

(2) Առնել բայը ընդ նախդրով հայցական խնդիր առնլով ինչպէս կը տեսնուի այս օրինակէն՝ իբր առնել ընդ, ինչ կ'ընէ, բան կ'ընէ, կը նշանակէ։

(1) Տես 27 էջ 5 կանոն։

(2) Յետ նախադրութիւնը սեռական հոլով խնդիր կ'առնու։

(3) Թուական ածականք իրենց ետեւէն առած բացառական խնդրոյն տեղ երբեմըն սեռական ալ կառնուն։ Օր. Մի ոմն 'ի քաղաքացւոց՝ ըսելու տեղ կրնանք ըսել մի ոմն քաղաքացւոց. 'ի միում յաւուրց ըսելու տեղ կրնանք ըսել 'ի միում աւուրց։

իւր՝ արածել խոզս։ Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն՝ զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։ Եւ եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. Քանի՜ վարձկանք իցեն 'ի տան հօր իմոյ հացալիցք (4), և ես աստ սովամահ կորնչիմ։ Յարուցեալ գնացից (5) առ հայր իմ։ Եւ ասացից ցնա, Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրեւ զմի 'ի վարձկանաց քոց։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։ Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա և համբուրեաց զնա։ Ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո (6)։ Ասէ հայրն ցծառայսն իւր, վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա. և ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։

Ղուկաս ԺԵ. 11–24

23

## ՋՂՋՈՒՄՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

| | |
|---|---|
| Ձիր, պարգեւ | Զղջանալ, խելքենալ |
| Հետեւիլ, երթալ | Գգուանք, փայփայելը, շոյելը |
| Ուղի, ճանբայ | Գանակոծ առնել, ծեծել |
| Յարդ, մինչեւ հիմայ | Շատ է, բաւական է |
| Տարագիր, հեռու ճամբած (աքսորուած) | Մերժել յերեսաց, երեսէ ձգել |

(4) Հացալից բառն թէ՛ իբրեւ ածական եւ թէ՛ իբրեւ ստորոգելի հեռացած է իրեն վերաբերող վարձկանք գոյականէն։

(5) Անցեալ դերբայներն ընդհանրապէս կը կապուին իրենցմէ վերջը եկող դիմաւոր բային հետ։

(6) Անուանել, կոչել, առնել, դնել, կարգել, կացուցանել եւ ուրիշ ներգործական բայերու սեռի խնդիրներն իրենց ստորոգելին անորոշ հայցական հոլովով կ'առնուն, թուով իրարու համաձայնելով։

Հա՛յր, ես որդի քոյին եմ այն,
Որ ըղձ[illegible] քոց վատնեալ չէր (1)
Եւ ընդ [illegible] հետեւեալ [illegible] (2),
Կեցի 'ի քէն ցարդ տարագիր:
Այլ դդատապացեալ արդ վերըստին,
Դառնամ առ քեզ հայրըդ գըթած,
Ընկալ զիս մի ՚ընդ որդիս քոյին,
Այլ երբ ըղձէ 'ի վարձկանաց:
Զեմ արժանի քոց գըրդուանաց.
Հա՛յր զիս, արա զիս դանակոծ,
Ցաւ է զի մի՛ 'ի սպառ 'ի բաց
Զիս մերժեսցես յերեսաց քոց:

## 24

### ՍԱՄԱՐԱՑԻՆ

| | |
|---|---|
| Ակէս 'ի վեբալ գնել, [illegible] | Գրաստ, [illegible] |
| Կիսամահ, [illegible] | Պանդոկի, [illegible] |
| Դէպ լինել, [illegible] | Դարմանել, [illegible] |
| Ջանց առնել, [illegible] | Ծախել, [illegible] |
| Արկանել, [illegible], [illegible] | Հատուցանել, [illegible] |

Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա, և վէրս 'ի վերայ (1) եդին, թողին կիսամահ և գնացին: Դէպ եղեւ [illegible]

~~[illegible] (2)~~

(1) Այսպէս կարդա'. Որ [illegible] քոց: (Տես 18 էջ 1 կանոն):

(2) Ընդ Նախադրութիւնք երբեմն անորոշ հայցականով [illegible] կը նշանակէ, եւ աշխարհաբառի մէջ բացառականով կը թարգմանուի. Օր. Հետեւիլ ընդ ուղին լայն. (լայն ճանբէն երթալ):

(1) Նախադրութիւններէն ոմանք եթէ խնդիր չունենան՝ [illegible] են:

իջանէր (2) ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա զանց արար։ Նոյնպէս և Ղևտացի մի եկեալ ընդ նոյն տեղի (3), ետես և զանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա՝ գթացաւ. և մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ 'ի վերայ ձէթ և գինի, և եդեալ 'ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա 'ի պանդոկի մի (4), և դարմանեաց զնա։ Եւ 'ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ. Դարման տար դմա, և զոր ինչ ծախեսցես 'ի դա՝ 'ի միւսանգամ դառնալն իմում հատուցից քեզ։ Ղուկաս Ժ. 30–36

~~~~~~~~~~

## 25

### ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

| | |
|---|---|
| Յայլակերպս լինել, կերպարանափոխել | Զարհուրիլ, սաստիկ վախնալ |
| Ձորձ, լաթ | Հովանի, շուք |
| Թափիչ, լաթ լուացող | Ձայն եղեւ, ձայն լսուեցաւ, եկաւ |
| Ռաբբի, վարդապետ | Այսր անդր, աստին անդին |
| | Առնել, ընել |

---

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր (1) զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղև առաջի նոցա. և ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ

---

(2) փոխանակ ըսելու՝ Դէպ եղեւ զի քահանայ մի եւ այլն. (Տես 15 էջ 2 կանոն)։

(3) Տես 31 էջ 2 կանոն.

(4) Բառեր կան որոց ուղղականն թէ ի ով եւ թէ առանց ի ի կը գրուի. Օր. պանդոկ կամ պանդոկի, տամալ կամ տամալի (տանիք), ծոն կամ ծոնի (նուէր), լորամարգ կամ լորամարգի (պըլտըրճին) եւ այլն. Ուստի պէտք չէ շփոթիլ հոս շարժում ցուցնող բայի քով 'ի ով վերջացողով տրական տեսնել կարծելով.

(1) 17 էջ 7 կանոն.
~~~~~~~~~~

կարեն առնել (2) սպիտակացուցանել։ Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս․ Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի (3)։ Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին։ Եւ եղեւ ամպ մի հովանի 'ի վերայ նոցա, ձայն եղեւ յամպոյ անտի՝ և ասէ․ Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք։ Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր, ոչ ևս զոք ուրեք տեսին բայց միայն զՅիսուս (4) ընդ իւրեանս։

Մարկ. Թ. 1–7

## 26

### ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆՍ ԸՆԴ ԴԱՐՁ ՄԻՈՅ ՄԵՂԱՒՈՐԻ

| | |
|---|---|
| Խնդալ, ուրախանալ | Ածել աւել, աւլել |
| Ապաշխարել, վերջը լալ, զղջալ | Ստէպ, շատ անգամ |
| Պիտոյ է, պէտք է | Լուցանել ճրագ, մոմ վառել |

Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար (1), և կորուսանիցէ զմի 'ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն և զինն

(2) Առնել բառը աւելորդաբանութիւն մ'է, այսինքն զարդու կամ զօրութեան համար դրուած է, վասն զի կարեն ը բաւական է խօսքին իմաստը տալու։

(3) Արասցուք երիս տաղաւարս (երեք բնակարան շինենք), մի քեզ, մի Մովսեսի եւ այլն՝ (մէկ հատ մը քեզի, մէկ հատ մը Մովսիսին եւ այլն), Այս խօսքին մէջ զեղչում մը կայ, պէտք էր ըսել Մի քեզ արասցուք, մի Մովսեսի արասցուք, եւ այլն։ Մի ածականը լռելեայն իմացուող տաղաւար գոյականին տեղ դրուած ըլլալով անուն եղեր է։

(4) Բայց միայն զՅիսուս լռելեայն իմացուող բայն է տեսին։

(1) Տես 27 էջ 3 կանոն։

յանապատի, եւ երթիցէ զհետ կորուսելոյն՝ (2) մինչեւ գտանիցէ զնա։ Եւ իբրեւ գտանէ՝ դնէ զնա ՚ի վերայ ուսոց իւրոց խնդալով, եւ երթայ ՚ի տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ (3) կորուսեալ։ Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն եւ ինն արդարոց՝ (4) որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն։ Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն, եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, եւ ածիցէ աւել ՚ի տան, եւ խնդրիցէ ստէպ՝ մինչեւ գտանիցէ, եւ իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս եւ զդրացիս, եւ ասէ. Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի։ Այսպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ՚ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։

Ղուկ. ԺԵ. 4–10

## 27

### ՎԱԽՃԱՆ ԱՄՊԱՐՇՏԱՑ

Ուղեկից, ընկեր ճամբորդող
Ժանտ, չար, [illegible],
Հաճ եւ գոհ, ախորժած ու գոհ
Ի բուն (մկ.), ամբողջ
Անդուլ, անդադար
Նորաբողբոջ, նոր ծլած
Առու, վազող ջուր
Խոխոջ, ջրի ձայն
Մշտասաղարթ, միշտ տերեւ ունեցող
Պճնիլ, զարդարուիլ
Հողմավար, հովէն քշուած
Հոսիլ, վազիլ, քշուիլ
Յար, միշտ
Հանդէս, ժողով

(2) Զհետ նախադրութիւնն սեռական խնդիր կ'առնու։ Օր. զհետ կորուսելոյն (կորսուածին ետեւէն)։

(3) Ոչխարս բառին « ս » գիրը յոգնակիի նշան չէ. վասն զի երբեմն՝ ինչպէս աշխարհաբարի անանկ ալ գրաբարի մէջ « ս » գիրը ն ի տեղ կրնայ գործածուիլ։ Հոս « ս » գիրը իբրեւ « ս » ցուցական ածականի տեղ ալ կրնայ առնուիլ։

(4) Թուական որոշեալ ածականներու հետ գործածուած գոյականները թէ՛ եզակի եւ թէ յոգնակի կրնան դրուիլ։

Երանեալ այր (1) որ ոչ գընաց
Ի ճանապարհս ամպարըշտաց .
Զեղեւ [illegible] նա [illegible] (2) ,
Եւ ոչ յաթոռս նըստաւ ժանտից :
Այլ 'ի հրամանս աստուածատուր
Հաճ են և գոհ միտք և կամք իւր .
Եւ [illegible] և [illegible] (3) 'ի բուն
Խորհի անդուլ յօրէնս 'ի նոյն :
Զի որպէս ծառ (4) նորաբողբոջ
Տընկեալ զառուխ ջուրցն 'ի խոխոջ ,
Տացէ ըզմիրգ իւր 'ի ժամու
Մըշտադալարթ պըճնեալ զարդու .
Եւ զամենայն գործըս նորա
Յաջողեսցեն երկինք նըմա :
Ոչ այսպէս ո՜չ է ամպարիշտ ,
Այլ երերեալ 'ի յերկրի միշտ ,
Որպէս փոշի զի հողմավար
Այր անդր հոսեալ հալածի յար :
Վասն այսորիկ 'ի յահաւոր
Դատաստանին մեծ աւուր (5) ,
Մի յարիցէ զըւարթերես
Ընդ արդարոց [illegible] ընդ հանդէս (6) ,
Զի Տէր ծանեաւ զարդարոյն ուահ ,
Զարացն ուղիք ածցեն 'ի մահ :

---

(1) Է բայը զեղչեալ է :

(2) Տես 9 էջ 5 կանոն [illegible] բառից մէջ ածականը : Օր. [illegible] , հոս [illegible] խնդիր է [illegible] ածականին :

(3) Տես 25 էջ 5 կանոն : [illegible] ցուցնող հայցական :

(4) Որպէս նախադրութիւնն հայցական հոլով խնդիր կ'առնու :

(5) Այս խօսքին մէջ 'ի յահաւոր ածականին կրած կրկին նախդիրներն աւուր բառին կը վերաբերին . ուստի պէտք է կարդալ 'ի մեծ աւուր ահաւոր դատաստանին ( սարսափելի դատաստանին մեծ օրուան մէջ : )

(6) Հոս յատկացուցիչը՝ ինչպէս պատահեցանք (Տես 18 էջ 1 կանոն ), յատկացեալէն առաջ դրուելով՝ անոր նախդիրն իւր վրայ ալ առած է . պէտք է պարզապէս գրել . Մի' [illegible] ընդ հանդէս արդարոց ( արդարոց ժողովքին հետ զուարթերես չպիտի ելնէ չար մարդը ) :

## 28

### ՄԵԾԱՏՈՒՆՆ ԱՆՈՂՈՐՄ

Բեհեզ, բարակ ճերմակ կտաւ
Ծիրանի, թագաւորական զգեստ (ծի-
[ծիրանի կարմիր ներկուած)
Ցանկալ, փափաքիլ
Լիզուլ, լզել
Ի հեռաստանէ (մկ), հեռուէն
Գոգ, ծոց, գիրկ
Թանալ, թրջել
Ծագ մատին, մատի ծայր
Պապակիլ, խիստ ծարաւիլ
Տապ, տաքութիւն (հերոտեր)
Անդէն, հոն տեղ
Բարիք, հանգստութիւն

---

Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս: Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս (Ղազարոս անուամբ աղքատ մը) անկեալ դնէր առ դրան (1) նորա վիրաւորեալ, և ցանկայր լնուլ զորովայն իւր 'ի փշրանացն՝ որ անկանէին 'ի սեղանոյ մեծատան, այլ և շունք եւս գային և լիզուին զվէրս նորա: Եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակաց (2) զնա 'ի գոգն Աբրահամու, մեռաւ և մեծատունն և թաղեցաւ, և 'ի դժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր, ետես զԱբրահամ 'ի հեռաստանէ, և զՂազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ: Եւ նա աղաղակեաց և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, և առաքեա զՂազարոս զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր. և զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ 'ի տապոյ աստի: Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ, յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո 'ի կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս (3), արդ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս:

Ղուկաս ԺԶ· 19–25

---

(1) Ա- նախադրութիւնը վերջաձողով տրականով առ կը նշանակէ. Օր. — առ դրան (դրանը քով). — առ նմա (անոր քով) իբր (տունը):
(2) Տես 15 էջ 2 կանոն:
(3) Ջեզչում մը կայ բայի՝ որ է ընկալաւ (ընդունեց):

## 29

### ԸՆԹՐԻՔ ԲԱՂՏԱՍԱՐԱՅ

| | |
|---|---|
| Ընթրիս առնել, երեկոյեան ճաշ տալ | Յօդ, անդամ |
| Մեծամեծք, իշխանք, նախարարք | Լուծանել, քակուիլ |
| Ընդ գինիս մտանել, գինովնալ | Բաբախել, զարնել (սիրտը հոյն) |
| Սպաս, կահ, գործիք | Մեկնել, բացատրել |
| Բռեալ, ծեփուած | Բարձրանալ, հպարտանալ |
| Որմ, պատ | Վախճանել, վերջացնել |

---

Բաղտասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց հազար առն (1) ։ Եւ իբրեւ ընդ գինիս եմուտ, հրամայեաց բերել զսպասս արծաթոյ և ոսկւոյ, զոր եհան Նաբուքոդոնոսոր հայր նորա (2) 'ի տաճարէն՝ որ յԵրուսաղէմ ։ Բերէին, և ըմպէին նոքօք թագաւորն և մեծամեծք իւր. ըմպէին գինի և օրհնէին զաստուածս ոսկեղէնս և արծաթեղէնս և պղնձիս և երկաթիս (3), և զԱստուածն յաւիտենից ոչ օրհնեցին ։ Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ, և գրէին 'ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին, և թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն՝ որ գրէր ։ Յայնժամ հատան գոյնք թագաւորին (թագաւորին գոյնը նետաց) և յօդք միջոյ նորա լուծանէին, և ծունկք նորա զմիմեանս բաբախէին ։ Աղաղակեաց և ասէ. Որ ոք ընթերցցի զգիրդ զայդ և զմեկնութիւն դորա ցուցանէ ինձ, ծիրանիս զգեցցի և երրորդ 'ի թագաւորութեան իմում տիրեսցէ (և թագաւորութեանս մէջ երրորդ տիրող պիտի ըլլայ) ։ Մտանէին ամենայն իմաստունք Բաբելացւոց, և ոչ կարէին զգիրն ընթեռնուլ, և ոչ (4) զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին ։ Յայն-

---

(1) Տես 54 էջ 4 կանոն ։

(2) Բացայայտիչ կը կոչուին այն բառերը՝ որ ուրիշ բառի մը քով դրուելով՝ անոր հետ միեւնոյն բանը կը նշանակեն. բայց աւելի որոշ կերպով կը յայտնեն զայն ։ Ըստի Նաբուքոդոնոսոր հայր նորա ըսած ատենս, բացայայտիչ է հայր նորա, վասն զի Նաբուգոդոնոսորին ո՞վ ըլլալը կ'իմացնէ ։

(3) Այս ածականներն իրենց մէջ լռելեայն կը պահեն աստուածս գոյականը ։

(4) Ոչ մակբային քով զեղչուած բայն է՝ կարէին ։

ժամ ամին 'ի ներքս զԴանիէլ · և ասէ թագաւորն ցԴանիէլ· Ես լուայ զքէն թէ կարող ես մեկնել մեկնութիւնս · և արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ և զմեկնութիւն դորա ցուցանել ինձ , ծիրանիս զգեցցիս և երրորդ 'ի թագաւորութեան իմում տիրեսցես ։ Ասէ Դանիէլ· Արքայ , Աստուած բարձրեալ զմեծութիւն և զթագաւորութիւն և զպատիւ և զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում, և յորժամ բարձրացաւ սիրտ նորա , անկաւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ , մինչեւ ծանեաւ թէ տիրէ բարձրեալն թագաւորութեան մարդկան ։ Եւ դու , որդի նորա Բաղդասար (5) , ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ ։ Վասն այսորիկ յերեսաց նորա ( անոր կողմէն ) առաքեցաւ թաթ ձեռինն , և զգիրդ զայդ գրեաց ։ Եւ այս ինչ է գիրդ՝ որ գրեալ է · Մանէ , Թեկէլ, Փարէս ։ Մանէ , չափեաց Աստուած զթագաւորութիւն քո և վախճանեաց զնա · Թեկէլ, կշռեցաւ 'ի կշիռս և գտաւ պակասեալ· Փարէս , բաժանեցաւ թագաւորութիւն քո և տուաւ Մարաց և Պարսից ։ Եւ 'ի նմին գիշերի սպանաւ Բաղդասար արքայ Քաղդէացւոց , և Դարեհ արքայ առ ըղթագաւորութիւնն , որ էր ամաց վաթսուն և երկուց (6) ։

Դանիէլ Ե·

---

## 30

### ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ ՏՈՎԲԻԹԱՅ

| | |
|---|---|
| Քաղցեալ, անօթի | Թափել, լցնել, փրթել |
| Ընկենուլ, նետել, ձգել | Այպն առնել, ծաղր ընել |
| Մնալ, սպասել | Առաստաղ, տան ծածկը |
| Առնել ճաշ, ճաշ տալ (կոչունք մը) | Ծրտել, աղբ ձգել (թռչնոց) |
| Ճնճղուկ , ճնճղուն մը (սերչէ) | Ջերմաջերմ, տաք տաք |

---

(5) Տես 2 կանոն սոյն դասին մէջ ։

(6) Տարիք ցուցնող բառերը սեռական հոլով բնութեան խնդիր կ'ըլլան ։ Հոս ամաց բնութեան խնդիր է էր բային ։ Որ էր , ամաց վաթսուն եւ երկուց ( որ վաթսուն երկու տարու էր ) ։

Ե‥ Տ‥–ֆէՐ (1) ողորմութիւնս բազումս արարի եղբարց իմոց՝ որ ընդ իմն էին՝ 'ի Նինուէ ։ Զհաց իմ տայի քաղցելոց , և զձորձ իմ՝ մերկոց ։ Եւ զոր (զով որ) տեսանէի ես յազգէն իմմէ թէ մեռեալ էր , և ընկենուին ըղնաս արպատոյ պարսպէն (2) , ես թաղէի ։ Եւ կամ թէ յորժամ ըսպանանէր զոք Սենեքերիմ արքայ գողտնայի և թաղէի ։ Եւ 'ի տօնին մեծի արարին ինձ ճաշ մեծ , և բազմեցայ ուտել և ըմպել ։ Ասեմ ես ցորդին իմ․ Երթ ած դու քեզ յեղբարցն մերոց աղքատաց՝ զորս և գտանես , և ես մնամ քեզ։ Եկն և ասէ․ Հա՛յր , մի ոմն յազգէս մերմէ՝ օրայ Ըաֆեռալեն օփէ Նօրա , (3) կայ 'ի հրապարակի անդ մեռեալ ։ Եւ ես մնոյլե էր ճալակեալ՝ (4) չոգայ առի զնա և բերի 'ի տուն իմ մինչեւ եմուտ արեգակն , փորեցի և թաղեցի զնա ։ Եւ մերձաւորքն իմ այպն առնէին և ասէին․ Արդ օ՞ղեաւ Եըկնլէ (ալ չը՞ վախնար) մեռանել վասն իրացս այսոցիկ (այս բաներուն համար)․ զի վասն որոյ հալածեցաւն (ինչ բանի համար որ հալածուեցաւ), դարձեալ եկեալ թաղէ զդիակունս ։ Ի նմին գիշերի դարձայ՝ իբրեւ թաղեցին , և ննջեցի ես պղծեալ աւ օրմոյ (5) զ-աւթին և զերեսս իմ ոչ ծածկեցի ։ Ոչ գիտէի թէ ճնճղուկք նստէին յաւաստալս անդ , և աչօք բացօք (բաց աչքերով) 'ի վեր հայէի , և ծրտէին ձագքն ջերմաջերմ յաչս իմ։ Եւ երթեալ իմ առ բժիշկս , ոչինչ օգնէին ինձ ։

Տ‥ՀֆէՐ Ա–Բ

---

(1) Տ‥–ֆէՐ բացայայտիչն է Ի‥ ին ։ (Տես 37 էջ 2 կանոն ։ )

(2) Արպատոյ նախադրութիւնն սեռական խնդիր կ'առնու ։

(3) Այս խօսքին մէջ Նօրա աւելադրութիւն է , օրայ յարաբերական դերանուան տեղ կրկնուած իբրեւ զարդ . օրայ Ըաֆեռալեն օփէ Նօրա , կը թարգմանուի , որոյ ոտքերն փրթած են ։

(4) Ինչպէս անցեալ դերբայներու՝ նոյնպէս եւ բայի մը յարակատար , գերակատար եւ ստորադասական անցեալ ժամանակաց եզակի Գ. դէմքին քով տէր բային սեռական կը դրուի ։

(5) Տես 36 էջ 1 կանոն ։

31

# ԽՐԳ

## Ի ՆԱԽԸՆԾԱՑ ԱՐՏԱՍՈՒՍ ՑԻՍՈՒՍԻ ՄԱՆԿԱՆՆ

Նախընծայ, առաջ ընծայած՝ տուած
Արփիագեղ, արեւու պէս գեղեցիկ
Ցոլանալ, փայլիլ ցոլքել (լոյսի պէս)
Շիթ, կաթիլ
Վերասլանալ, վեր թռչիլ
Սերաբիփն, սերովբէ
Երկնաբնակ, երկնքի մէջ բնակող
Մըթագնիլ, մթննալ
Ջօնել, նուիրել
Փրկանակ, փրկութեան գործի՝ [պատճառ
Քաւութիւն, մեղաց թողութիւն

---

Արտասուէ Ցիսուս
Մայրենին է ծոց (1),
Մըթագնի զըւարթ
Երեսաց իւրոց
Արփիագեղ լոյս,
Ցոլացեալ յերկնէ
Սերաբիփն հրեշտակ,
Զարտասուաց նորա
Յոսկեղէն բաժակ
Ըզշիթս ամփոփէ (2),
Եւ վերասլացեալ
Նուիրէ Հօր զայն,
Արդ սովաւ, ասէ,
Լիցի փրկութեան
Մահացուաց յաւուր (3):
Իսկ Հայրն երկնաբնակ (4).
Քաւէր արդեօք դա,
Այլ որդեակն իմ ինձ
Զարիւն իւր ցանկայ
Ջօնել փրկանակ:

---

(1) Ի ծոց մայրենի (մօրենական ծոցին մէջ):
(2) Այսպէս շարադրելով կարդա՛. Ամփոփէ զշիթս արտասուաց նորա յոսկեղէն բաժակ կամ յոսկեղէն բաժակի:
(3) Այսպէս կարդա՛, Մահացուաց մէջ յաւուր փրկութեան կամ քաւութեան յաւուրցն մահացուաց (մարդկանց):
(4) Զեղչուած է ասէ, կամ պատասխանէ եւ բայը:

## 32

## ՍՈՂՈՄՈՆ ԽՆԴՐԷ ՑԱՍՏՈՒԾՈՅ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| *Փոխանակ, տեղը* | *Բան, բան (չէ)* |
| *Խելամուտ լինել, խելք հասցնել* | *Փոխանակ զի, որովհետեւ* |
| *Հաճոյ թուել, աղէկ երեւնալ* | *Յետ քո, քու ետեւէդ* |

---

*Երեւեցաւ Տէր Սողոմոնի 'ի քուն գիշերոյ, և ասէ. Խնդրեա դու քեզ խնդիր ինչ։ Եւ ասէ Սողոմոն. Տէր Աստուած իմ, դու ետուր զծառայ քո փոխանակ Դաւթի հօր իմոյ (1). և ես եմ մանուկ փոքր։ Տացես ծառայի քում սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել 'ի մէջ բարւոյ և չարի։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն զայն բան։ Եւ ասէ ցնա Տէր. փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ, և ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, և ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն, և ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց. ահա ետու քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ, իբրեւ զքեզ ոչ ոք եղեւ յառաջ քան զքեզ (քենէ առաջ), և յետ քո ոչ ոք յարիցէ նմանող քեզ։ Եւ զոր ոչն եւս խնդրեցեր՝ եւ տաց քեզ, զմեծութիւն և զփառս (2)։* Գ. Թագ. Գ. 5–13

---

(1) «Փոխանակ» նախադրութիւնն սեռական խնդիր կ'առնու։ «Փոխանակ Դաւթի հօր իմոյ» (իմ Դաւիթ հօրս տեղ). Այս խօսքին մէջ պէտք է նաեւ որոշէ աշակերտը բացայայտիչն ու բացայայտեալը։

(2) Յարաբերականը շատ անգամ յարաբերեալէն առաջ ալ կրնայ դրուիլ։ Այս խօսքին մէջ «զոր» յարաբերական դերանունը իւր յարաբերեալներէն՝ այսինքն «զմեծութիւն և զփառս»էն առաջ դրուած է։ Պարզ կերպով պէտք էր ըսել. Եւ տաց քեզ զմեծութիւն և զփառս՝ զոր ոչն եւս խնդրեցեր։

33

## ԳՈՒԹ ՄԱՅՐԵՆԻ

| | |
|---|---|
| Յէս (մկ.), կ'աղաչեմ | Ստնդիաց, կաթն ստող |
| Ի հասարակ գիշերի, կէս գիշերուան | Կտրել յերկուս, երկուքի կտրել |
| Դիեցուցանել, կաթով սնուցանել | Աղիք, (պատղըրտաք) երբեմն |
| Այգուն, առտուան կանուխ | Առնուլ, բերել [իբր գութ |

Երեւեցան երկու կանայք Սողոմոնի (1), և ասէ մի կինն․ Յէս, Տէր իմ, ես և կինս այս էաք 'ի միում տան, և ծնայ ի տանն ։ Եւ եղև յաւուրն երրորդի ծնաւ և կինս այս․ և մեք առանձինն էաք, և ոչ ոք գոյր ընդ մեզ 'ի տանն՝ բաց ի մէնջ երկոցունց (մեր երկուքէն զատ) ։ Մեռաւ որդի սորա 'ի գիշերի, քանզի ննջեաց 'ի վերայ նորա, և յարեաւ 'ի հասարակ գիշերի, և առ զմանուկն իմ 'ի գրկաց իմոց․ և աղախին քո 'ի քուն էր, և ննջեցոյց զնա 'ի ծոց իւրում (2), և զորդին իւր զմեռեալ ննջեցոյց 'ի ծոց իմում ։ Յարեայ ընդ առաւօտն դիեցուցանել զորդին իմ, և նա էր մեռեալ․ և հայեցայ ընդ նա այգուն, և ահա չէր որդին իմ՝ զոր ծնայ ։ Եւ ասէ միւս կինն․ Ոչ, այլ որդի քո մեռեալն, և որդի իմ կենդանին ։ Ասէ ցնոսա արքայ․ Դու ասես թէ՝ Այս որդի իմ է՝ որ կենդանիս է, և որդի դորա մեռեալն․ և դու ասես․ Ոչ, այլ որդին քո մեռեալն, և որդին իմ կենդանին ։ Եւ ասէ արքայ․ Առէք առ իս զսուրն ։ Եւ բերին զսուրն առաջի արքային, և ասէ արքայ․ Կտրեցէք զմանուկն զստնդիաց զկեն-

(1) Հոս Սողոմոնի բառը սեռական չէ՝ ուստի եւ ոչ յատկացուցիչ, վասն զի կիներն Սողոմոնին չեն, այլ երկու կիներ երեւցան Սողոմոնին ։ Ուստի Սողոմոնի տրական հոլով բնութեան խնդիր է երեւեցան բային ։

(2) փոխանակ ըսելու 'ի ծոցի իւրում, 'ի ծոցի իմում, կրնանք ըսել․ 'ի ծոց իւրում, իմում եւ այլն, վասն զի նախդրիւ տրականը երբեմն ի ով վերջաւորելով տրականի տեղ կը գործածուի ։

դանէ (3) յերկուս, և տուք զկէսն նորա դմա, և զկէսն նորա նմա։ Եւ պատասխանի ետ կինն՝ որոյ որդին կենդանին էր, և ասէ ցարքայ, քանզի խռովեցան աղիք նորա 'ի վերայ որդւոյն իւրոյ, և ասէ. Ո՛չ, տէր, տուք նմա զմանուկն կենդանի, և մահու մի՛ սպանանէք զնա։ Եւ միւսն ասէր. Մի՛ իմ լիցի՝ և մի՛ դորա (4), կտրեցէք ընդ մէջ (մէջքէն կտրեցէք)։ Պատասխանի ետ արքայ և ասէ. Տուք դմա զմանուկն կենդանի, որ ասաց թէ տուք զդա նմա՝ և մահու մի՛ սպանանէք զդա, նա է մայր դորա։ Գ. Թագ. Գ. 16–28

## 34

## ԱՆԱՆԻԱ ԵՒ ՍԱՓԻՐԱ

| | |
|---|---|
| Խորել, մէջէն գողնալ | Զի՞ է զի, ինչու համար, ինչու |
| Ո՞չ ապաքէն, չէ՞ մի որ | Ահ, վախ |
| Հանել զոգի, հոգին փչել | Յոտն կալ, ոտքի ելնել |

Այր ոմն Անանիա անուն հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ (1), վաճառեաց ագարակ, և խորեաց 'ի գնոց անտի, գիտելով և կնոջն (2), և բերեր մասն ինչ, եդ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն Սրբոյ և խորել 'ի գնոց գեղջն (3). ո՛չ ապաքէն մինչ կայրն (կեցած ատենը)՝ քո էր, և 'ի վաճառելն ընդ քո իշխանութեամբ էր (4), զի՞ է զի եդիր 'ի սրտի քում զիրս զայս, ոչ ստեցեր մարդկան այլ Աստուծոյ։ Եւ լուեալ Անանիայ զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի. և եղեւ ահ մեծ 'ի վերայ

---

(3) Մանկանէ և կենդանէ ածականները իրենց գոյականին նախդիրն առած են։

(4) Իմ եւ դորա սեռական բնութեան խնդիր են լինել էական բային, թէպէտ վերջի լինել բայը լռելեայն կ'իմացուի։

(1) Բացայայտիչը՝ որ է Սափիրաւ՝ իւր կնաւ բացայայտեալին հոլովովն դրուած է:

(2) Գործիական հոլով աններեւոյթներու քով տէր բային սեռական կը դրուի։

(3) փոխանակ ըսելու՝ թէ ստեսցես դու Հոգւոյն Սրբոյ և խորեսցես եւ այլն։ (Տես 15 էջ 2 կանոն։)

(4) Ընդ նախադրութիւնը գործիական խնդրով տակ կը նշանակէ։ Օր. Ընդ իշխանութեամբ քո էր (քու իշխանութեանդ տակ էր)։

ամենեցուն՝ որ լուան զայն ։ Յոտն կացին երիտասարդքն և ամփոփեցին զնա և տարան թաղեցին ։ Իբրև ժամք երեք ան-ցին , և կին նորա ոչ գիտէր զի՛նչ եղեալն էր , եմուտ 'ի ներքս ։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա . Ասա դու ինձ թէ ա՞յն-չափու գնոց վաճառեցէք (5) ։ Եւ նա ասէ . Այո՛ , այնչափու (6) ։ Ասէ ցնա Պետրոս . Զի՞ է զի միաբանեցէք դուք փորձել զհոգի Տեառն . Ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո՛ի դրան՝ հանցեն և զքեզ ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա և եհան զոգի ։ Մտին երիտասարդքն , գտին զնա մեռեալ , և հանին թա-ղեցին զնա առ առն իւրում ։ Գործ . Ե . 1–11

35

## ԻՂՁՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

| | |
|---|---|
| Ընտրել , [illegible] | Բոլորանուէր , [illegible] |
| Բնակակցել , միասին բնակիլ | Օրհաս , մահուան օր (էհել) |
| Լքանել (ելիք) , ետեւ ձգել | Ցարատել , [illegible] |
| Տարրակ , [illegible] | Այց առնել , այցելութեան [illegible] |
| Ոսկեձեղուն , [illegible] | Ցարկ , [illegible] [ [illegible] |
| Խնամարկել , խնամք տանիլ | Երանել , երանի տալ |

Ընտրեցի այո՛ ,
Ընտրեցի յաղբ կալ
ի տան Աստուծոյ՝
քան յոսկեձեղուն
Ցարկս ամպարշտաց

Բնակակցել նոցուն (1) ։
Որպէս սիրելիք
են յարկք քո , Աստուած ,
Որոց [illegible] (2) ։
Փափաքէր անձն իմ

(5) Տես 26 էջ 6 կանոն ։

(6) Պէտք է ըլլայ . Այնչափ գնոց վաճառեցաք ։

(1) Նոցուն դերանունն աւելադրութիւն է՝ [illegible] բառին համար դրուած ։

(2) կարդա՛ այսպէս . Աստուած , ո՜րքան [illegible] (ի՞նչպէս սիրելի են քու յարկերդ անոր համար՝ որ իրենը Թողուց) ։

Ի գաւիթըս քո․
Արդ 'ի նմա հանգչիմ։
Սիրտ իմ և հոգի
Ցընծասցեն առ քեզ,
Աստուած կենդանի․
Զի եգիտ գիւր տուն
Տառապեալ ճընճղուկ,
Եւ տատրակ զիւր բոյն։
Երանելի են
Որ 'ի տան քում աստ
Ծառայք քո բնակեն (3)․
Յաւիտեանս յաւէտ
Օրհնեսցեն ըզքեզ,
Ոչ թէ աստ և եթ։
Երանեալ է այր՝
Ում դու խնամարկես,
Որ որբոց ես հայր։
Արդ ընկալ զիս Տէր,
Որ քեզ ընծայիմ
Բոլորանըւէր։
Ի գաւիթըս քո
Լաւ է ինձ մի օր,
Քան բիւր (4) արտաքոյ․
Ընտրեցի այո,
Ընտրեցի յաղբ կալ
Ի տան Աստուծոյ,
Քան յոսկեձեղուն
Յարկս ամպարըշտաց
Բնակակցել նոցուն։
Ըստրուկ և գերի
Կեցից 'ի տան քում
Քան թէ տէր յերկրի։
Ասա վերջինն արեւ
Օրհաս ցանկալի
Ծագեսցէ զինեւ։
Յերկիր՝ յոր կոխեմ,
Ընդ յարկաւ տան քո
Ծածկեսցէ զիս վէմ։
Դու զողորմութիւն
Եւ զճշմարտութիւն
Ի՛ սպառ սիրես դուն։
Քո է ձրի պարգեւ՝
Ի շընորհս քոյին
Մընալ յարատեւ․
Եւ 'ի քոց ձըրից
Ոչ մերժես 'ի բաց
Որք գընան անբիծ։
Մի՛ առներ անտես
Զիս, տէր զօրութեանց,
Զցանկացեալս 'ի քեզ (5)։
Եւ երանեցայց
Այժմ և յաւիտեան
Յառնել քո ինձ այց։

(3) Այսպէս կարդա՛. Երանելի են ծառայք քո՝ որ բնակեն աստ 'ի տան քում. վերի խօսքին մէջ որ յարաբերական դերանունը իր ծառայք յարաբերեալէն յառաջ դըրուած է։ ( Տես 41 էջ 2 կանոն )։

(4) Բիւր ածականին հետ լռելեայն կ'իմացուի աւուրք (աւուրք բիւր)։

(5) Բայ մը ի՛նչ հոլովով խնդիր որ պահանջէ, նոյն հոլովով խնդիր կ'առնու նաեւ նոյն բային դերբայը կամ բայանունը, եւ կամ անոր անցեալ դերբայն ( Տես 22 էջ 1 կանոն )։ Ուստի Ցանկալ բայը նախդրիւ տրական խնդիր պահանջելուն, ցանկացեալս ը նոյն հոլով խնդիր առած է այսինքն 'ի քեզ։

36

## ԵՂԻԱ ԵՒ ՈՂՋԱԿԷԶ ԻՒՐ

| | |
|---|---|
| Կաղալ յերկուս հետս , երկու կող- | Կրկնել , երկու անգամ (ըսել ընել |
| Հեղուլ , թափել [ մին կող երթալ | Շերտ , ճեղքուած փայտ [ նոյն ) |
| Ցոլել , կտոր կտոր ըլլել | Դիզանել , երդնել |
| Կարդալ , օգնութեան կանչել , պոռալ | Երեքկնել , երեք անգամ (ըսել , ընել |
| Ջուարակ , պզտիկ հորթ | Գարշելի , նողկալի [ նոյն ) |
| Միջօրէ , կէս օր | Մերձենալ յընդերեկս , իրիկուան |
| Ողջակէզ , ամբողջ զոհ | [ մօտենալ |

Մերձեցոյց Եղիա զամենայն ժողովուրդն և ասէ ցնոսա . մինչեւ ցե՞րբ կաղայք յերկուս հետս , եթէ տէր է Աստուած , երթայք զհետ նորա ։ Ես միայն մնացեալ եմ մարգարէ Տեառն միայն , և մարգարէք Բահաղու՝ արք չորեք հարիւր և յիսուն ։ Տացեն մեզ երկուս եզինս , և ընտրեսցեն իւրեանց զմին , և յօշեսցեն և դիցեն 'ի վերայ փայտից , և հուր մի դիցեն . և ես արարից զմիւս եզնն և եդից 'ի վերայ փայտից . և հուր ոչ մատուցից ։ Եւ կարդասջիք զանուն աստուածոյն ձերոյ , և ես կոչեսցից զանուն տեառն Աստուծոյ իմոյ , և Աստուած՝ որ լուիցէ հրով , նա է Աստուած ։ Եւ առին ( Մարգարէքն Բահաղու ) զզուարակն՝ զոր ետ նոցա . և արարին և կարդացին զանուն Բահաղու յայգուէ մինչեւ ցհասարակ օր , և ասէին . Լուր մեզ , Բա՛հաղ , լուր մեզ ։ Եւ ոչ գոյր բարբառ , և ոչ ունկնդրութիւն ։

Եւ այպանեաց 'ի միջօրէին զնոսա Եղիա և ասէ . Մեծաձայն կարդացէք , զի Աստուած է . թերեւս զբօսանք ինչ իցեն նմա , կամ թէ 'ի քուն իցէ և յառնիցէ ։ Եւ իբրև մերձեցան յընդերեկսն , խօսեցաւ Եղիա ընդ մարգարէս գարշելեացն և ասէ . 'ի բաց կացէք , արդ ես արարից զողջակէզն իմ ։ Եւ 'ի բաց կացին և գնացին ։ Եւ առ ծղիա երկոտասան քար և շինեաց զքարինսն յանուն Տեառն . և եդ էզ

զչերտամն 'ի վերայ սեղանոյն՝ զոր արար, և յօշեաց զողջակէզն և եդեղ 'ի վերայ չերտիցն ։ Եւ ասէ . Առէք ինձ չորս սափորս ջրոյ և հեղէք 'ի վերայ ողջակիզիդ և 'ի վերայ չերտիցդ ։ Եւ ասէ . Կրկնեցէք . և կրկնեցին ։ Եւ ասէ . Երեքկնեցէք . և երեքկնեցին ։ Գնայր ջուրն շուրջ զսեղանովն ։ Եւ աղաղակեաց Եղիա յերկինս և ասէ . Լուր ինձ , Տէր , լուր ինձ հրով , և ծանիցէ ժողովուրդդ թէ դու ես Տէր Աստուած ։ Եւ անկաւ հուր յերկնից և եկեր զողջակէզսն և զչերտամն ։ Իբրև ետես ամենայն ժողովուրդն , անկան (1) 'ի վերայ երեսաց իւրեանց ։ և ասեն . Արդարեւ Տէր՝ նա է Աստուած , Տէր՝ նա է Աստուած ։

Գ. Թագ . ԺԸ. 21–40

## 37

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ՆԻՆՈՒԷԱՑՒՈՑ

| | |
|---|---|
| Յառնել (արի), ելնել, (ոտքի ելնել՝ կանգ- | Ի վաղիւ անդր , հետեւեալ օրը |
| Ի վաղիւ անդր, հետեւեալ օրը [նել) | Քաղել ոգւոց , հոգւոյն տաղտկիլը |
| Վիճակ արկանել , վիճակ ձգել | Երկայնամիտ , համբերող |
| Վիշապ , ահագին , խոշոր (ձուկն, օձ) | Որդն , որդան , որդ |

Եղեւ բան Տեառն առ Յովնան և ասէ . Արի և գնա 'ի Նինուէ , և քարոզեսջիր անդ , զի ել աղաղակ չարութեան նոցա առ իս ։ Յարեաւ Յովնան փախչել յերեսաց Տեառն , էջ 'ի Յոպպէ , եգիտ նաւ՝ որ երթայր 'ի Թարսիս , և եմուտ 'ի նա , և Տէր յարոյց հողմ . եղեւ մրրիկ մեծ , և նաւն 'ի վտանգի կայր 'ի խորտակել ։ Երկեան նաւավարքն երկիւղ մեծ (1) , և ասէին իւրաքանչիւր (2) ցընկեր իւր . Եկայք արկցուք վիճակս և

---

(1) Երբ տէր բային եզակի բառ մը ըլլայ՝ իսկ իմաստը յոգնակի , բայը թէ եզակի եւ թէ յոգնակի կրնայ դրուիլ , ինչպէս հոս կը տեսնուի ։

(1) Բայերն շատ անգամ իրենց արմատը կամ արմատին մօտ բառը հայցական հոլովով կ'առնուն՝ գործիականի տեղ . ինչպէս Երկեան երկիւղ մեծ ( մեծ վախով վախցան ) ։ Հոս երկիւղ հայցական բնութեան խնդիր է ։

(2) Իւրաքանչիւր բառն իբրեւ յոգնակի ուղղական գործածուած ըլլալուն՝ բայն ալ յոգնակի դրուած է ։

*գիտասցուք վասն ո՞յր են չարիքս այս ։ Արկին վիճակս, և ել վիճակն Յովնանու ։ Առին զՅովնան և ընկեցին 'ի ծովն, և դադարեաց ծովն 'ի խռովութենէ իւրմէ ։ Հրաման ետ Տէր կիտին մեծի կլանել զՅովնան, և էր Յովնան 'ի փոր կիտին երիս տիւս և երիս գիշերս (3) ։ Հրամայեցաւ 'ի Տեառնէ կիտոյ ձըկան (4), և եթուք զնա 'ի ցամաք ։ Յարեաւ Յովնան և գնաց 'ի Նինուէ, քարոզեաց և ասէ ․ Այլ ևս երեք աւուրք, և Նինուէ կործանեսցի ։ Հաւատացին արք Նինուէացիք յԱստուած ․ զգեցան քուրձ, և դարձան յիւրաքանչիւր ճանապարհաց իւրեանց չարաց ․ Ետես Աստուած և զղջացաւ 'ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա, և ոչ արար ։ Տըրտմեցաւ Յովնան և խռովեցաւ և ասէ ․ Ո՛վ Տէր, գիտէի թէ դու ողորմած ես և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց ։ Ել 'ի քաղաքէ անտի և նստաւ յանդիման քաղաքին ։ Եւ հրաման ետ Աստուած դդմենւոյն, և ել 'ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի, և ուրախ եղեւ Յովնան 'ի վերայ դդմենւոյն ։ Եւ հրաման ետ Աստուած որդան առաւօտուն 'ի վաղիւ անդր ․ եհար զդըդմենին և ցամաքեցաւ ։ Անկաւ արեւն զգլխովն Յովնանու և քաղէին ոգիք նորա ․ և ասէր ․ Լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ ։ Եւ ասէ Տէր ․ Դու խնայեցեր 'ի դդմենին՝ յոր ոչ եղեր աշխատ (որուն համար չաշխատեցար) ․ ես ո՞չ խնայեցից 'ի Նինուէ, յորում բնակեալ է աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ՝ որ ոչ ծանեան զաջ և զահեակ իւրեանց ։*

*Յովնան*

---

(3) Տես 25 էջ 3 կանոն ․

(4) Երբեմն գոյական բառ մը՝ ածական կ'ըլլայ ուրիշ գոյական բառի մը ։ Հոս կիտոյ ածական է ձկան ․

## 38

### ԱՌԵՂԾՈՒԱԾ Ի ՑՈՎՆԱՆ

| | |
|---|---|
| Առեղծուած , հանելուկ | Ցատակ , խորք , տակը |
| Ընթանալ , վազել , քալել | Առասպել , հանելուկ |
| Անողող , չթրջած | Գիտակ , գիտցող |

Առանց քայլելոյ
Ընթացայ ընդ ծով (1) ,
Եւ չունէր նաւակ •
Անողող 'ի ջրոյ (2)
Թաղեցայ ընդ ջրով
Ի ծովուն յատակ ։
Զուրկ էր նա յօդոյ (3)
Մեռեալ ոչ գոլով՝
Եւ շնչէր յստակ (4) ։
Ո՞վ էցէ այս մարդ (5) ,
Ասա դու ինձ արդ ,
Եւ առասպելիս
Իմ գիտակ լինիս ։

---

(1) Տես 51 էջ 2 կանոն ։

(2) Ածականներն այլ եւ այլ հոլովով խնդիր կ'առնուն ։ ( Տես 9 էջ 3 կանոն )։

(3) Զուրկ ածականը՝ որ հոս ստորոգելի եղած է՝ իւր խնդիրն բացառական հոլովով կ'առնու ։

(4) Շնչէր յստակ ( աղւոր շունչ կ'առնէր ) . յստակ ( մաքուր ) բառը որ ածական մ'է , հոս իբրեւ գոյական գործածուած է . վասն զի ածականներէն ոմանք իբրեւ մակբայ երբեմն կըգործածուին ։

(5) Ո՞վ-բառը ստորոգելի է մարդոյն ։ Գէտք է գիտնալ որ խօսքի մը մէջ անծանօթ բառ մը գտնելու համար գործածուած հարցական բառերն՝ (ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ու, որմէ՞, եւայլն ) այն անծանօթ բառին հոլովն ու պաշտօնը կ'ունենան ։

39

## ԵՕԹՆ ԵՂԲԱՐՔ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

Նահատակիլ, տանջանօք կոտորիլ
Անցանել ըստ օրէնս, օրէնքէ [ դուրս անցնիլ
Սրտմտութիւն, բարկութիւն
Կենդանւոյն (մկ), ողջ ողջ
Տապակ, տապկելու աման
Ջեռուցանել, տաքցնել
Արգանդ, մօրը փորը

Փոխիլ յաշխարհէ, մեռանիլ
Վախճանիլ, մեռանիլ
Խորհրդական, խորհուրդ տուող
Ստինք, ծիծ
Զարաչուք, անգութ, անողորմ
Ցապաղել, ուշանալ
Սրտաբեկ լինել, վհատիլ
Կատարել, մեռանիլ,

Անարատ, մաքուր

---

Դէպ եղեւ եղբարց եօթն՝ մարբն հանդերձ կոչելոց՝ ածել յառաջեան թագաւորին (1) : Մի 'ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն, ըն-կըրաւ խօսիլ և ասէ . Մեք պատրաստ եմք 'ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս (2) հայրենիս : Սրտմտութեամբ լի (3) եղև Թա-գաւորն, հրամայէր կենդանւոյն 'ի տապակս ջեռուցեալս իջուցանել : Իբրև առաջինն փոխեցաւ յաշխարհէ, զերկ-րորդն 'ի տեղի տանջանացն մատուցանէին, և անդէն հար-ցանէին . կերիցե՞ս խոզենի միս : Նա պատասխանի ետ և ասէ . Ոչ : Վասն այսորիկ և սա 'ի նոյն տանջանս տանջեալ՝ վախ-ճանէր : Յետ նորա զերրորդն ածին և զլեզուն խնդրէին : Նա վաղվաղակի մատուցանէր, և զձեռսն քաջասիրտս տա-րածանէր, զի և Թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն որդւոյն տանջանաց (4), զի առ ոչինչ զցաւսն հա-

---

(1) Այսպէս կարդա՛. Դէպ եղեւ ածել յառաջեան թագաւորին եղբարց եօթն կոչելոց հանդերձ մարբն իւրեանց : Հոս կոչելոց (բռնուած) ածական է եղբարց ին :

(2) Ըստ նախադրութիւնը անորոշ հայցականով տեղի մը, սահմանէ մը դուրս կը նշանակէ :

(3) Լի ածականը գործիական հոլով խնդիր կ'առնու :

(4) Վասն տանջանաց որդւոյ պատանւոյն, կամ վասն տանջ որդւոյ պատանւոյն : Առաջնոյն մէջ տանջանացը յատկացուցչի ձեւով դրուած ածական մը կըլլայ որդւոյն ին : ( Տես 44 էջ 3 կանոն ) :

մարեցաւ ։ Եւ սա իբրեւ փոխէր, չորրորդն 'ի տեղի մատուցեալ, 'ի նոյն տանջանս չարչարէին ։ Մինչդեռ ոգիքն կըրտսերոյ մանկանն առ իւր կային (երբ դեռ պզտիկ տղուն հոգին վրան էր) կոչեաց թագաւորն զմայրն, և աղաչէր լինել պատանւոյն կենաց նորին խորհրդական (5), զի փրկեսցէ ։ Իբրեւ կարի շատ ստիպեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն, և ասէ ․ Ողորմեաց ինձ, որդեակ իմ, յուշ լիցի քեզ (միտքդ բերայ, յիշէ) զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, և սնուցի զքեզ զերիս ամս 'ի դիեկս ստեամբք ։ Արդ' աղաչեմ զքեզ, որդեակ, մի զարհուրիր դու 'ի չարաչուք դահճէ այտի ․ այլ եղբարցն արժանի եղեալ, ընտրեա զմահ' քան զկեանս աշխարհի ։ Եւ մինչդեռ մայրն զայս մխիթարութիւնս մատուցանէր, սկսաւ խօսել պատանեակն և ասէ ․ Ո՞ւմ կայք (որո՞ւ կեցեր էք), զի՞ յապաղէք, ոչ եմ լսելոց (6) հրամանի թագաւորիդ, այլ հրամանաց հնազանդեալ եմ' օրինաց հարցն մերոց (7) ։ Ցայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն ։ Ադաւել 'ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին, սակայն և սա անարատութեամբ և սրբութեամբ' յուսացեալ 'ի Տէր' մեկնեցաւ յաշխարհէ ։ Զհետ որդւոցն և մայրն երանելի 'ի նոյն օրէնս կատարեցաւ ։

Բ․ Մակ․ Է․

---

(5) խորհրդական լինել կենաց պատանւոյն ։ Վերոյգրեալին մէջ նորին աւելադրութիւն է պատանւոյն համար դրուած ։

(6) Երբոր լսել (մտիկ ընել) նշանակէ չէզոք բայ է, եւ վերջահոլով տրական բնութեան խնդիր կ'առնու ։ Այսպէս կան քանի մը բայեր' որ իրենց նշանակութիւնը փոխելով երբեմն ներգործական են եւ երբեմն չէզոք ․ Օր․ Տեսանել բայը երբ տաճկերէն (կէօրմէք) նշանակէ' ներգործական է, իսկ երբ նշանակէ հայիլ չէզոք է ․ Նոյնպէս Լսել բայը երբ նշանակէ լսել ներգործական է, իսկ երբ նշանակէ ունկնդրել չէզոք է ։

(7) Կարդա'․ Այլ հնազանդեալ եմ հրամանաց օրինաց հարցն մերոց (այլ հնազանդած եմ մեր հարց օրէնքի հրամաններուն)։ Այս խօսքին մէջ հրամանաց տրական բնութեան խնդիր է հնազանդեալ եմ բային ․ օրինաց յատկացուցիչ է հրամանաց ին, եւ հարցն յատկացուցիչ է օրինաց ին ։ Վասն զի պիտի հարցնէ աշակերտը, որո՞ւն հրամաններուն — օրինաց ։ Որո՞ւն օրինաց — հարցն մերոց (մեր հայրերուն)։

40

## ԴԱՒԻԹ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄ

| | |
|---|---|
| Երիվար , ձի | Հանդէս առնել զօրուն , զօրքը [համրել , աչքէ անցընել |
| Պատուիրակ , պատգամաւոր | Ջորի , ( ջորի ) |
| Եղջեր (ած.) , եղջիւրէ շինուած (փող) | Թաւ , ոստերը շատ ( ծառ ) |
| Հետիոտս (մկ.) , ոտքով | Վիհ , անդունդ , մեծ փոս |
| Զառ 'ի վեր , դէպ ի վեր | Բոկ , բոպիկ |
| Պարտիլ , յաղթուիլ | |

Արար Աբիսողոմ կառս և երիվարս , և առաքեաց պատուիրակս յամենայն ցեղս Իսրայելի , և ասէ . 'ի ըսել է (1) Ընդ ձայն եղջեր փողոյ . ասասջի՛ք եթէ թագաւորեաց Աբիսողոմ։ Եւ եղեւ ժողովուրդ բազում երթեալ ընդ Աբիսողոմայ ։ Ասէ Դաւիթ ցամենայն ծառայս իւր . Արի՛ք և փախիցուք ։ Ել արքայ և ամենայն տուն նորա հետիոտս , ելանէր ընդ զառ 'ի վերն Ձիթենեաց , ելանէր և լայր , և ինքն երթայր բոկ ։ Եւ Աբիսողոմ և ամենայն Իսրայէլ մտին յԵրուսաղէմ։ Եւ Դաւիթ եհաս 'ի բանակս , և հանդէս արար զօրուն՝ որ ընդ նմա , և կացոյց 'ի վերայ նոցա հազարապետս և հարիւրապետս ։ Պատուէր ետ արքայ և ասէ . Խնայեսջի՛ք 'ի պատանեակ իմ Աբիսողոմ (2) ։ Եղեւ կռիւ յանտառին Եփրեմայ , և պարտեցաւ անդ զօրն Իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի ։ Դիպեցաւ Աբիսողոմ առաջի ծառայիցն Դաւթի , և էր հեծեալ 'ի ջորւոջ իւրում . եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ , պատեցաւ գլուխ նորա ընդ կաղնեաւն , և կախեցաւ ընդ երկինս ու ընդ երկիր (3) , և ջորին անց 'ի ներքոյ նորա ( անոր տակէն ) ։ Եւ ետես այր մի և պատմեաց Յովաբայ ։ Առ Յովաբ երիս նետս և եհար զնոսա 'ի սրտի Աբիսողոմայ ,

---

(1) Տես 16 էջ 4 կանոն ։ (2) Տես 57 էջ 2 կանոն ։

(3) Ընդ նախադրութիւնը ու շաղկապով կապուած երկու անորոշ հայցականներու առջեւ դրուելով կը նշանակէ ( երկու բանի ) միջեւ ։

*և ընկէց զնա 'ի վիհ մեծ յանտառին ։ Եւ եհաս Քուսի և ասէ ցարքայ · Աւետիք տեառն իմոյ արքայի (4) , զի արար Տէր իրաւունս ։ Ասէ արքայ · Եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Աբիսողոմայ ։ Եւ ասէ Քուսի · Եղիցին իբրեւ զմանուկն թշնամիք տեառն իմոյ արքայի ։ Խռովեցաւ արքայ և ելաց , և այսպէս ասէր 'ի լալ իւրում · Որդեակ իմ Աբիսողոմ , Աբիսողոմ որդեակ իմ · ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո , ես փոխանակ քո , Աբիսողոմ որդեակ իմ , որդեակ իմ Աբիսողոմ ։*

*Բ. Թագ. ԺԸ–ԺԹ.*

41

ՆՐԳ

# ԻԹՆԻՍԻՆԳ ՓՐԿՉԻՆ

## ՎՐՈՑՐ ԵՒ ԱՌԱՆ ՀՈՎԻՒՔ Ի ԲԵԹՂԵՀԷՄ

*Նորանշան* , զարմանալի
*Վարսամ* , գիսաւոր աստղ
*Գերապանծ* , խիստ պանծալի
*Օ՛ն առնուլ* , քաջալերուիլ
*Երկնահանգէտ* , երկնից նման
*Ածել զմտաւ* , մտածել , խորհել
*Վսեմ* , բարձր
*Այր* , ( մարդ )
*Վարանիմ* , անճրկիլ , շուարիլ
*Մանկացեալ* , մանուկ եղած ( մար- [ մին առած )
*Աղքատին* , խեղճ , աղքատ
*Ներկուռ* , գեղեցիկ , վայել
*Օժտապան* , օժը տանողը՝ այսինքն [ պատուանոյն
*Հարկանել նուագ* , երգ զարնել
*Մեծարգոյ* , պատուական
*Աւետարանել* , աւետել , քարոզել

---

(4) Տես 37 էջ 2 կանոն ։

(5) *Եսէ օղլո՞մ էսէ մանկանն իմոյ Աբիսողոմայ ։ Այս խօսքին մէջ մանկանն սեռական բնութեան խնդիր է եսէ բային · պէտք է թարգմանել , միթէ կենդանի՞ է Աբիսողոմ զաւակս ։*

### ՎՐՈՑՐ

Գիտիցես , Աւան ,
Զի ծնաւ մեզ արքայ ,
Լոյս նորանըշան
Զիւրեւ ցոլանայ ։
Վարսամ 'ի յերկնէ
`Զեփիւռն' 'ի ծովէ (1)
Աւետարանէ
Փըրկիչ աշխարհի ․
Արքայք գերապանծ
Առ նա խոնարհին ,
Եւ զօրք 'ի բարձանց
Նուէրաբերք նմին (2) ։
Օն տուեալ և մեր (3)
Նոյին արդ ըղձետ ,
Մարդասիրութեան նուէր
Յայն երկնահանգէտ (4) ։

### ԱՒԱՆ

Ըղձոյն խոկ և իմ
Աճեալ ըղձըմտաւ՝
Այլ յոյժ վարանիմ
Եթէ զինչ բընաւ
Հովիւք չքաւորք
Տանել կարիցեմք
Առ որ թագաւորք
Ի յայց գան վըսեմք ։

### ՎՐՈՑՐ

Մի ինչ վարանիր ․
Ոչ գանձս 'ի հովուաց
Խնդրեսցէ 'ի ձիր
Մանկացեալն Աստուած ։
Այլ մեր աղքատին
Այս լիցին նուէրք ․
Առնում ես սրինգ ,
Դու ներկուռ 'ի յերգ՝
Երգեա զկայթանակ
Գառինն օձասպան ,
Մինչ ես ըղնըւագ
Հարից հովուական ։
Եւ քան զամենայն
Նուէր մեծարգոյ ,
Լիցի մանկանն այն ,
Երգըս մեր հաճոյ ։

---

(1) Տես 45 էջ 5 կանոն ։ (2) Լինել բայը զեղչեալ է ։

(3) Անցեալ դերբայներու քով տէր բային սեռական հոլով կը դրուի ։ (46 էջ 4 կանոն ) ։

(4) Մարդասիրութեան նուէր յայն երկնահանգէտ ( Նուէր տանինք դէպ 'ի այն այրը՝ որ երկնից նման է ) ։

## 42

## ԴԱՆԻԷԼ ԵՒ ԹՇՆԱՄԻՔ ՆՈՐԱ

Ձիւթ, (զիֆթ)
Ճարպ, (իչ եաղը)
Գնդակ, կլոր (չանքաւած), գնտիկ
Հարկանել, զարնել, խոթել
Պայթիլ, (փաթլամագ)
Կուտիլ, բազմութեամբ ժողվուիլ
Կոտորել, ջարդել
Տալ 'ի ձեռս, յանձնել, մատնել

Տագնապել, նեղութեան՝ մէջ ըլլալ
Հարկաւ (մկ.) անպայման
Պատրուճակ, շինէ կամ ապակէ [կենդանի
Վազվազակի, շուտով
Աշխարել, լալ, ողբալ
Գէշ գէշ պատառիլ, կտոր կտոր [ըլլալ

---

Էր վիշապ մի մեծ, և պաշտէին զնա Բաբելացիքն։ Ասէ Թագաւորն ցԴանիէլ. Միթէ զդմանէ ասիցես թէ պղնձի է. ահաւադիկ կենդանի է, ուտէ և ըմպէ. արդ եկ պագ դմա երկիր։ Ասէ ցնա Դանիէլ. Ես Տեառն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է Աստուած կենդանի։ Բայց դու, արքայ, տուր ինձ իշխանութիւն, և սպանից զվիշապդ առանց սրոյ և գաւազանի (1)։ Եւ ասէ Թագաւորն. Տուեալ քեզ (2)։ Եւ առ Դանիէլ իւղ, ձիւթ և ճարպ և մազ, և եփեաց 'ի միասին և արար գնդակս, և եհար 'ի բերան վիշապին, և իբրև կերաւ՝ պայթեաց վիշապն։ Իբրև լուան Բաբելացիքն, բարկացան յոյժ, և կուտեցան 'ի վերայ Թագաւորին և ասեն. Հրեայ եղև Թագաւորն (3). Զբէլ կործանեաց, և զվիշապն սպան, զքուրմսն կոտորեաց։ Եւ ասեն ցԹագաւորն, Տուր մեզ 'ի ձեռս զԴանիէլ, ապա թէ ոչ՝ սպանանեմք ըզքեզ և զտուն քո։ Իբրև ետես Թագաւորն եթէ կարի տագնապեն զնա, հարկաւ 'ի ձեռս ետ նոցա զԴանիէլ։ Եւ նոքա արկին զնա 'ի գուբն առիւծուց, և անդ էր զվեց օր (4)։

---

(1) Առանց նախադրութիւնը սեռական հոլովով խնդիր կ'առնու։
(2) Զեղչում կայ. պէտք է ըսել. Տուեալ մեզ քեզ (ըստծիր պէս ըլլայ)։
(3) Տես 11 էջ 3 կանոն։ (4) Տես 25 էջ 3 կանոն։

Էին 'ի գբին եօթն առիւծք, և տային նոցա հանապազ երկուս մարդս և երկուս պատրուճակս. բայց յայնժամ ոչինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցեն զԴանիէլ: Եւ Թագաւորն եկն յաւուրն եօթներորդի աշխարել զԴանիէլ: Իբրև եկն 'ի բերան գբոյն, և հայեցաւ և ետես զի նստէր Դանիէլ, աղաղակեաց 'ի ձայն մեծ (5) և ասէ. Մեծ ես, Տէր Աստուած Դանիէլի, և չիք այլ ոք բաց 'ի քէն (6): Եւ առ զնա 'ի վեր: Եւ զՊատակարս կորստեան նորա արկին 'ի գուբն. և գէշ գէշ պատառեցան նոյն ժամայն առաջի նորա:

Դան. ԺԳ. 22–41

43

ԳՈՂԻԱԴ ԵՒ ԴԱՒԻԹ

| | |
|---|---|
| Այլազգի, օտար ազգ | Մախաղ, (չանթա) |
| Ճակատել, պատերազմի շարուիլ | Պարս, (սափան) |
| Ճակատ, պատերազմական զօրաց շարք | Վահանակիր, վահան կրող՝ տանող |
| Մենամարտել, երկու մարդ առան-[ձին կռուիլ | Խարտեաշ, (քումրալ) |
| | Գեղարդն, նիզակ |
| Հարկանել, խոցել, ծակել, նեղել | Ասպար, վահան |
| Ցուպ, (տէյնէկ) | Պարսաքարել, պարսով քար նետել |
| Որորկ, փայծաղ, (տէրմպէլ) | Սաղաւարտ, պատերազմի գլխանոց |
| Հեղեղատ, ջուրի մէջէ անցնող ձոր | Զահի հարկանիլ, վախնալ |

Ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց 'ի պատերազմ (պատերազմի համար), և Սաւուղ և արք Իսրայէլի ճակատեցան 'ի պատերազմ ընդդէմ այլազգեացն: Եւ ել այր զօրաւոր 'ի ճակատէ այլազգեացն՝ Գողիադ անուն նորա. եկն եկաց, ձայն ետ 'ի ճակատն Իսրայէլի և ասէ ցնոսա. Ընդէ՞ր ելանէք ճակատել 'ի պատերազմ ընդդէմ մեր: Ընտրեցէք

(5) Նախդրիւ տրականը երբեմն կը գործածուի գործիական հոլովի տեղ: Հոս Աղաղակեաց 'ի ձայն մեծ ըսուած է փոխանակ ըսելու՝ Աղաղակեաց ձայնիւ մեծաւ:

(6) Բաց կամ բայց նախադրութիւնը բացառական հոլովով խնդիր կ'առնու:

*դուք ձեզ այր մի, և ես և նա մենամարտեսցուք (1) երկոքեան. եթէ կարասցէ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ 'ի ծառայս (2). ապա թէ ես յաղթեցից, եղիջիք դուք մեզ 'ի ծառայս: Իբրեւ լուաւ Սաւուղ և ամենայն իսրայէլ (3) զբանս այլազգւոյն, զահի հարան (4) և երկեան յոյժ: Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ծառայ քո երթիցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ (5): Տէր Աստուած՝ որ ապրեցոյց զիս 'ի ձեռաց առիւծուն և 'ի ձեռաց արջոյն, ապրեցուսցէ զիս 'ի ձեռաց այլազգւոյն այնորիկ: Ասէ Սաւուղ. Երթ, և Տէր եղիցի ընդ քեզ: Եւ առ զցուպն իւր 'ի ձեռին իւրում, և ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս 'ի հեղեղատէն և եդ զնոսա 'ի հովուական մախաղին, և զպարսն 'ի ձեռին իւրում, և մերձեցաւ առ այրն այլազգի: Եւ գնայր և գայր այլազգին և մերձենայր առ Դաւիթ, և այր վահանակիր առաջի նորա: Իբրև հայեցաւ և ետես զԴաւիթ՝ արհամարհեաց զնա, զի էր պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ, և ասէ. Զիա՞րդ, շո՞ւն եմ ես, զի ցպով և քարամբք գաս 'ի վերայ իմ: Եկ առ իս, և տաց զմարմին քո թռչնոց երկնից և գազանաց երկրի: Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. Դու գաս 'ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ, և ես գամ 'ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց: Եւ աճապարեաց, ձգեաց զձեռն իւր 'ի մախաղն և առ անտի քար մի, և պարսաքարեաց և եհար զճակատ այլազգւոյն. և եմուտ քարն ընդ սաղաւարտն (6) 'ի ճակատն, և*

---

(1) Եթէ խօսքի մը մէջ տէր բայիները տարբեր դէմք են, բայց յոգնակի կը դրուի, ու դէմքով առաջին դէմքի տէր բայիին հետ կը համաձայնի: Ինչպէս, Ես և նա մենամարտեսցուք խօսքին մէջ երկու տարբեր դէմքի տէր բայիներ գտնուելով մենամարտեսցուք բայը յոգնակի դրուած է՝ համաձայնելով Ես դերանուն տէր բայիին դէմքին: Պէտք է գիտնալ որ Առաջին դէմքը որ է (ԵՍ) Նախապատիւ է Երկրորդ դէմքէն որ է (ԴՈՒ), եւ Երկրորդն ալ Նախապատիւ է Երրորդ դէմքէն որ է (ՆԱ):

(2) Երբ գոյական բառ մը ստորոգելի ըլլայ, կրնայ նախդրիւ տրական հոլովով դրուիլ:

(3) Տես 21 էջ 4 կանոն:

(4) Հարկանել բայը զ նախդրով վերջահոլով տրական բնաբան խնդիր կ'առնու:

(5) Ածականը իւր գոյականին նախդիրն իր վրայ ալ առած է: (Տես 10 էջ 2 կանոն):

(6) Տես 31 էջ 2 կանոն:

անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր ։ Ընթացաւ Դաւիթ , առ զնորին սուսեր , և սպան զնա և եհատ զգլուխ նորա ։ Իբրև տեսին այլազգիքն թէ մեռաւ զօրաւորն նոցա , փախեան . և արք Իսրայէլի յարձակեցան զհետ նոցա և կոտորեցին զբանակս նոցա ։ Ա. Թագ. ԺԷ.

~~~~~~~~

## 44

### ԵՐԿԱՑՆՄՏՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ

Ուստր , մանչ զաւակ
Լուծք եզանց } ջուխտ մը եզ
Հարկիք եզանց
Մատակ , էգ ( դիշի )
Արօտական , արածող
Սպաս , կարասիք աման
Վարել , հողը հերկել՝ վարուցան ընել
Գերեվար , գերի տանող՝ բռնող
Զազրութիւն , աղտոտութիւն
Բացական , հեռու , բաց տեղ կե-[ցող
Պատրել , պաշարել
Ասպատակաւոր , յափշտակելու յար-[ձակող

Օթագանալ , գիշերը հոն՝ անցընել
Ասպատակել , յափշտակելու կամ [աւերելու յարձակիլ
Անկանիլ , ինկել
Վարս , մազ
Անդրէն , դարձեալ , հոն
Կեղ , խոց , վէրք
Աղբեւք , աղ , ( չէշմէ )
Ժուժկալել , դիմանալ
Զարաչար (ած.) խիստ գէշ
Հարկահար , ծառայ կամ աղախին
Անեցուցանել , մեծցընել
Ցանախութիւն , շատութիւն , ա-[ռատութիւն

---

Այր ոմն էր յԱւսիդ աշխարհի , որում անուն էր Յոբ , և էր այրն այն աստուածապաշտ ։ Եղեն նորա (1) ուստերք եօթն և դստերք երեք , և էին խաշինք նորա եօթն հազար , ուղտք երեք հազար , լուծք եզանց հինգ հարիւր , էշք մատակք արօտականք հինգ հարիւր , և սպասք բազում յոյժ ։ Հարկիք եզանցն վարէին և էշքն մատակք արածէին առ նոքօք (2) , և եկին գերեվարք և գերեցին զնոսա և զմանկտին կոտորեցին սրով ։ Հուր անկաւ յերկնից և այրեաց զհօտսն , և

---

(1) Տես 27 էջ 5 կանոն ։ (2) Տես 26 էջ 4 կանոն ։
~~~~~~~~

զհովիւսն ըստ նմին օրինակի (3) եկեր ։ Ազատակաւորք ապա-տակեցին և պատեցան զուղտուքն և գերեցին զնոսա և ըզ մանկտին կոտորեցին սրով ։ Մինչդեռ ուստերքն և դստերք ուտէին և ըմպէին առ երիցու եղբօրն (4) իւրեանց , յանկարծա-կի հողմն մեծ եկն յանապատէ և եհար զչորեսին անկիւնս տանն , և անկաւ տունն 'ի վերայ որդւոցն , և վախճանե-ցան ։ Յարուցեալ Յոբ' պատառեաց զհանդերձս իւր , և կըտ-րեաց զվարսս գլխոյ իւրոյ , և անկեալ 'ի գետին' երկիր ե-պագ Տեառն և ասէ ․ Մերկ եկի ես յորովայնէ մօր իմոյ , և մերկանդամ դարձայց անդրէն ։ Տէր ետ և Տէր առ , որպէս Տեառն հաճոյ թուեցաւ' նոյնպէս և եղեւ , եղիցի անուն Տեառն օրհնեալ ։ Եւ սատանայ եհար զՅոբ չարաչար կեղով յոտից մինչև ցգլուխ (5) ․ և նստէր յաղբեւս արտաքոյ քաղա-քին ։ Իբրեւ բազում ժամանակ անցանէր 'ի վերայ (վրան շատ ժամանակ անցաւ) , ասէ ցնա կինն իւր ․ Մինչեւ ցե՞րբ ժուժկալեալ ասիցես թէ ահա համբերից տակաւին ։ Դու խնքնին 'ի զազրութիւն որդանց նստիս օթագացեալ բացա-կան ․ և ես մոլորեալ և հարկահար , տան 'ի տանէ և տեղի 'ի տեղւոջէ (6) , սպասեմ թէ երբ մտանիցէ արեգակն , զի հանգ-եայց 'ի տառապանաց իմոց' որ այժմ պատեալ են զինև (7) ։ Ասէ , ասա բան ինչ 'ի Տէր , և վախճանեաց ։ Եւ նորա հա-յեցեալ ընդ նա' ասէ ․ Եթէ զբարիսն ընկալաք 'ի ձեռանէ Տեառն , չարեացս ո՞չ համբերիցեմք ։ Եւ յայսմ ամենայնի' որ ինչ անցք անցին ընդ նա (ինչ անցքեր որ գլխէն անցան) ,

---

(3) Ըստ նախադրութիւնը վերջահոլով տրական խնդրով համեմատ (կէօրէ) կը նշանակէ ։

(4) Տես 36 էջ 1 կանոն ։

(5) Մինչև նախադրութիւնը ց կամ է նախդրով տրական խնդիր կ'առնու ։

(6) Երբ բառ մը երկու անգամ կրկնել պէտք ըլլայ (ոչ թէ զօրութեան կամ զարդու համար) իրարու քով երբեմն զատ եւ երբեմն մի եւ նոյն հոլովով , ա-նոնցմէ մին միայն պահանջուած նախդիրը կ'առնու ․ Ուստի , Տան 'ի տանէ և տեղի 'ի տեղւոջէ խօսքին մէջ' ուր Բացառական անցեալ դերբայ մը լռելեայն կ'իմացուի , կը տեսնեմք որ տան եւ տեղի բառերն նախդրիւ տրական ըլլալով' իրենց է նախդիրը չեն պահած' ու միայն բացառականներուն վրայ դրուած է այն ․

(7) Զ նախդրով գործիական հոլովը [illegible] , [illegible] կը նշանակէ ։

ոչ մեղաւ Յոբ առաջի Տեառն։ Եւ Տէր աճեցոյց զՅոբ, և ետ կրկին քան որչափ ինչ էր՝ յառաջագոյն Յոբայ [8] 'ի յաջողութիւն. Ծնան նմա ուստերք եօթն և դստերք երեք. ետես զորդիս իւր և զորդիս որդւոց իւրոց, և վախճանեցաւ ծերացեալ և լցեալ աւուրբք (լցուած օրերով)։

Յոբ. Ա–Բ. ԻԲ.

45

## ԶԳԱՐՈՒՆ ԵՒ ԶԱՄԱՌՆ ԴՈՒ ՍՏԵՂԾԵՐ

| | |
|---|---|
| Լիր, բովանդակութեան | Շանթ, կայծակ |
| Հաստել, ստեղծել | Մայրի, (չամ ազաճը) |
| Դիել, ծիծ ուտել | Բարձրոստ, ափերը բարձր |
| Երկնառաւ, երկինքէն առաք եկած | Շնչել, փչել |
| Ոռոգել, ջրել | Հիւսիսի, հիւսիս (հովը) |
| Անհատ, անհատնում | Համասփիւռ, ամեն կողմ սփռուած |
| Վազորդայն (մկ.) վաղ առաւօտ | Մէգ, մառախուղ (մուժ) |
| Ատոք, լեցունկեկ (ցորեն) | Ականակիտ, փայլուն, մաքուր |
| Մածանիլ, շուրծիլ մեղմ հովէ | Կայլակել, բխիլ, հոսիլ (ջրէ) |
| Վարսագեղ, գեղեցիկ մազերով | Վճիտ, յստակ, մաքուր |
| Կողր, երք, ափ (փալ) | Ծաւալիլ, տարածուիլ |
| Որոտընդոստ, որոտմամբ վեր ցատ- [կեցնող] | Եղտիւր, ջրոտ տեղ |
| Ձետեղիլ, հաստատուիլ | Ափնածիր, եզերքը շրջապատուած |

Քո, Տէր, քո է տիւ
Եւ քո է գիշեր.
Դու զաշխարհ լըրիւ
Իւրով հաստեցեր։
Ամառն և գարուն
Հաստատեալ կան քեւ,

Քեւ շրջան առնուն
Լուսին և արեւ։
Ոչ ծաղկունք դիւին
Ի ցօղ երկնառաւ,
Ոչ բոյսք ոռոգին
Յանձրեւ 'ի յանհատ [1]։

[8] Քան որչափ ինչ էր՝ Յոբայ (Տես 27 էջ 5 կանոն)։
[1] Տես 56 էջ 5 կանոն։ —

Եթէ ոչ դու զայն
Իբր ըզմարգարիտ
Սըփռես վաղորդայն
Ընդ [illegible]՝ ընդ [illegible] (2) ։
Քեւ ցօրեան առոք
Ծածանի 'ի հերկ ,
Ծանրանան մըրգօք
Վարսագեղ կողերք ։
Ի հրամանաց քոց
Շանթ որոտընդոստ
Ճայթէ 'ի յամպոց
Ի մայրիս բարձրոստ ։
Մերթ շընչէ զեփիւռ ,
Մերթ խիստ [illegible] (3) ․
Ծածկէ համասփիւռ
Մէգ զերեսս երկրի ։
Աստ ականակիտ
Կայլակէ աղբիւր ,
Անդ վըտակ վըճիտ
Ծաւալի յեզերս ։
Ափնածիր 'ի քէն
Փակեալ Ովկիան ,
Եւ ոչ անցանեն
Ալիքն [illegible] (4) ։
Ի քէն ամենայն
Ջափով և թըւով
Ջետեղեալ եդան
Ընդ ցամաք ընդ ծով ։

~~~~~~~~~~

## 46

### ՋՐՀԵՂԵՂ

| | |
|---|---|
| Սորջանալ , [illegible] | Նաւթ , ( [illegible] ) |
| Ջնջել , [illegible] | Հասակ , [illegible] |
| Ապականութիւն , [illegible] | Սահանք , [illegible] |
| Ապականել , [illegible] | Վերացուցանել , [illegible] |
| Տապան ( [illegible] ) , [illegible] | Ոնգունք , [illegible] |
| Խորշ , [illegible] | Ջորեքկուսի , ( [illegible] ) |

---

Իբրեւ ետես Տէր Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան 'ի վերայ երկրի , սորջացաւ զի արար զմարդն՝ և ասէ ․ Ջնջեցից զամենայն մարմին՝ զոր արարի ․ մի մնասցէ ոգի իմ

---

(2) Տես 12 էջ 4 կանոն ․
(3) [illegible] բառն ուղղական է՝ կը գրուի նաև [illegible] ( Տես 32 էջ 4 կանոն ) ․
(4) Տես 50 էջ 2 կանոն ․
~~~~~~~~~~

*'ի մարդկանդ յայդմիկ, վասն լինելոյ դոցա մարմին։ Բայց Նոյ՝ այր արդար կատարեալ, հաճոյ եղեւ Աստուծոյ։ Ասէ Տէր Աստուած ցՆոյ. ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է, զի լցաւ երկիր ապականութեամբք 'ի նոցանէ։ Եւ ահա ես ապականեցից զնոսա և զերկիր։ Արդ արա դու քեզ տապան 'ի չորեքկուսի փայտից, խորշս խորշս գործեսցես ըզ տապանն, և նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ։ Եւ մտցես 'ի տապանն, դու և որդիք քո և կին քո և կանայք որդւոց քոց ընդ քեզ(1)։ Եւ ածից ես անձրեւ 'ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և ջնջեցից զամենայն հաստատ՝ զոր արարի։ Արար Նոյ զամենայն՝ զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստուած. և եմուտ 'ի տապանն վասն ջրոյն հեղեղի։ Եւ յետ եօթն աւուր սահանք երկնից բացան, և եղեւ անձրեւ 'ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն. և շրջէր տապանն 'ի վերայ ջրոց, և սաստկանայր ջուրն յոյժ յոյժ 'ի վերայ երկրի և ծածկէր զամենայն լերինս բարձունս։ Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն 'ի վերայ երկրի, ամենայն մարդ և ամենայն՝ որ ունէր շունչ կենդանի յունդունս իւր։ Եւ մնաց միայն Նոյ և որ ընդ նմա էին 'ի տապանի անդ (2)։* Ծննդ. Զ. Է.

47

## ԴԱՒԻԹ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՆՈՐԱ

| | |
|---|---|
| Հարկանել, զարնել, կոտորել | Իմանալ, հասկնալ |
| Խնդրել, ուզել | Օծանիլ, եղով քսուիլ |
| Շնչել, փչել | Տքնիլ, չքնանալ, արթուն մնալ |
| Պահել, ծոմ բռնել, | Այսօրէն, նորէն, ետ, հոս |

---

(1) Տես 21 էջ 4 կանոն։

(2) Աստ, անդ մակբայներն՝ ի նախդրով վերջահոլով տրականի քով կը դրուին այս, այն ցուցական դերանուանց տեղ՝ եւ ածական են։

Օր. 'ի տապանի անդ կըսեմք փոխանակ ըսելու 'ի տապանին յայնմիկ
ծերերն աստ » » » ծերերս յայսմիկ

*Եհար Տէր զմանուկն և հիւանդացաւ ։ Խնդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն մանկանն , պահեաց պահս և անկաւ 'ի վե-րայ գետնոյ ։ Եւ յարեան 'ի վերայ նորա ( անոր վրայ ելան ) ծառայք տանն՝ յարուցանել զնա (¹) , և ոչ կամէր յառնել 'ի գետնոյն , և ոչ եկեր ընդ նոսա հաց ։ Եւ եղեւ յաւուրն եօթներորդի մեռանել մանկանն (²) . և երկեան ծառայքն Դաւ-թի պատմել նմա ։ Եւ տես Դաւիթ եթէ շշնջեն ծառայք նորա և իմացաւ եթէ մեռաւ մանուկն . յարեաւ 'ի գետնոյն , լուացաւ և օծաւ , փոխեաց զհանդերձս իւր , և եմուտ 'ի տունն Աստուծոյ և երկիր եպագ նմա . եմուտ 'ի տուն իւր և խնդրեաց հաց ուտել , և եդին առաջի նորա հաց և ե-կեր ։ Ասեն ցնա ծառայքն իւր . Զինչ է բանդ այդ զոր ա-րարեր վասն մանկանն , մինչդեռ կենդանին էր , պահէիր և լայիր և տքնէիր , և իբրեւ մեռաւ մանուկն , յարեար կերար և արբեր ։ Եւ ասէ Դաւիթ , Մինչդեռ կենդանի էր մանուկն , պահէի և լայի , քանզի ասէի՝ Ո՛ գիտէ , ողոր-մեսցի Տէր և կեցցէ մանուկն ։ Արդ որովհետեւ մեռաւ մա-նուկն , ես ընդէ՞ր պահիցեմ , միթէ կարօղ իցեմ դարձու-ցանել զնա այսրէն ..ես առ նա երթալոց եմ , և նա առ իս ոչ դարձցի ։*

*Բ. Թագ. ԺԲ.* 15–23

---

(¹) Երբեմն անորոշ դերբայ մը առանց իր վրայ ’ի կամ — ։ նախդիրներն ունենալու՝ եթէ իրմէ առաջ գտնուող դիմաւոր բայի մը հետ կապուած ըլլայ , հա-մաչով կը թարգմանուի ։ Ուստի օրինակին մէջ յարուցանել զնա կը թարգմանուի ( զա-նի ոտք հանելու համար ) . իբրեւ թէ գրուած ըլլար՝ կամ յարուցանելոյ , 'ի յարուցանել կամ — 'ի յարուցանելոյ եւ այլն ։

(²) Տես 15 էջ 2 կանոն ։

## 48

### ՉՈՐԵՑՈՒՆՑ ԵՂԱՆԱԿԱՑ ԸՆԴ ԻՐԵԱՐՍ ՎԷՃ

Նաժիշտ, աղախին
Արփին, արև
Ճեմ, քայլուածք
Արօտ, խոտաւէտ դաշտ
Երփն, գոյն (գեղեցիկ)
Շող, ճառագայթ
Բոցակէզ, բոցէ դեռ այրող
Սիգաճեմ. հպարտութեամբ քայլող
Դէզ. կոյտ (երդիկ)
Նորափետուր. նոր է դեռ եկած
Հասկ. ցորենի ծղօտ
Վայր, տեղ, դաշտ

Անդուստ, անդին
Վէճ առնել, վիճաբանիլ
Լուսատու, լոյս տուող
Ջուարթարար, ուրախացնող
Դաշն (մկ.) ձայն յօրինուած
Արմաւիք, երկար ճիւղ. (ցորեն,
Ոսկեձեւ, ոսկին ձեւով [ դեղին և այլն )
Կութք, կթոց (դաշտ դօտնեց)
Նախամեծար առնել, գերադասել
[ առաջ դասել
Արհամարհ, անարգ. անարգող
Սառամանիք, (ցուրտ)

---

*Նաժիշտք արփւոյն չորեքին*
*Որ իշխեցողք են տարւոյն,*
*Մին որ 'ի ճեմ իւր ոտին (1)*
*Պըճնէ զարօտ երփն 'ի գոյն :*
*Երկրորդն 'ի շող բոցակէզ,*
*Միւսն ողկուզովք սիգաճեմ,*
*Չորրորդն 'ի ձեանց բազմեալ դէզ, (2)*
*Տային ձեանց-վէճ ընդդէմ (3) :*
*Նորափետուր՝ մին ինեւ*
*Ասէր ; երկիր զարդարի (4),*
*Միւսն այն (5)՝ թէ զհասկ ոսկեձեւ*
*Ես ներկանեմ 'ի վայրի :*

---

(1) Ի ճեմ բառը նախդիւ տրական դրուած է փոխանակ գործիականի : ( Տես 56 էջ 5 կանոն ) :

(2) փոխանակ ըսելու. Չորրորդն բազմեալ 'ի դէզս ձեանց : ( Տես 48 էջ 4 կանոն ) :

(3) Ձեանց խնդիրն հեռացած է ընդդէմ նախադրութենէն :

(4) Այսպէս կարդա՛. Ասէր մին, ինեւ նորափետուր զարդարի երկիր :

(5) Հոս բայը զեղչեալ է. Միւսն այն ասէր, եւայլն :

Նախանձընդդէմ երկոցուն՝
Անդուստ և միւսըն պանծայր
Գոլ լուսատու ծիթենւոյն
Եւ զուարթարար որթոյ մայր (6) ։
Զորրորդն յայնժամ դաշն և հեզ
Ջայնեալ առ քորմն իւր ասէր.
Թող արմըտիք կացցեն ձեզ
Ծաղկունք և կութք այգեբեր ։
Այլ Տէրն 'ի գալ իւր յաշխարհ
Առ 'ի ծնանել տղայաբար,
Նախամեծար զարհամարհ
Սառամանիսն իմ արար (7) ։

49

## ՀԱՒԱՏՔ ԱԲՐԱՀԱՄՈՒ

| | |
|---|---|
| Մխել զձեռն, յետ դարձնել | Ափն, եզերք |
| Խոյ, արու ոչխար (խոչ) | Աւազ, (կում) |
| Զգել, երկնցնել | Հանել յողջակէզ, զոհ ընել |

փորձեաց Աստուած զԱբրահամ և ասէ. Ա՛ռ դու զորդի քո սիրելի՝ զԻսահակ (1), և հանցես զդա յողջակէզ ։ Ցարեաւ Աբրահամ, առ զփայտ ողջակիզին և եդ 'ի վերայ Իսահակայ, առ 'ի ձեռն զհուրն և զսուրն, և գնացին երկոքեան 'ի մի-ասին ։ Եկին 'ի տեղին՝ զոր ասաց նմա Աստուած ։ Անդ շին-

(6) Այսպէս կարդա՛. Միւսն պանծայր զի մայր էր լուսատու ձիթենւոյն եւ զուարթարար որթոյ ։

(7) Նախամեծար արար զարհամարհ սառամանիսն իմ ։

(1) Բացայայտիչ եւ բացայայտեալ մի եւ նոյն հոլովով կրնան դրուիլ ։ (Տես 13 էջ 1 կանոն) ։

եաց սեղան Աբրահամ, եդ 'ի վերայ զփայտն, կապեաց զԻ-սահակ զորդի իւր, և եդ զնա 'ի սեղանն 'ի վերայ փայտին։ Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զենուլ զորդին իւր։ Կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ. Մի՛ մխեր զձեռն քո 'ի պատանեակդ, զի այժմ գիտացի թէ եր-կիւղած ես դու յԱստուծոյ (2), և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սի-րելւոյ։ Համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես խոյ մի կախեալ զծառոյն Սաբեկայ յեղջերաց (3)։ Առ զխոյն և եհան զնա յողջակէզ։ Կոչեաց Հրեշտակ Տեառն զԱբրահամ յերկնից և ասէ. Յան-ձըն իմ երդուայ, ասէ Տէր, փոխանակ զի ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վասն իմ, օրհնեցից զքեզ և բազմացու-ցից զզաւակ քո՝ որպէս զաստեղս երկնից և որպէս զաւազ առ ափն ծովու, և օրհնեսցին 'ի զաւակի քում ամենայն ազգք երկրի։ Ծննդ. ԻԲ.

50

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՒՐ

| | |
|---|---|
| Զրոյց, լուր | Առաքել, (մարդ) ղրկել |
| Խորհուրդ 'ի մէջ առնուլ, խոր- [հուրդ ընել | Շնորհս գտանել, շնորհք գտնել, [սիրելի ըլլալ |
| Ձգել, վար նետել | Ուլ, այծու ձագ |
| Մերկանալ, հանել (հանդերձը) | Կացուցանել, հաստատել |
| Թաթաւել, թաթխել | Ընկենուլ, ձգել, նետել |

Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն զորդի-սըն իւր։ Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր։ Եւ գը-նացին արածել զխաշինս հօրն իւրեանց։ Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. Երթ, տես եթէ ո՞ղջ իցեն եղբարքն քո և խաշինք, և բեր ինձ զրոյց։ Տեսին զնա եղբարքն յառաջագոյն 'ի հե-

(2) Տես 45 էջ 5 կանոն։

(3) Կախել, կապել, առնել, բառնալ կալանել (բռնել) բայերն ՚ի նախդրով առանց է ի բացառական բնութեան խնդիր կ՚առնուն։

ռաստանէ, խորհուրդ վատ 'ի մէջ առին՝ սպանանել զնա ։ Եւ իբրեւ եկն Յովսէփ, մերկացին զպատմուճանն նորա 'ի նմանէ, և առին ընկեցին զնա 'ի գուբն, և նստան ուտել զհացն ։ Եւ անցանէին արք Մադիանացիք վաճառականք ։ Ասէ Յուդա ցեղբարսն իւր․ Զի՞նչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր․ եկայք վաճառեսցուք զնա Իսմայելացւոց ։ Եւ լուան նմա եղբարքն իւր, ձգեցին հանին զՅովսէփ 'ի գբոյ անտի, և վաճառեցին Իսմայելացւոցն քսան դահեկանի (1) ։ Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ, զենին ուլ այծեաց, թաթաւեցին զպատմուճանն յարեանն, և առաքեցին առ հայրն իւրեանց և ասեն․ Զայդ գտաք, ծանիր եթէ որդւո՞յ քոյ իցէ ։ Եւ ծանեաւ զնա և ասէ․ Պատմուճանս որդւոյ իմոյ է․ գազան չար եկեր զնա ։ Պատառեաց զհանդերձս իւր և սուգ ունէր 'ի վերայ որդւոյն իւրոյ ։ Իսկ Մադիանացիքն վաճառեցին զՅովսէփ յԵգիպտոս՝ Պետափրեայ դահճապետի փարաւոնի ։ Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, և եգիտ շնորհս առաջի Տեառն իւրոյ, և կացոյց զնա 'ի վերայ տան իւրոյ և զամենայն ինչ ետ 'ի ձեռս Յովսեփայ ։ Եւ եղեւ օրհնութիւն Տեառն 'ի վերայ ամենայն ընչից նորա 'ի տան և յանդի ։

Ծննդ․ ԼԷ-ԼԹ

(1) Տես 26 էջ 6 կանոն ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մինչեւ ցայսր նախընթաց Օրինակաց ներքեւ Քերականութեան Համաձայնութեան այնչափ ինչ կանոններն աւանդել հարկ համարեցի, որչափ կարեւոր էր աշակերտի մը եւ միանգամայն կարելի ուսանել Ա. Տարւոյ շրջանին մէջ ։

Թէպէտ աստի եւ անդր գտնուած հատուածք քերականական բացատրութենէ զուրկ են, բայց աւելորդ է ըսել թէ դասախօսը պէտք է որ իբրեւ քաղուած հետագայ դասուց մէջ ալ պահանջէ նախագրեալ կանոններն՝ որպէս զի ուսանողք կարող ըլլան քաջ ըմբռնել ։

Աշակերտք կրնան 'ի բերան ուսանել գրքուկիս մէջ ամփոփուած չափաբերեալ առակներն, եւ երբեմն փոխել զայնս յարձակ բան ։

1

## ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ՄԱՀ

Պարտասիլ, յոգնիլ
Հարկիլ, ապշոտիլ
Դնել յերկիր, գետինը դնել

Ցանդիման, դէմացը
Չարաբաստիկ, դժբախտ
Եղկելի, ողորմ

Ի միում աւուրց Ծերունի ոմն հատեալ փայտ յանտառէ և բարձեալ 'ի յուս բերէր զայն 'ի տուն, այլ յընդերկար ընթացիցն պարտասեալ հարկեցաւ դնել յերկիր զբեռն իւր ; և սկսաւ յօգնութիւն կարդալ զՄահ ։ Եւ ահա յանդիման եկն եկ երեւեցաւ նմա Մահ, և եհարց ցնա թէ առ Բ՞նչ կոչէր զնա ։ Ցայնժամ Ծերունւոյն զահի հարեալ՝ պատասխանի ետ նմա և ասէ. « Զի տացես յուս զբեռն իմ » ։

Բարոյական. Ցուցանէ առակս զի ամենայն ոք սիրէ զկեանս ; թէպէտեւ իցէ չարաբաստիկ և եղկելի ։

2

## ԲԱԴ ԵՒ ԽՂՈՒՆՋՆ

Ողոքել, աղաչել, մէկուն խնդրել
Խղնջիւն, (սոյլանկօղ)
Ցօղել, ցօղ դնել իջնել
Ճեմել, քալել
Պատուասէր, պատիւ սիրող
Ստապատիր, սուտ և խաբեբայ

Ի՞բր, ի՞նչպէս
Ցռուկ, քիթ
Կափկափել, կրակը զարնել
Ամբառնալ, աղահով պահուըտել
Ջրահամորթ, մորթը եղկակին նման
Շողոմք, կեղծաւոր խօսքեր

Ողոքէր Բադ ըզԽըղընջիւն ասելով.
« Արի եկ ով Խըղընջունի, ցօղէ անձրեւ ցօղադին,
Եւ դու արտաքս 'ի ճեմ զի զքեզ պատուեցից » ։

իսկ նա ասէ. «Ջիք իմ առ այլս ընդքեզ տեսեալ պատուասէր
Եւ երբ առ իս յանկարծակի լինիցիս,
Բայց թէ զցրուուկ քո կափկափես արեան իմոյ ծարաւի»։
Ասաց և խոյս ետ ամրացաւ 'ի գրահամորթ պատեանին։
Խրատէ առակս ընդդուշանալ 'ի ստապատիր շողոմից։

3

## ԱՌԻՒԾ, ԷՇ ԵՒ ԱՂՈՒԷՍ

| | |
|---|---|
| Ընկերշակել, ընկեր լինել՝ ժողովուել | Բրդել 'ի գայրոյթ, բարկանալ |
| Երէ վայրի, վայրի որսի անասուն | Բաժանարար, բաժին ընող [բաժանօղ] |
| Աղէտք, չարիք, ճշուառութիւն | Գիշատել, բզքտել |

Առիւծ, էշ և Աղուէս ընկերշակեալ ընդ միմեանս՝ ելին յորս։ Ըմբռնեալն իւրեանց երէ վայրի, հրամայեաց Առիւծ Իշոյ՝ առնել զբաժին աւարին։ Սորա յերեսին հաւասար մասունս կոտորեալ զայն՝ հրաւիրէր զնոսա յընտրութիւն։ Բայց Առիւծու բրդեալ 'ի զայրոյթ գիշատեաց զնա։

Ապա յանձն արար Աղուեսու բաժանել զայն. իսկ նա զամենայն ժողովեալ 'ի մի մասն և եթ, դոյզն ինչ եթող իւր 'ի բաժին։ Յայնժամ ասէ ցնա Առիւծ. «Եւ ո՞ ուսոյց քեզ, սիրեցեալդ իմ, այդպէս լինել բաժանարար»։ Նա պատասխանի ետ և ասէ. «Անցք որ ընդ էշ անցին»։

Բարոյական. Վկայէ առակս զի աղէտք դրացեաց իմաստուն խրատք են մարդկան։

## 4

### ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ՊԱՐՏԱՏԷՐՆ

Զգենուլ , հագնիլ
Պատառատուն . պատռտուած
Բոլորք , ամէն ոք
Յղել եկակոչ , դատի կանչել

Ակմբահոյլ , բոլորը մէկտեղ ժողով-
Չէր վայել , չէր վայլեր [ուած
Յամօթ լինել , ամչնալ
Աղագաւ , (նխ.) համար

---

Լաւ է զգենուլ աղքատ քան գոլ պարտապան :
Խրատեալ երբեմն յիւրոց անտի բարեկամաց Նասրէտտին ,
Զի չէր վայել շըրջել նըմա պատառատուն ըզգեստուք ,
Որ հանճարովն էր բոլորից մեծարոյ .
« Բարւոք խրատէք » ասաց , և ել 'ի շուկայն՝
Առնուլ իւր ձորձըս վայելուչըս պարտեօք :
Յետ ոչ բազում աւուրց մինչ կայր յակըմբահոյլ ժողովի ,
Գայ պահանջել դերձակն ըզգինս ըզգեստուն ,
Ըսպառնալով յըղել առ նա եկակոչ :
Յայնժամ յամօթ լեալ Ծերունին՝ « Ո՞չ , ասէ , այսր աղագաւ
Պատառատուն յանձն առնուի շըրջել քան գոլ պարտապան » :

## 5

### ԱՅԳԻ

Պարզել ոգւոց , հոգին տալը
Հիւղ , խրճիթ
Ուրանօր , ուր տեղը

Խարխարել , փորել ու վրայ ընել (հողը)
Պատառել յակօսս , ակօս ակօս ընել
Ի միտ առնուլ , հասկնալ

Տալ իմանալ , հասկցնել

---

Ի պարզել ոգւոցն ասէր հայր մի ցերեսուն որդիս իւր .
« Սիրեցեալ որդեակք իմ, չունիմ այլ ինչ թողուլ ձեզ բայց

միայն զհիւղս զայս՝ և զայգին որ շուրջ զնովաւ, ուրանօր է գանձ ծածկեալ: Սկսարուք վարել զերկիրն անդուլ, և անշուշտ լիցի ձեզ գտանել զայն »:

Ցետ մահուան հօրն, որդիք նորա փութացան յառաջ քան զամենայն խարխարել զայգին բովանդակ, և չգտին անդ ոսկի կամ արծաթ. այլ զի չէր նոցա երբէք պատահեալ յակօսս զայգին այնքան խնամովք, 'ի նմին ամի եբեր առատ ողկոյզս խաղողոյ, որ 'ի զարմացումն եղեւ նոցա և յերջանկութիւն միանգամայն:

Յայնժամ 'ի միտ առին թէ զի՛նչ հայր իւրեանց տայր նոցա իմանալ գանձիւն ծածկելով:

6

## ԵՍՈՎՊՈՍ ԵՒ ՍՏԱՀԱԿ

| | |
|---|---|
| Յոգն, ունք, շատ | Մարթ է, կարելի է |
| Հրապուրել, համոզել (գէշ բանի) | Պատրել, խաբել |
| Դանկ, ստակ | Պատուհաս, պատիժ |
| Փարթամ, հարուստ | Կախաղան, մարդ կախելու գործիք |
| Ժպիրհ, գոռոզ, յանդուգն | Վրէժ տալ, պատիժը կրել |

Յաջողութիւն զյոգունս 'ի վնաս հրապուրէ:
Ոմն ըստահակ եհար քարամբ զԵսովպոս.
Իսկ նա՝ « Կեցցես » ասէ, տուեալ նմա դանկ,
Եւ յաւելու. « Աւելի ինչ ոչ ունիմ՝,
Բայց ուսուցից ուստի՛ քեզ մարթ է առնուլ:
Ահա հըզօր ոք և փարթամ հասեալ գայ,
Ըզնա նոյնպէս հա՛ր քարիւ,
Եւ զարժանին ընդունիցիս փոխարէն »:
Հաւանեցաւ նա և արար ըստ խրատուն,
Այլ ըզժըպիրհ յանդըգնութիւն պատրեաց յոյս.
Քանզի ածեալ 'ի պատուհաս կախաղանաւ ետ վրէժ:

## 7

### ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿ

| | |
|---|---|
| Մխիլ, մէջը մտնել (պաթմաք) | Շարժիլ 'ի ծիծաղ, խնդալ |
| Մուծանել, մտցնել | Ատամն, ակռայ |
| Երկայնամիտ, երկայն | Զերծուցանել, ազատել |
| Պայմանեալ, պայմանաւ հաստատուած | Ակնարկել, նայիլ, դիտել |

Շնորհապարտութիւն, երախտագիտութիւն

---

Մխեալ կայր ոսկր 'ի կոկորդ Գայլոյ՝ որ վարձս խոստացաւ կռնկան եթէ կամէր մուծանել զկտուց իւր 'ի ներքս՝ հանել զոսկր յորկորոյն։ Երկայնամիտ ուլամբն յաջողեաց նմա խլել զայն 'ի բաց, և խնդրէր 'ի նմանէ զպայմանեալն վարձ։ Շարժեալ նորա 'ի ծիծաղ՝ և ապա կրճտեալ զատամունս իւր, ասէ ցնա. «Բաւական համարեսջիր քեզ վարձ զերծուցանել յորկորոյ և յատամանց Գայլոյ զգլուխ քո ողջ և անվնաս և առանց ինչ չարի»։

Բարոյականն. Ակնարկէ առակս 'ի խաբեբայս ոմանս՝ որ զերծեալք 'ի վտանգաց՝ այսպէս իմն յայտ առնեն զշնորհապարտութիւն առ բարերարս իւրեանց։

~~~~~~~~~~~

## 8

### ԱՐՋ ՍՈՎԵԱԼ

| | |
|---|---|
| Ճարակ, ուտելիք | Նենգախոշոշ, խաբէութեամբ լը- |
| Ժայռուտ, քարոտ | ժժմակ, ճճի (զեռուն) [ղանող |
| Զկայ առնուլ, կոյնել | Հուն, ջրի անցք, ջրին երեսէն փեղը |
| Մխրճել, խոթել (ջրոյն մէջ) | Կռուել, ճակտել |
| Աւարառեալ, կողոպտուած | Հաս եւ խած լինել, ագահութեամբ |
| Ըմբոշխնել, ճաշակել, համը առնուլ | Ընդոստնուլ, ցատքել [ուտել |

---
~~~~~~~~~~~

Արջ 'ի մայրիս եթէ երբէք ոչ գըտանէ իւր ճարակ,
Ի ծովափն ուրեք դիմեալ 'ի ժայռուտ՝
Եւ զկայ առեալ 'ի վիմի,
Տակաւ ըզսրունսըն մըխըրճէ անդր 'ի հուն.
Եւ 'ի գալ խեչափառից կըռուել յոտիցն 'ի մուշտակ,
Անդէն ընդոստ 'ի ցամաք
Ջաւարառեալ ժըժմակսն 'ի բաց թօթափէ,
Եւ ըմբոշխնէ նենգախոշոշն եղեալ նոցին հաս և խած.
Այսպէս քաղցոյ և զանմըտին սրելով զուշ:

~~~~~~~~~~

## 9

## ԿՐԻԱՅ ԵՒ ԱՐՃԻՒ

| | |
|---|---|
| Ի դէմս ածել, առաջի դնել, ա- | Մագիլ, ճիրան (ճանկ) |
| Աղերսել, աղաչել [ռաչել | Ի դէպ ելանել, յաջողել ելք |
| Յոգնաթախանձ, շատ աղաչանօք | Ի պայքար մտանել, կռուել (խօս- |
| Յանձն գլել, իր վրան ձգել՝ բերել | [քով) |

---

Աղաչէր Կրիայ զԱրծիւ զի ուսուսցէ նմա թռանել ընդ օդս: Եւ մինչդեռ 'ի դէմս ածէր Արծիւ եթէ անհնար էր ազգի կրիայից յաջողել յայնպիսի ինչ, նա առաւել եւս յոգնաթախանձ աղերսէր: Յայնժամ արծուոյ կալեալ 'ի մէջ մագլացն՝ ամբարձ զնա յօդս 'ի վեր և ապա եթող 'ի վայր: Անկաւ Կրիայ 'ի վերայ ժայռից, և ջախջախեցաւ պատեաննորա:

Բարոյական. Ի դէպ ելանէ առակս այս բազմաց՝ որ ոչ լսեն բանից իմաստնոց, և 'ի պայքար մտեալ՝ յանձինս գլեն ըզ վտանգ:

~~~~~~~~~~

## 10

### ԱՆՄԻՏ ԻՆՔՆԱՄԱՑՆ

| | |
|---|---|
| Հաւաստիք, փորձ, ճշմարտութիւն | Ալիք, ճերմակ մազեր |
| Կղակ, ծնօտ | Ի ստորև, տակը, վար |
| Հուր առնուլ, բռնկիլ | Ինձէն (մկ.) իմ յետոյ |

Զանմտութեան իւրոյ ինքնին իսկ տայ անմիտն հաւաստիս ։
Ի մատենի ուրեմն անմիտն ընթերցեալ,
Զի կարճամիտ յաճախ գտանին որոց երկայն է կըղակ,
Ա՛ռ հայելի, և զի գիտէր էր միթին
կալեալ միւսով ձեռամբ ըզճրագ, մինչ ըզկըղակ իւր զըննէր ․
Ցանկարծակի հուր 'ի ճրագէն առեալ ալիքըն կիզան ։
Ցայնժամ յաւել նա 'ի ստորև մատենին ։
« Այո՛, այդպէս է, վըկայեմ, ըզփորձ առեալ և ինձէն » ։

## 11

### ԳԱՅԼ ԵՒ ՊԱՌԱՒ

| | |
|---|---|
| Բռնադատիլ, ստիպուիլ | Գգուել 'ի գիրկս, գրկացը մէջ ա- |
| Ա՛րդ եւս, հիմա | Այլազգ, ուրիշ տեսակ [ռած սիրել |
| Կուր, կերակուր | Իրք, գործք |

Հանդէտ, նման, հաւասար

Գայլ 'ի սովոյ բռնադատեալ այսր և անդր գնայր 'ի խընդիր մննդեան ։ Հասեալ 'ի տեղի ուրեք՝ լուաւ զի մանուկ ումն լայր և կին մի Պառաւ ասէր ցնա ․ « Դադարեա՛ց 'ի լալոյդ, եթէ ոչ ա՛րդ եւս արկից զքեզ կուր գայլոյ » ։

Համարելով սորա զի ճշմարտութեամբ խնչ ասէր Պառաւն, ընդերկար սպասեալ մնայր անդ ։ Այլ 'ի հասանել երեկոյի, լուաւ դարձեալ զի Պառաւոյն գգուեալ 'ի գիրկս զմանուկն ասէր ցնա ․ « Սիրեցեալդ իմ թոռնեակ, եթէ ե-

կեսցէ այր գայլ, մեք սպանցուք զնա »: Ի լուր բանիցս այսոցիկ 'ի բաց գնաց Գայլ ասելով. « Այլազգ բանք և այլազգ լինին իրք 'ի տանս յայսմիկ »:

Բարոյական. Առակս այս այնոցիկ է՝ որոց գործք ոչ համեմատ գտանին բանից նոցա:

12

## ԽՈԶ ԵՒ ՔԱՂԴԵԱՑ

Քաղդեայ, աստղաբաշխ
Արփի, աստղ
Երկնապիշ, աչքերը երկինք տնկած
Խոյզ, փնտռելը
Բուտ, ծարաւ
Երկրաբեր, հող բերող
Ուլն, ան. ճիտ, վիզ
Անշրջելի, չդարձող
Ակահ, փեղկած
Ի ճահ (մկ.), յարմար
Երկրաքարշ, սողացող, մողէզ
Անճաշակ, համը չառնող
Բնաւորիլ, բնակարան ըլլալ

Խոզի յուսումն երթեալ առ ոտըս քաղդեայց,
Գիտել զարփից շըրջան, լինել աստղաբաշխ,
Հրամայեցաւ դիտել զաստեղս երկնապիշ.
Եւ 'ի չկարելն հայել 'ի վեր ընդ երկին,
Զի ցռուկ 'ի խոյզ և եթ բըտոյ տըւաւ նմա երկրաբեր,
Ուլանն 'ի վեր անշըրջելի բնաւորեալ,
Պատգամ նըմին ետ վարժապետըն քաղդեայ.
« Երկրաւորին գոլով քո յար 'ի խընդիր,
Երկնաւորաց վասն այնորիկ չես ակահ »:
Ի ճահ առակս այս այնոցիկ պատահէ,
Որք երկրաքարշ վարեն կենցաղ՝ երկնաւորաց անճաշակք:

## 13

### ԵՂՆ ԵՒ ՈՐԹԱՏՈՒՆԿ

| | |
|---|---|
| Եղն, (կէյիկ) | Սաղարթ, տերեւ |
| Վարիլ, քշուիլ, հալածուիլ | Ղօղեալ, պահուըտած |
| Որթատունկ, (ասմա) | Զայս օրինակ, այսպէս, այս օրէ- [նակ |
| Ոչ ինչ անտի 'ի բացեայ, անկէ [ոչ հեռու, այսինքն՝ մօտէն | Ցետկոյս (Նախ.) ետեւը |
| Տատանումն, շարժելը | Զարուք գնալ, ետ քաշուիլ |
| | Միանգամ, մէյ մը |

Եղն հալածական վարեալ յորսորդաց ումանց թաքեաւ ընդ միով յորթատնկոց ։ Եւ իբրեւ անցին նոքա ընդ այն՝ ոչ ինչ անտի 'ի բացեայ, յապահովլի եւ 'ի թաքստեան համարեալ նա զանձն իւր 'ի ժամէ անտի՝ սկսաւ ճարակել զտերեւս որթատնկոյն, բայց 'ի տատանմանէ սաղարթուցն՝ յետս դարձան որսորդքն, եւ կարծէին՝ որպէս եւ էր իսկ՝ զի անասուն մի ղօղեալ կայր յետկոյս տերեւոցն, եւ սպանին զեղնն 'ի հարուած նետից ։ Ի մեռանել իւրում զայս օրինակ բարբառէր նա եւ ասէր ․ « Արդարագոյն կրեմ պատուհաս, զի չէր պարտ չարուք գնալ ընդ որում փրկեացն զիս » ։

*Բարոյականն* ․ Խրատեայց այսու առակաւ, զի պատուհասէ Աստուած զայնոսիկ՝ որ թէ միանգամ բարերարաց իւրեանց գործիցեն վնաս ։

## 14

### ՆԱՄՐԷՑՏԻՆ ԵՒ ԿՈՉՆԱԿԱՆՔ

| | |
|---|---|
| Ծոխութիւն, հարստութիւն | Համեմք, կերակրոյ համ տուողները, [համեմուած |
| Առաջիկայ, ներկայ, առջեւ կեցող | Պաշտել, պատրաստուիլ |
| Ընծայել 'ի ճաշակ, ուտելու հա- [մար տալ | Համադամ, ընտիր կերակուր |
| Այլուր, ուրիշ տեղ | Ելեւելս առնել զիրերօք, իրարու [հետ մրցիլ |
| Սամոյր, սամոյր (քէօրք) | |

Ի սպաս նորին, անոր ծառայելու համար

Զի ճոխութիւն յաճախ ուրեք քան ըղձանճար մեծարի ,
Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ ։

Երթեալ երբեմն Նասրէտտին
Հրաւիրանաւ 'ի ճաշ ընդ այլ կոչնականս ,
Եւ զի չէր ճոխ հանդոյն այլոց ըզգեցեալ ,
Ոչ ոք ըզնա պատուասիրեալ մեծարէր ,
Ոչ ընծայէր ինչ ոք նըմա 'ի ճաշակ ։
Իսկ միւսանգամ այլուր 'ի ճաշ հրաւիրեալ ,
Զոդաւ հանդերձս 'ի փոխ առեալ , արկեալ սամոյր մեծագին ։
Գըսակէին բաժակք , պաշտէր համադամ ,
Եւ ելեւելըս զիրերօք մինչ առնէին կոչնականք
Ի սպաս նորին և համեմոց 'ի հրաւէր ,
Ինքն առ նոսա ըզձորձս յառաջ մատուցեալ ,
« Կերայք , ասէ , ձորձք իմ , սամոյր իմ դու կեր » ․
Ցայտ իմն այսպէս արարեալ ,
Զի ոչ վասն իւր ինչ մեծարէր 'ի նոցունց ,
Այլ վասն ընչից՝ ճոխ 'ի ձեւոյն կարծեցեալ ։

15

## ԷՇ ԵՒ ԱՂՈՒԷՍ

| | |
|---|---|
| Արկանել զանձամբ , հագնել | Յականջալուրս հասանել , լսել |
| Ողջոյն , բոլոր | Խանչիւն , զռինչ |
| Ահ արկանել , վախցնել | Սնապարծութիւն , փուճ պարծանք |

Ծաղր կալ , ծաղրել

Մորթ առիւծենի արկեալ զանձամբ էշ՝ ընթանայր ընդդաւառն ողջոյն՝ ահ արկանելով այլոց կենդանեաց ։

Ետես 'ի հեռուստ զԱղուէս , և փորձ փորձեաց 'ի նա եւս աղդել երկիւղ ․ բայց սա , զի լուեալ էր յառաջագոյն զձայն նորա՝ ասէ ցնա « Սակայն լեր դու վստահ , զի և ես զարհուրեալ փախչէի եթէ չէր ինձ յականջալուրս հասեալ քոյդ խանչիւն » ։

Բարոյական ․ Վկայէ առակս ՝զի տգէտք ոմանք սնապարծութեամբ իւրեանց պատրեն զանծանօթս , այլ ծաղր կան ծանօթից ։

16

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

| | |
|---|---|
| Արագիլ, (լէյլէկ) | Ումպ, խմելիք |
| Տուժել, վնաս ընել | Ի մէջ մատուցանել, մէջտեղ բերել |
| Ասի, կ'ըսուի թէ | Ցագուրդ, կշտանալը |
| Լոյծ, հալած (ջրոտ) | Սովալլուկ, անօթութենէ մղկտող |

Ջքնաղագիւտ, հազուագիւտ

---

Խրատէ առակս երբէք ումեք մի՛ վնասել,
Իսկ որ վնասէն՝ արդարապէս տուժեսցի ։
Աղուէսու ասի 'ի ճաշ նախ հրաւիրեալ զԱրագիլ,
Պատրաստելով նըմա ումպ լոյծ 'ի պնակի,
Զոր ճաշակել երբէք նըմա չէր հընար ։
Հրաւէր ապա արար և ինքն արագիլ,
Եւ մատուցեալ լի փըշրանօք շիշ 'ի մէջ,
Կըտուց 'ի ներքս արկանէ ինքն 'ի յագուրդ,
Սովալըլուկ ըղճաշակից իւր թողեալ ։
Եւ մինչ 'ի զուր լիզոյր նա զուլն անօթոյն,
Աւանդի չըքնաղադիւտ հաւուոյն այսպէս խօսեցեալ.
« Համբերութեամբ պարտի կըրել որ ինչ այլում ոք արար » ։

17

## ՇՈՒՆ, ԱԳԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԷՍ

| | |
|---|---|
| Դաշն կռել, խոստում ընել | Ցանկալի էր նմա, շատ կը փափա- [քէր |
| Ցուցի անկանել, ճամբայ ելնել | Ոսոխ, թշնամի |
| Փապար, խոռոչ, ծակ | Գիրկս արկանել, գրկել |
| Ջհասարակ գիշերաւ, կէս գիշերուան | Ցեղանակել, երգել |
| Ցեղակարծ, յանկարծ | Խոյանալ, վազել, վրան յարձակել |
| Զրճելատամնացի, ակռայով բռնուած | Ի կիր արկանել, գործածել |
| Բարապան, դռնապան | Ճարտարամիտ, խելացի |

Գուն գործել, ջանալ, ճիգ ընել

---

Շուն և Ագռաւ դաշն բարեկամութեան ընդ միմեա[նս] կռեալ՝ անկան յուղի ։ Իբրև 'ի վերայ եհաս գիշեր, երկ[ու]քանչիւրն 'ի քուն մտին, հանգեաւ Ագռաւ 'ի վերայ ծ[առ]ոյ միոյ և Շուն առ ոտամբ նորին՝ յորում գտանէր փապ[ուղ] մի ։ Ի խօսել Ագռաւին զհասարակ գիշերաւ՝ որպէս սովոր[էր], լուաւ Աղուէս զձայն նորա, և դիմեաց յայնկոյս, և [ն]երքոյ ծառոյն կացեալ՝ աղաչէր զնա զի իջցէ 'ի վայր, յաւելոյր թէ յոյժ ցանկալի էր նմա գիրկս արկանել զկե[ր]դանւով՝ որ այնպէս քաղցրաձայն յեղանակէ ։ Ասաց ցնա Ա[գ]ռաւ՝ զարթուցանել նախ զդռնապանն՝ որ ննջէր առ ըստորոտով ծառոյն, զի կարասցէ իջանել, եթէ բանայր նմա ։ Եւ մինչդեռ գուն գործէր Աղուէս արտաքս զբարապանն կոչել, խոյացաւ Շուն յեղակարծ 'ի վերայ նորա և գիշատեաց զնա ձրձեալ ատամնացի ։

*Բարոյական*. Ցուցանէ առակս զի արք զգուշաւորք 'ի կեղ[ծ] արկանեն բանս ճարտարամիտս, առ 'ի հանել ընդդէմ ո[ւ]սոխաց իւրեանց՝ զօրաւորագոյն թշնամիս ։

~~~~~~~~~~

## 18

## ԴԱՄՈՆ, ՏԻՐԱՆ ԵՒ ՄԱՐԴԻԿ

Դամոն, ապուշ (պարզամիտ էշէկ)
Հարկանել, առնուլ զատամունս, [ ակռան առնել
Թանչք, չարչարութիւն
Լործել, ակռան առնել
Ծլով, իբր գոլով լինելով

Տարապարտուց, պարապ տեղը
Դատափետ լինել, խիստ [illegible] [ [illegible] ենթարկուիլ
Բերկրութիւն, ուրախութիւն
Զառածանիլ 'ի չարիս, չարութեան [ մէջ [illegible]

Դժնդակ, գէշ, ծանր

---

Ամբաստանեալ յումանց դամոն և ծիրան
Ձի զատամունս կերողաց հարկանեն,
Պատասխանի ետուն նոցա և ասեն.
~~~~~~~~~~

Գիտեն հրմուտք 'ի բըժըշկաց զի մեք դըրդուիչ եմք թանչից ,
Որդ թէ լորճեմք , և զմեզ մարդիկ սակայն ուտել յաճախեն .
Զինչ առնէին թէ զկերողաց ոչ առնուաք զատամունս ։
Շնորհակալեաց ուրեմն եղով արժանիք ,
Տարապարտուց լինիմք 'ի ձեռն դատափետք » ։
Առակս 'ի դէպ գայ բերկրութեանց աշխարհի ,
Որոց կըցորդք գոլով աղէտք դըժընդակք ,
Զառածանեն միշտ զանըզգոյշս 'ի չարիս .
Զիցէ՞ արժան մեզ գոհանալ զԱրարչէն ,
Զի զփուշ ընդ վարդ , և զցաւ խառնէ ընդ հաճոյս ։

~~~~~~~~~~

## 19

## ԹՌՉՈՒՆՆ ԿԱՐՄՐԱԼԱՆՋ

Կարմրալանջ , կուրծքը կարմիր թռ-
[ չուն (սախա )
Տարափք ( [illegible] )
Ճնշել , ճզմել
Ընդելանալ , վարժուիլ
Ունդ , հունտ
Կարկառել , յառաջ երկնցնել
Լուծանել , հալել
Ցանկ , ( չիթ )
Հրճուիլ , ուրախանալ
Կենակից , ընկեր , ամուսին
Աներկեւան , անկասկած
Ցածել , [illegible]
Խրտչել , ( խրտնիլ )
Թեւածել , թռչիլ
Ցօղել բարբառ , խօսիլ

---

" Դըկ , դըկ , դըկ „ գործէր կտցաւն խուրով թռչունն մի կարմրալանջ կացեալ առ պատուհանաւ հողագործի ուրումն , և ասէր . «Ցի՞ս , տէր, բա՛ց ինձ , զի անկանին տարափք ձեանց, շընչէ հողմն հիւսիսի , և ես սովամահ կորնչիմ» ։

Գթացեալ 'ի նա առնն , եբաց զպատուհան իւր , և թըռչունն եմուտ ընդ այն 'ի ներքս , և սկսաւ ժողովել զփշրանս հացի անկեալս 'ի սեղանոյ ։ Եւ յետ սուղ ժամանակի ընդելացաւ մանկանցն՝ որ 'ի տան անդ , մինչեւ գալ նմա և 'ի ձեռանէ նոցին առնուլ զունդն՝ զոր կարկառէին առ նա ։
~~~~~~~~~~

Այլ 'ի լուծանել ձեանց, եհաս գարուն, և ցանկք պարտիզաց ծաղկեցան սաղարթագեղ։ Յայնժամ երաց հողագործն զպատուհան իւր և հիւրն այն փոքրիկ թռեաւ 'ի մերձակայ անտառ ուրեք, և ուրախութիւն մեծ եղեւ ընտանեացն, զի հրճուէին 'ի լուր զուարթարար երգոց նորա։

Այլ 'ի գալ ձմերայնոյ եկն դարձեալ թռչունն՝ զհետ առեալ բերելով զկենակից իւր. սոքա երկոքին աներկեւան վստահութեամբ մտին 'ի խրճիթն յայն, և այսր անդր յածէին զաչկունս իւրեանց առանց ինչ խրտչելոյ։ Երկրագործն և որդիք նորա բերկրեցան 'ի տեսիլ նոցին, և սոքա ասէին. «Թռչունքս այսոքիկ թեւածեալ թռչին մեզ ընդ առաջ, որպէս թէ ունիցին ինչ ասել պռ մեզ»։

Պատասխանի ետ հայրն և ասէ ցնոսա. «Եթէ մարթ էր նոցա յօդել բարբառ, ասէին ցմեզ. Ի բարեգործութենէ ծնանի սէր անկասկած»։

20

## ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ԺՊԻՐՀ

| | |
|---|---|
| Զուգակշիռ, հաւասար | Մատեան, գիրք |
| Ընդ վայր հարկանել, բանի տեղ [չդնել | Օրէնսգէտ, օրէնք գիտցող |
| Ուժգին, ուժով | Պարտաւոր, յանցաւոր |
| Զգնալ, պտըտիլ, քալել [շրջել | Ի բաց ելանել, մեկնիլ, դուրս ելնել |
| Ածել, հանել ապտակ, ապտակել | Դատախազ, դատ պահանջող |

Զիք ինչ պատուոյ զուգակշիռ 'ի մարդիկ,
Եւ որ գանձուց իսկ վաճառէ զայն, զանձն ընդ վայր հարկանէ։
Ի զգնալ երբեմն Նասրէտտինայ ընդ հրապարակ քաղաքին,
Ոմն յամբոխէն ժանտ և ժպիրհ ուժգին նըմա հան ապտակ։
Հասին զինուորք կալան ածին ըզյանցաւորն 'ի յատեան.
Զոգաւ ըզհետ նոցին և ինքն իսկ Ծերունին դատախազ։
Մատեան 'ի վայր առեալ յայնժամ օրէնըսգէտք տան վըճիռ,
Պարտաւորին հատուցանել նըմա երիս դահեկանս։

Այնքանոյ անարգ գլնոց տեսանելով Ծերունւոյն
Զանձին պատիւ վաճառեալ,
Մխուեալ և ինքն 'ի նոցանէ ած ապտակ,
Եւ ել 'ի բաց ասելով՝
« Քեզ ընդպահանջ իմ թողում » ։

## 21

## ԸՆԿՈՅԶ

| | |
|---|---|
| Ճեմ առնուլ, պտըտիլ | Յուշի կապել, միտք պահել |
| Այն ինչ, դեռ նոր | Սուրալ, վազել |
| Վիճակել, իյնալ ( վիճակաւ ) | Ուշ ունել, ուշադրութիւն ընել |
| Երկուստեք, երկու կողմէն | Արշաւանք, վազելը |
| Ծառուղի, երկու կողմը ծառոտ ճամբայ | Յուշ արկանել, յիշեցնել |
| Սպառուած, ծայր | Առիթ, պատճառ |

Մինչդեռ Եղիսա և Եւդինէ ճեմ առեալ շրջէին 'ի պարտիզի իւրեանց, գտին ընկոյզ մի այն ինչ անկեալ 'ի ծառոյն ։ Աստի յարեաւ վէճ առ 'ի գիտել թէ ում վիճակեսցի այն ։

Պահանջէր զայն Եղիսա զի նախ իւր էր տեսեալ. և Եւդինէ՝ զի ինքն ժողովեալ էր զայն, չկամէր տալ 'ի բաց ։

Մինչդեռ երկուստեք այսպէս վիճէին, անդրանիկ եղբայր նոցա Կարապետ, մատեաւ առ նոսա և ասէ ցԵղիսա. «Զի մի լիցի կռիւ ընդ քեզ և ընդ Եւդինէ, երթայք 'ի ծայր ծառուղւոյն և յորժամ երիցս ծափ զծափի հարից, եկեսջիք առ իս ։ Որ վաղ եկեսցէ՝ նմա տաց զընկոյզն. այլ պարտ է ձեզ զգուշութեամբ ընթանալ, զի ոչ որ արագընթացն է ժամանեսցէ միշտ 'ի կէտ նպատակին » ։ Դստերքն մատաղք ընկալան զառաջարկութիւն եղբօր իւրեանց, և չոգան 'ի սպառուած պարտիզին. և 'ի տալ նշանին՝ սկսան ընթանալ ։ Եւդինէ յուշի կապեալ զբանս եղբօրն հայէր զգուշութեամբ թէ յո՛ ուրեք հաստատէր զոտս իւր յընթացսն. իսկ Եղիսա դահավէժ սուրայր, ոչ յայլ ինչ ուշ ունելով բայց 'ի պտուղն՝.

Այլ 'ի լուծանել ձեանց, եհաս գարուն, և ցանկք պարտիզաց ծաղկեցան սաղարթագեղ: Յայնժամ եբաց հողագործն զպատուհան իւր և հիւրն այն փոքրիկ թռեաւ 'ի մերձակայ անտառ ուրեք, և ուրախութիւն մեծ եղեւ ընտանեացն, զի հրճուէին 'ի լուր զուարթարար երգոց նորա:

Այլ 'ի գալ ձմերայնոյ եկն դարձեալ թռչունն՝ զհետ առեալ բերելով զկենակից իւր. սոքա երկոքին աներկեւան վստահութեամբ մտին 'ի խրճիթն յայն, և այսր անդր յածէին զաչկունս իւրեանց առանց ինչ խրտչելոյ: Երկրագործն և որդիք նորա բերկրեցան 'ի տեսիլ նոցին, և սոքա ասէին. «Թռչունքս այսոքիկ թեւածեալ թռչին մեզ ընդ առաջ, որպէս թէ ունիցին ինչ ասել առ մեզ»:

Պատասխանի ետ հայրն և ասէ ցնոսա. «Եթէ մարթ էր նոցա յօդել բարբառ, ասէին ցմեզ. Ի բարեգործութենէ ծնանի սէր անկասկած»:

20

## ՆԱՐԷՍՏԻՆ ԵՒ ԺՊԻՐՀ

| | |
|---|---|
| Զուգակշիռ, հաւասար | Մատեան, գիրք |
| Ընդ վայր հարկանել, բանի տեղ | Օրէնսգէտ, օրէնք գիտցող |
| Ուժգին, ուժով [չդնել: | Պարտաւոր, յանցաւոր |
| Զգնալ, [illegible] [[illegible] | Ի բաց ելանել, մեկնիլ, դուրս ելնել |
| Ածել, հանել ապտակ, [illegible] | Դատախազ, դատ պահանջող |

---

Չիք ինչ պատուոյ զուգակշիռ 'ի մարդիկ,
Եւ որ զանձուց իսկ վաճառէ զայն, զանձն ընդ վայր հարկանէ:
Ի զգնալ երբեմն Նարէստինայ ընդ հրապարակ քաղաքին,
Ոմն յամբոխէն ժանտ և ժպիրհ ուժգին նըմա հան ապտակ:
Հասին զինուորք կալան ածին ըզյանցաւորն 'ի յատեան.
Չոգաւ ըզհետ նոցին և ինքն իսկ Ծերունին դատախազ:
Մատեան 'ի վայր առեալ յայնժամ օրէնըսգէտք տան վճիռ,
Պարտաւորին հատուցանել նըմա երիս դահեկանս:

Այնքանոյ անարգ դընոց տեսանելով Ծերունւոյն
Ջանձին պատիւ վաճառեալ,
Միուսն և ինքն 'ի նոցանէ ած ապտակ,
Եւ ել 'ի բաց ասելով՝
« Քեզ ըղպահանջ իմ թողում » ։

## 21

### ԸՆԿՈՅՋ

| | |
|---|---|
| Ճեմ առնուլ, պտըտիլ | Յուշի կապել, միտք պահել |
| Այն ինչ, դեռ նոր | Սուրալ, վազել |
| Վիճակել, իյնալ ( վիճակով ) | Ուշ ունել, ուշադրութիւն ընել |
| Երկուստեք, երկու կողմէն | Արշաւանք, վազելը |
| Ծառուղի, երկու կողմը ծառէ ճամբայ | Յուշ արկանել, յիշեցնել |
| Սպառուած ; ծայր | Առիթ, պատճառ |

Մինչդեռ Եղիսա և Եւդինէ ճեմ առեալ շրջէին 'ի պարտիզի իւրեանց, գտին ընկոյզ մի այն ինչ անկեալ 'ի ծառոյն ։ Աստի յարեաւ վէճ առ 'ի գիտել թէ ո՛ւմ վիճակեսցի այն ։

Պահանջէր զայն Եղիսա զի նախ իւր էր տեսեալ ․ և Եւդինէ՝ զի ինքն ժողովեալ էր զայն, չկամէր տալ 'ի բաց ։

Մինչդեռ երկուստեք այսպէս վիճէին, անդրանիկ եղբայր նոցա Կարապետ, մատեաւ առ նոսա և ասէ ցԵղիսա ․ «Զի մի լիցի կռիւ ընդ քեզ և ընդ Եւդինէ, երթա՛յք 'ի ծայր ծառուղւոյն և յորժամ երից ծափ զծափի հարից, եկեսջիք առ իս ։ Որ վաղ եկեսցէ՝ նմա տաց զընկոյզն ․ այլ պարտ է ձեզ զգուշութեամբ ընթանալ, զի ոչ որ արագընթացն է ժամանեսցէ միշտ 'ի կէտ նպատակին » ։ Դստերքն մատաղք ընկալան զառաջարկութիւն եղբօր իւրեանց, և չոգան 'ի սպառուած պարտիզին ․ և 'ի տալ նշանին՝ սկսան ընթանալ ։ Եւդինէ յուշի կապեալ զբանս եղբօրն հայէր զգուշութեամբ թէ յո՛ ուրեք հատանէր զոտս իւր յընթացսն ․ իսկ Եղիսա դահավէժ սուրայր, ոչ յայլ ինչ ուշ ունելով բայց 'ի պատուղն՝.

որ մրցանակ լինելոց էր արշաւանաց նոցա . սակայն զի՞նչ դէպք պատահեցին ։ Հարաւ Ելիսա ընդ կոճղ ծառոյ որ յերեսս երկրին , և անկաւ 'ի վերայ դիմաց իւրոց ։

Մինչդեռ յառնէր նա աչք յարտասուս , եհաս Եւգինէ 'ի նպատակ անդր , և ընկալաւ 'ի ձեռանէ եղբօրն զընկոյզն զայն ։ Իսկ կարապետ 'ի դէմս ածէր Ելիսայ զգահավէժ և զանզգոյշ ընթացս նորա , յուշ արկեալ նմա զհինաւուրց առածն՝ որ ունի այսպէս .

“ Յամրընթաց
Միշտ ճեպեաց „ ։

Բայց Եւգինէ՝ զի սիրտ բարի էր նորա , բաժանեաց ընդ քեռ իւրում զընկոյզն՝ որ առիթ խռովութեան եղեւ նոցա ։

22

## ԳՈՐՏ ԵՒ ԱՐՋԱՌ

Նկրտել , ջանս ընել
Նախանձ բերել , նախանձել
Խորշոմեալ , կնճռոտ.

Ձայրանալ , բարկանալ
Դիտապաստ անկանել , փռուած իյ-[նալ
Ստուարացեալ , հաստըցած , մեծցած

Նայապէս , անոր պէս

---

Նախանձաւոր լեալ մեծատան մատնի աղքատն 'ի կորուստ ։
Գորտոյ զարջառ տեսեալ ուրեք 'ի դաշտի ,
Եւ մեծութեան նորին նախանձ բերելով ,
Ուռոյց ըզմորթըն խորշոմեալ , և հարցանէր ցորդիս իւր՝
Արդեօք է՞ր ընդստուարացեալ նայապէս ։
Ասեն . « Ոչ » ։ Եւ ուռուցեալ սաստկագոյն ,
Եհարց դարձեալ՝ Ո՞ ստուարագոյն էր յերկուց ։
Նոքա ետուն պատասխանի թէ . « Արջառ » ։
Ձայրացեալ ապա մինչ գուն գործէր ուժգին եւս առնուլ
Դիտապաստ անկաւ յերկիր պայթուցեալ ։

## 23

### ՃԻՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋՄՈՒՆՔ

Անձրեւաթուրմ, անձրեւէ թրջուած, [թրջած
Անսուաղ, անօթի
Ձեղեւ ինձ պարապ, ժամանակ չու-[նեցայ

Քաղցրանուագ, քաղցրիկ երգող
Քրքիջ բառնալ, քաղցրաձայն խըն-[դալ
Քա՛ջ է, շատ աղէկ
Կայթս հարկանել, ցատքել, պարել

---

Ցաւուրս ձմերայնոյ ցամաքեցուցանէին Մրջմունք զանձրեւաթուրմ հատս ցորենոյ ։ Ճիպուռն անսուաղ խնդրեաց 'ի նոցանէ ճարակ առ յուտել ։ Ասեն ցնա Մրջմունք • « Ընդէ՞ր յամարայնի ոչ ժողովեցեր քեզ կերակուր » ։ Պատասխանի ետ նոցա Ճիպուռն և ասէ • « Ձեղեւ ինձ պարապ առնել զայդ, զի յօրինէի յայնժամ երգս քաղցրանուագս » ։ Յայնժամ սկսան Մրջմունք քրքիջ բառնալ և ասեն « քա՛ջ է, որովհետեւ երգէիր յամարայնի, հա՛պա, կայթս հարկջիր և 'ի ձմերան » ։

*Բարոյականն•* վկայէ առակս թէ չէ պարտ զանց առնել զիւիք, զի մի՛ հասցեն վիշտք և վտանգք ։

---

## 24

### ՄԿՈՒՆՔ ԵՒ ԿԱՏՈՒ

Ծերպ, ծակ, ճեղք
Համախմբել, մէկտեղ ժողվել
Հրապարակ, ժողով
Հրեշտակ, պատգամաւոր
Հեռ, ատելութիւն
Դարմանել, սնուցանել
Առ տնին (մկ.), տան մէջ

Ի բաց անկանել, ձեռքէն՝ մէկդի
Մեղանչել, յանցնել [ձգել
Ուխտադրուժ, ուխտը քանդող
Պատճառել, կեղծաւորել
Ընդաբոյս, բնական
Խիղախել, վազել անվախ
Հաւատս ընծայել, հաւատալ

---

Մըկունք 'ի ծերպս հալածականք 'ի կատուոյ
Համախմբեալ հրապարակ,
Ցըղեն հրեշտակ առ նա աղերս առնելով.
«Զի՞ մեղանչեմք քեզ. որ այդքան հեռի ըզմեզ հալածես.
Զի՞նչ քո ուտեմք»: Իսկ նա ասէ. «Այլ վնասակար էք մարդկան,
Ո՞չ իսկ գիտէք զի առ 'ի պահ ամբարոց
Նոքա ընդդէմ գողոցդ ըզմեզ դարմանեն:
Արդ եթէ դուք ոչ մեղիցէք պաշարոյ,
Տացի շըրջել ձեզ առ տընին համարձակ,
Եւ մի՛ վնասել ինձ ձեզ ահա խոստանամ»:
Ասաց և զաղ 'ի ձեւ երդման ած 'ի գլուխ:
Համարձակեալ յայնժամ Մըկանց ելեալ արտաքս 'ի ծերպից
Առ 'ի ճարակ հատից 'ի բաց անկելոց,
Ցեղակարծում հաս ուխտադրուժն 'ի վերայ:
Եւ 'ի բողոք բառնալ նոցին զերդումն 'ի յուշ առնելով,
Նա պատճառէր թաթ ըզդըլխով ոչ առ երդումն ինչ ածեալ
Այլ ընդարբոյս էր իւր 'ի բնէ սովորոյթ:
Որք խիղախեն 'ի վտանգ՝ զհաւատս ընծայելով սըտերդմանց,
Նոցա առակս այս ասացեալ է 'ի խրատ:

25

## ԱՂԲԵՐԱԿՆ.

Տօթակէզ, տաքութենէն այրող
Բոցատիպ, բոցի նման
Առուաբար, վազող ջուրի պէս
Հէք, խեղճ
Ցայտել, դուրս ցատկել
Ցուրտ, պաղ
Աղխտաբեր, փաս բերող
Ցոգւոց հանել, հառաչել
Ժանտաժուտ, խիստ չեղ, փառա-
Խօթութիւն, հիւանդոտութիւն [նոր.
Ցեղ յեղել, մէշը կէծնել (խօսք մը)
Առնուլ յարբումն, խմել

Ի միում 'ի տօթակէզ աւուրց ամարայնոյ՝ շրջէր Ջարեհ ընդ դաշտօրայս, այտք նորա բոցատիպք էին, և քիրտն հոսէր առատաբար 'ի ճակատուէն ։ Մանկիկն հէք կիսամահ 'ի ծարաւոյ, եհաս յանկարծ յաղբերակն մի՝ ուր ալիք արծաթափայլք ցայտէին 'ի ներքոյ ժայռի՝ ընդ հովանեաւ վարսադեղ կաղնւոյ ։

Յայնժամ Ջարեհ դահավէժ խոնարհեցաւ 'ի ջուր անդր՝ որ ցուրտ էր իբրեւ զսառն, և յըմպելն 'ի նմանէ անկաւ դրեթէ անզգայ ։ Զօդաւ հիւանդացեալ 'ի տուն ծնողացն, և կալաւ զնա ջերմն աղխտաբեր ։

Յոգւոց հանեալ 'ի մահիճս ցաւոց իւրոց հառաչէր և ասէր ․ « Եւ ո՞ հաւատայր զի աղբերակն այն չքնաղ կրէր յինքեան թոյն ժանտաժուտ » ։

Ի լուր բանից նորա ասէ ցնա հայրն ․ « Ո՛չ աղբերակն այն վճիտ եղեւ պատճառ խօթութեանդ, այլ անզգուշութիւն քո և եթ ։ Պարտ էր քեզ յուշ ածել զոր յաճախ յեղյեղէի առ քեզ, թէ չէ բարւոք 'ի ջերմանալ մարմնոյ ցուրտ ինչ առնուլ յարբումն » ։

26

NԱՐԷՏՏԻՆ Ի ՀԱՐՍԱՆԻՍ

| | |
|---|---|
| Առ ահին, վախէն, վախուան համար | Անկանել 'ի թմբիր, թմրութեան [մէջ ինկալ |
| Խուռն, բազմութեամբ | Լուծանել, տանել |
| Ջանկիկ, պզտիկ շանիկ | Սթափել, խելքը վրան գալ |
| Գարշապար, (կօճը) | Անապակ, զուտ գինի |
| Մեղմիկ, կամացուկ | Ի վարանս լինել, տարակուսիլ |

---

Ի հարսանիս ուրեք երբեմըն Նասրէտտին հրաւիրեալ,
Ամբոխ բազում կոչնականաց ետես անդ ․
Եւ առ ահին գուցէ 'ի խուռն անդ շրփոթեալ կորիցէ,
Ջանկիկ յոտինն 'ի գարշապար եդ նըշան ։

Արկան աթոռք, ըսկիզբն եղեւ խընճոյից.
Պըսակեցան բաժակք, արբին արբեցան.
Անկաւ և ինքն իսկ Ծերունին ընդ ճաշակիցս 'ի թըմբիր։
Յայնժամ մի ոմն յոտանէ նորա զզանկիկըն լուծեալ,
Կապեաց. յոտին այլոյ ուրուք զայն մեղմիկ։
Եւ 'ի սթափել բազմականին յանապակէ և 'ի քնոյ,
Լըւաւ ըզձայնըն նըշանակ իւր Ծերունին առընթեր,
Եւ 'ի վարանս եղեալ՝ ումեք, որ անդըրն կայր՝ հարցանէր.
« Դա աւադիկ ես եմ, այլ ես ո՞ իցեմ »։
Այսպէս նա ցնորըս պատճառէր արբեցելոց առ 'ի խըրատ։

## 27

### ԷՇ ԵՒ ՊԱՐՏԻԶՊԱՆ

| | |
|---|---|
| Հարկանել սպաս ծառայութեան՝ ծառայել | Դուրգն, դրգան, Չըրգի անի- |
| Դոյզն ինչ, քիչ մը | Խաղախորդ, կօշկ մոքրող, ճոր- |
| Վաստակել, աշխատիլ, յոգնիլ | Յուեգոյն, աճէլէ թէզ [ծուծող |
| Բրուտ, (չէօմլէքճի) | Եղո՛ւկ եմ ես, Ըշտտու էմ էս |
| | Աշխատ առնել, յոգնեցնել |

---

Էշ՝ որ սպաս ծառայութեան հարկանէր առ պարտիզպանի ումեմն, ճաշակելով դոյզն ինչ և վաստակելով յոյժ, աղաչեաց զԱրամազդ տալ նմա զերծանել 'ի ձեռաց նորա, և ածել 'ի վաճառ այլում ումեք տեառն։

Լուաւ Արամազդ աղերսանաց նորա և վաճառեցաւ նա բրտի ումեմն, այլ անդ առաւել չար քան յառաջն ընկճէր 'ի վաստակոց՝ ընդ ծանրութեամբ բեռանց, դարձուցանելով զդուրգն անօթոց կաւեղինաց։ Ապա անդրէն խնդրեաց իւր այլ տէր, և վաճառեցին զնա ումեմն խաղախորդի։ Անկեալ 'ի ձեռս տեառն յոռեգունի քան զմիւսս, և տեսեալ որ ինչ անցք անցանէին, ասէր հառաչանօք «Եղո՛ւկ եմ ես, լաւ էր

Թէ կայի մնայի ընդ իշխանութեամբ առաջնոց տէրանց ի-մոց, զի սա, որպէս տեսանեմ իսկ, զմորթ իմ ևս աշխատ արասցէ ։

Բարոյական․ Ակնարկէ առակս ՚ի սպասաւորս ոմանս՝ որոց վիշտ լինի ընդ կորուստ առաջին տեարց իւրեանց, մանաւանդ յորժամ զյետնոցն առցեն զփորձ ։

28

## ՇՈՒՆ ԾՆՆԴԱԿԱՆ

Երկն, երկունք, փղաքներ
Խշտեակ, անկողին, բնակարան
Լսելի լինել, խօսք ընդունելի
Տեղի տալ, ներել, [illegible]

Սուղ ինչ, փոքր մը
Սկունդ, սկնդուկ, շան ձագ
Ստամբակել, ապստամբել
Զդէմ ունել, դէմ դնել

Բազմավրտանդ անըզգամաց են հրապոյրք,
Յորոց զգոյշ աղդեն կալ տողքս այսոքիկ ։
Շուն ՚ի յերկունս աղերս այլում արկեալ շան,
Ի խշտեակ նորա զշընկունսն աւանդել,
Եղեւ դիւրաւ լսելի․
Եւ ապա ստիպեալ տեղի տալ անտի,
Սուղ ինչ այլ ևս հայցէր շնորհել ժամանակ,
Մինչեւ սկընդկունքըն զօրասցեալ՝ տեղափոխել կարասցեն ։
Եղանց և այն, և մինչ ուժգին միւսն ըզխըշտեակըն խնդրէր,
Նա ստամբակեալ ասէ․ «Այո, տաց տեղի,
Թէ զդէմ ունել ինձ և իմոցըս զօրես» ։

29

## ԿԻՆ ԵՒ ԱՂԱԽՆԱՅՔ

| | |
|---|---|
| Ժրագլուխ , աշխատասէր | Անընդհատ , շարունակ |
| Հաւախօս , առտուան դէմ աքաղա-[ղաց խօսելուն ժամանակը | Ածել 'ի կատարումն , լմնցնել |
| Առաջի դնել , առաջը դնել | Պայման , վճիռ |
| Ձարաբախտ , դժբաղդ | Այնու զի , որովհետեւ |
| | Կանխայարոյց , կանուխ ելնող |

---

Կին ոմն այրի ժրագլուխ ունէր ընդ իւրեւ աղախնայս՝ զորս սովոր էր զարթուցանել յառաջնումն անդ հաւախօսի՝ վաստակ առաջի դնել նոցա 'ի գիշերի ։

Ձարաբաղդ զանձինս համարեալ սոցա վասն անընդհատ վաստակոցն՝ 'ի մտի եդին սպանանել զաքաղաղն որ 'ի տան անդ , զի 'ի ձայնէ նորա յառնէր Տիրուհի իւրեանց 'ի մէջ գիշերի ։ Այլ 'ի կատարումն ածեալ զխորհուրդն զայն , գըտան 'ի դժնդակագոյն պայմանի , այնու զի Տիրուհին իւրեանց ոչ եւս կարացեալ գիտել զժամ հաւախօսին , առաւել կանխայարոյց զարթուցանէր զնոսա 'ի քնոյ ։

*Բարոյական* . Վկայէ առակս զի բազումք խորհրդովք իւրեանց զհետ ձգեն զառիթ չարեաց ։

30

## ԾԱՌՔ ՊՏՂԱԲԵՐՔ ԵՒ ՈՒՂԵՒՈՐ

| | |
|---|---|
| Դրախտ , պարտէզ | Տալ 'ի ճաշակ , ուտելու համար տալ |
| Արուգ , չոր , ցամաք | Ջամբել , տալ (կերակուր) |
| Ի նանիր , պարապ տեղը | Կշտամբել , յանդիմանել |
| Դայեկել , պաշտպանել | Ինքնակոչ , ինքնիրեն եկող |

---

Ի դրախտ ուրեք 'ի ձմերային մրտանէ այր ուղեւոր ,
Քաղել պըտուղ 'ի ծառոց ,
Եւ ոչ տերեւ յայնժամ գըտեալ 'ի նոսին ,
Թըշնամանէր ամուլս արուգս ըզնոսա ։
Առ որ մի ոմն 'ի նոցանէ պատասխանեաց հեզաբար ·
« Մի՛ տըրտմիր , ա՛յր դու , և մի՛ զմեզ 'ի նանիր բամբասեր ·
Զի ձմերային թէ ոչ հանդչիմք զօրանալ ,
Զկարեմք ծաղկել գարնային ,
Եւ ոչ ըզմիրգս յամարային դայեկել ,
Տալ զայնոսիկ քեզ յաշնային 'ի ճաշակ ·
Ընդէ՛ր ոչ եկիր յայնժամ վայելել ,
Ցորժամ մարդ և անասուն պըտղովք մերովք կերակրէր ։
Թէ դու պատրաստ 'ի ճաշակել լիցես միշտ ,
Այլ ոչ և մեք՝ միշտ 'ի ջամբել քեզ ճաշակ ։
Սոյն առակաւ կըշտամբի հիւր ինքնակոչ ,
Որ ճաշ յայլոց գայ պահանջել տարաժամ ։

31

## ՀԱՍԿՔ ԿՐԿԻՆ

Ցոյլ , ծոյլ
Բարձրամիտ , հպարտ
Զկծեցուցանել , սիրտը այրել
Ցոխորտ , գոռոզ
Առակ արկանել , առակ ընել
Գերանդի , մեծ մանգաղ
Ուղղաբերձ , գլուխը ուղիղ
Խօլ , անմիտ
Հակամէտ յերկիր , գետինը ծռած
Անամէջ , մէջը պարապ

Առն միոջ էին երկու որդիք ։ Մին 'ի նոցանէ յոյլ էր և մնափառ , միւսն վաստակաւէր և համեստ ։ Եւ մինչ անդրանիկն բարձրամիտ զկծեցուցանէր յոխորտ բանիւք զսիրտ կրտսեր եղբօրն · լուաւ զայն հայր նոցա և արկ առակ մի այսպէս ։ « Ի ժամանակի յորում հողագործն պատրաստէր

գերանդիս 'ի հունձ , մի 'ի հասկաց՝ ուղղաբերձ ամբարձեալ զգլուխ իւր 'ի վեր՝ խօլ մնափառութեամբ ծաղր առնէր զայլովք՝ որոց գլուխք նոցա խոնարհեալ կային յերկիր հակամէտ ։ Ցայնժամ ոմն 'ի նոցանէ ասէ ցնա ·

“ Թէ գլուխ էր քեզ ատոք 'ի ցորեան
Ոչ այնքան 'ի վեր բառնայիր դու զայն „ ։
Ի սնամէջ գլուխս լայնանիստ բնակէ հպարտութիւն » ։

∿∿∿∿∿∿∿∿∿∿

## 32

### ԳԵՂՋՈՒԿ ԸՆԴ ԸՆԿՈՒԶԵՆԵԱՒ

| | |
|---|---|
| Ընկողմանել , եան գալ | Ճահաւորիլ , չօյմէլ |
| Չինական , չինիշի | Ի միտս գալ , խեյլը վըրան գալ |
| Բարձրաձայն , պիւյիւքլը պօյլը | Ի բարձու , պօյյը տէպը |
| Ծիլ , ծիղ , ( ֆիլիզ ) | Բարձրաբերձ , եիւքսէք պօյլը |
| Նրբենի , պօրան | Արմն , տըրմաք |
| Ուր , գինչեէս | Գլխովին , պէլպէտէն |

Ընդ հովանեաւ ընկուզենւոյ ընկողմանեալ չինական ,
Եւ զբարձրաձայն ծառոյն ըզմիրգսըն դիտելով փոքրըկունս ,
Ուր մեծափոր դըդում 'ի ծիլ նըրբենի
Անդ առ արմին նորին աճէր ուռուցիկ ։
« Քանի՜ , ասէ , սա առաւել ճահաւորէր 'ի ծառն ,
Եւ փոխանակ դըդմոյ ընկոյզն 'ի ծըղին ։
Այլ մինչդեռ բանքըն դեռ կային 'ի բերան , 
Մի յընկուզաց անտի անկաւ յընկողմելոյն 'ի ճակատ ·
Ցայնժամ 'ի միտս եկեալ՝ «Շընորհք , ասէ , խնամոց Արարչին ,
Որ 'ի բարձու անդ եդ ըզմիրգըն մանրիկ ·
Զի եթէ զմիւսն էր անդ եդեալ բարձրաբերձ ,
Արդ ըզճակատ իմ յանկանելըն ջախջախէր գըլխովին » ։

∿∿∿∿∿∿∿∿∿∿

# 33

## ԱՆՁՐԵՒ

| | |
|---|---|
| Գեղապայծառ , գեղեցիկ՝ պայծառ | Ձգել , քաշել , պարզել (շինել) |
| Ուղղօրէն , ուղիղ դէպ | Մորակ առնել , խարազանով զարնել |
| Թափ անցանել , վզէն անցնիլ | Ասել ընդ ինքն , ինքնիրեն ըսել |
| Պարկ , տոպրակ [(քանի մը) | Ձի անմոռացայ , չ'ի անխելքութեան |
| Անհարթութիւնք օդոց , օդին գէշ | Տանել , համբերել [ըսէ |
| Տարափ , տեղատարափ [երեւոյթ | Վերնախնամ տեսչութիւն , Աստ- |
| Թանձրախիտ , շատ խիտ | Երաշտ , չոր ( օդ ) [ուած |
| Փոքր միւս եւս , քիչ մնաց որ . . . | Ձրաւիլ 'ի կենաց , կեանքէ վերջա- |
| Հուղկահար , աւազակ | նալ (մեռնիլ) |

---

Վաճառական ոմն դառնայր 'ի շուկայէ հեծեալ 'ի ձի , ունելով ընդ իւր պարկ ինչ լի արծաթով ։ Տարափք անձրեւաց իջանէին ուղղօրէն , և ողողէին զնա թափ անցեալ մինչեւ 'ի մարմին նորա ։ Վասն այնորիկ տրտնջայր զՏեառնէ , զի անհարթութիւնք օդոց ոչ 'ի ճահ պատահեցին՝ խափան եւ լով ուղեւորութեան իւրում ։

Եւ ահա եմուտ յանտառ ուրեք թանձրախիտ , և փոքր միւս եւս անկանէր նուաղեալ 'ի տեսիլ հուղկահարի միոյ՝ որ կայր միայն յեզր ճանապարհին ։ Խորհեցաւ նա ձգել զհրացանն իւր , այլ զի թրմեալ էր փոշին յանձրեւաց չկարաց հանել հուր , և վաճառականն մորակ 'ի կուշտ արարեալ ձիոյն , զերծաւ 'ի փախուստ ։

Եւ իբրեւ կայր յապահովի , ասէր ընդ ինքն ․ «Ո՛հ , զի՛ անմոռացայ յոյժ , չհանդուրժեալ տանել տեղատարափից անձրեւաց , որպէս ամենայնի՝ զոր յղէ առ մեզ վերնախը- նամ տեսչութիւն ։ Եթէ երաշտ էին օդք և գեղապայծառ , մեռ եւս զրաւեալ էի 'ի կենաց ․ և կին իմ և որդեակք 'ի զո՛ւր միայլոց էին դարձին իմում ։ Անձրեւան՝ զորմէ տըր- տունջ բարձի՝ հաս ինձ միանգամայն պահպանել զկեանս իմ և զինչս »։ .

# 34

## ԵՂՋԵՐՈՒ ԱՌ ԱՂԲԵՐ

Ձկայ առնուլ, կոյնէլ
Բազմաճիւղ, ճիւղերը շատ
Սրունք, ուանց, (պաճաւ)
Անգոսնել, արհամարհել
Նրբութիւն, բարակութիւն
Ահաբեկ, սարսափած
Փախուստ առնուլ, փախչիլ

Բարակ, որսի շուն
Ի դերեւ առնել, պարապը հանել
Միջամուխ լինել, մէջ մտնել
Կառչիլ, կենալ
Դժնեայ, չար, գէշ
Ցոլել, կտոր կտոր ըլլալ
Խելամուտ լինել, հասկնալ

---

Որ արհամարհէ ինչ քեզ թուի և անարգ,
Օգտակար քան զոր գովեսդ է յաճախ,
վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ։
Եղջերու յըմպելն ըզկայ առեալ յաղբեր,
Եւ յայլս անդ ըզպատկեր իւր տեսեալ,
Մինչ ընդ եղջերսըն բազմաճիւղս ըսքանչանայր և գովէր,
Ըզսըրունսն անգոսնելով նըրբութիւն,
Ի ձայնէ որսորդաց յանկարծակի ահաբեկ,
փախուստ ընդ դաշտն առեալ թեթեւ ընթացիւք,
Ըզբարակացն արար ըզճիգն 'ի դերեւ։
Ի յանտառ անտի դիմեալ միջամուխ,
կառեան եղջերք իւր արգելեալ 'ի կողերս,
Եւ 'ի դժնեայ շանց խածատեալ յօշեցաւ։
Աւանդեն 'ի մեռանելն յայնժամ այսպէս բարբառեալ.
« Աւա՜ղ հիքիս, անագան այժմիկ լինիմ խելամուտ.
Զի որ անարգք կարծեցեալ՝ պիտանեգոյնք գըտան ինձ,
Եւ որ թուէին գովելիք, եղո՜ւկ, կորուստ ինձ ածին »։

ᴧᴧᴧᴧᴧᴧᴧᴧᴧᴧᴧ

## ԲՆԿՈՐ ՓԱՑՏԻ

Արկանել յարեւէ և յընչից,
Նիշ, նշան [մեռցնել և կորսնցնել
Բուռն հարկանել զհետոց (ուրուք), (մէկու մը) հետքէն երթալ
Զուառական, խեղճ [ողբալ
Յակն անկանիլ, աչքէն զարնուիլ,
Յերիկէ, առջի օրուընէ [տեսնուիլ
Եղեռն, ոճրագործութիւն
Ոստախիտ, ճիւղերը շատ
Ածել ինչ ընդ բանս, քան մ'ըսել
Շիղ, նօսր [աւելցնել
Ունել 'ի դիպահօղ, բանդ դնել
Յուրաստ կալ, ուրանալ
Ի կիր առնուլ, գործածել
Ի վեր հանել, յայտնել

---

Ի միում 'ի ձմեռնային սաստկաշունչ աւուրց ընդ առաւօտն ուղեւոր ոմն դառնայր 'ի բնակութիւն իւր բարձեալ բերելով գումար մեծ արծաթոյ ։ Յանկեան ուրեք յանտառի անդ ըմբռնեցաւ յաւազակէ ումեմնէ՝ որ արկ զնա յարեւէ և յընչից ։

Մի ոմն յոստիկանաց անտառին մինչդեռ շուրջ գնայր ընդ այն, նշմարեաց նիշս արեան յեզր ուղւոյն և բուռն հարեալ զհետոցն սկսաւ ընթանալ մինչեւ եգիտ զմարմին չուառական ուղեւորին ։ Ի նմին գիշերի Ատենական մերձակայ քաղաքին եկն 'ի տեղի անդր ջահիւք վառելովք, և յակըն անկաւ նմա 'ի տեսարանի անդ եղեռանն բեկոր մի փայտի, որ թուէր խլեալ յոստախիտ գաւազանէ, և առանց ընդ բանս ինչ ածելոյ ընդ ումեք, առ զայն և պահեաց զգուշութեամբ ։

Ի վաղիւ անդր 'ի մտանել իւրում յատեան խորհրդոյն, ետես յանկեան ուրեք սրահին զգաւազան պահապանին դաշտաց, և մատուցեալ 'ի քնին՝ ծանեաւ զի պակասէր 'ի նմա շիղ փայտի յար և նման նմին՝ զոր յերիկէ գտեալն էր առընթեր դիականն ուղեւորին ։

Կասկած 'ի միտս նորա անկաւ եթէ մի՛ գուցէ պահապա-

նին դաշտաց գործեալ իցէ զեղեռնն զայն. և իսկոյն ետ ըղ-
նա ունել 'ի դիպահոջ։

Մարդասպանն նախ յուրաստ եկաց ամենևին, այլ իբ-
րև ցուցաւ նմա բեկորն փայտի՝ որ 'ի ճահ գայր գաւազա-
նին իւրում, հատան գոյնք երեսաց նորա, և խոստովան ե-
ղև զոճիրն։ Դատապարտեցաւ անդէն 'ի մահ, առաջի ամ-
բոխի բազմութեան, որ հիացեալ զարմանային եթէ զիարդ
Նախախնամութիւնն աստուածային 'ի կիր առնու երբեմն հը-
նարս դուզնաքեայս, առ 'ի վեր հանել զեղեռունս թագու-
թուեցեալս։

wwwwwww

## 36

## ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

| | |
|---|---|
| Հետեւակ, ոտքով քալող | Հետին, ոտքով (եայան) |
| Անցաւոր, անցորդ | Պարսաւադէտ, պախարակ դիտող |
| Նուս, կռնակը (յետոյն, ետոյն) | Ունայն, պարապ |
| Ողնաբեկիլ, մէջքին ոսկրը կոտրել | Անփոյթ առնել, հոգ չընել |
| Զինչ եւս առնել էր, ալ ի՞նչ ընէր | Պատշաճ՝ յարմար, օրինաւոր |
| Խնուլ, գոցել | Կծանել, կծել, ցաւցնել |

Կաղմ, պատրաստ

---

Ուղեւորէր հանդերձ որդւովըն պատանեաւ Նասրէտտին,
Ինքն հետեւակ՝ յէշ ըղմանուկն հեծուցեալ։
Անցաւորաց ոմանց տեսեալ զայն, ասեն.
« Տեսէ՛ք զորդի ստահակ զի գնայ հեծեալ առոյգ հասակաւ,
Հետեւակել հօրըն տալով ծերունւոյ »։
Յայնժամ իջեալ մանկանն, ըղհայրն հեծուցանէ 'ի գրաստուն.
Անցանեն այլք, անգութ ըղհայրըն կոչեն,
Զի գնայր հեծեալ և զհէ՛ք մանուկն աշխատ առնէր 'ի ոտքի.
Ծերն ըղմըտաւ ած և զորդին առնուլ ըղհետ իւր 'ի նուս.

Նւս առաւելք յայնժամ 'ի գրաստն ողորմելւոյն,
« Ողնաբեկի արդ, ասեն, արք անողորմք, հէքն յաւանակ » ։
Զի՞նչ եւս առնել էր ըզբերան հասարակաց առ 'ի խնուլ.
Իջին յերկիր, գնային հետի երկոքեան,
Ըզգրաստ ըզհետ իւրեանց անբեռն ածելով։
Եւ ոչ այնու պարսաւադէտք լըռեցին,
Դարձեալ անմիտըս կոչելով ըզնոսա,
Զի գրաստ ունայն զէշն ընդ իւրեանս ածէին,
Վաստակաբեկք ինքեանք 'ի գնալ առ 'ի խնայումն անբանին ։
Այսպէս ուսոյց Մերն ըզռամկին անփոյթ առնել զ-ատաստան.
Զի և զպատշաճն 'ի կըծանել կազմ և պատրաստ է պարսաւ ։

37

## ՃԱՆՃ ԵՒ ԱՌԻՒԾ

| | |
|---|---|
| Ոչ ինչ երկիւղ է ինձ 'ի քէն, չէմ | Զայնատուր լինել, առաջարկել կար- |
| Լերկ, մազզուանեցող [վախնար քենէ | Ոստայն սարդի, (էօրիւմճէք) [թող |
| Անցանել զանցանել, խէօթ ֆե- | Կոծել, ծեծկռտելով լալ |
| Աղէ, (հօ՛յտէ). [ըսղանցել | Գձձատեսակ, անարգ |
| Մատչիլ 'ի գուպար, կռուել – | Զգետնել, գետինը զարնել |

Անողորմ (մկ.) առանց գթալու

---

Մատուցեալ ճանճի յԱռիւծ ասէր ցնա. « Ոչ ինչ երկիւղ է ինձ 'ի քէն, զի չես դու ոք հզօր քան զիս. եթէ այս այսպէս իցէ, ո՞ւր ապա գտանիցի զօրութիւն քո ։ Միթէ այնու իցես ահարկու զի պատառես զայլս ճիրանաւ, և ժանեօքդ խածանես, այդչափ ինչ կարող է առնել կին' որ ընդ իւր ամուսնոյն կռուիցի ։ Բայց անցեալ զանցանեմ ես զքեւ, և եթէ կամիս, աղէ՛, մատիցուք 'ի գուպար » ։

Եւ յայնժամ ձայնատուր լեալ 'ի մարտ, յարձակեցաւ յԱռիւծ և կծանէր զքիթ նորա և զլերկ մաշկ ռնգանցն ․

Իսկ սա իւրով ճիրանաւն պատառէր զանձն իւր, և ոչ ինչ կարաց ազդել 'ի նա ։ Ջանն՝ յաղթական Աւիւծու՝ եհար փող, յեղանակեաց երգ յաղթութեան և թռեաւ 'ի բաց ։ Բայց 'ի թռիչմն արգելաւ յուռայն ուրեք սարդի՝ որ սկսաւ ծծել զարիւն նորա, և նա կոծէր ողբայր յայնժամ զի ընդ մեծագոյն կենդանիս 'ի կռիւ եկեալ՝ սատակամահ կորնչէր 'ի ձեռանէ գձձատեսակ անասնոյ իբրեւ զմամուկ ։

*Բարոյականն* · Ի դէպ եղանէ առակս որոց զգետնեալ զմեծամեծ թշնամիս, 'ի փոքունց ապա ընկճին անողորմ ։

ՎՎՎՎՎՎՎՎ

38

### ԿԱՏՈՒ ԵՒ ՈԶՆԻ

| | |
|---|---|
| Յանձն եղանիլ, ինքզինքը յանձնել | Խաբուսիկ, խաբեբայ |
| Գութ, սէր, գորով | Կորիւն, ձագ (շան, կատուայ եւլն) |
| Սան, ձեռքի տակ մեծցած մանուկ | Ճարակիլ, ուտել |

Ըմբռնիլ՝ անկանիլ 'ի պատրանս, խաբուիլ

---

Որ յանձն 'ի խնամս ամպարշտին եղանի,
Զանմրտութիւն իւր ողբայցէ անազան ։
Կատուոյ կեղծեալ գութ ընդ Ոզնի, թախանձէր
Առնուլ զորդեակ նորին փոքրիկ իւր 'ի սան ։
Եւ մօրն 'ի յանձն առնուլ զայն,
Յաւելթէ՝ « Զէ մարթ ըզմանկիկդ առնուլ 'ի գիրկըս գըգուել,
Մերկեա 'ի փշոց, զի կարացից առնուլ ըզդա 'ի համբոյր » ։
Ըմբըռնեցաւ մայրն 'ի պատրանս ընդ խաբուսիկըն գորով,
Եւ 'ի յանձնել նըմա զկորիւն իւր անզէն,
Ելաց զանմիտ վըստահութիւնն 'ի ճարակել զայն նորին ։

ՎՎՎՎՎՎՎՎՎ

## 39

## ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆՔ

Աւուր աւուր, (մկ.) օրէ օր
Բնաւք, ամէնքը
Զերծ կալ, ազատ մնալ
Յինքն ձգել, իրեն քաշել
Նիւթել, պատրաստել, խորհիլ
Օղամանեակ (Կոլիէ)
Բեւեռեալ, գամուած
Ծակոտի, պզտի ծակ
Գլխովին, բոլ. (դէմ)

---

Բազմութիւն յոյժ էր Մկանց 'ի տան ուրեք, զոր գիտելով կատուի՝ եհաս անդր և ըմբռնեալ զնոսա մի ըստ միոջէ խեղդամահ սպանանէր : Տեսեալ Մկանց զի աւուր աւուր պակասէր թիւ իւրեանց, ասեն ցմիմեանս . « Մի եւս իջցուք 'ի վայր, զի մի բնաւից հասցէ կորուստ, և կատուի ոչ կարացեալ ելանել մինչեւ ցայսր, զերծ կացցուք 'ի վտանգաց » : Իբրեւ ոչ եւս իջանէին Մկունք, խորհեցաւ կատու ձգել զնոսա յինքն՝ խորամանկութիւն ընդդէմ նոցին նիւթելով : Եւ ապա յօղամանեակ մի երկաթի՝ որ բեւեռեալ կայր 'ի ձեղուան, և կախեալ զայնմանէ՝ կեղծէր զանձըն մեռեալ : Բայց մի 'ի Մկանց անտի հանեալ զգլուխ իւր արտաքս ընդ ծակոտին և տեսեալ զնա, ասէ ցնա . « Բարեկամ, եթէ եղիցիս իսկ պարկ ինչ գլխովին, ոչ մերձեցայց առ քեզ » :

*Բարոյականն* . Խրատեաց այսու առակաւ՝ զի արք խոհեմք եթէ միանգամ առցեն զփորձ չարութեանց մարդկան, ոչ եւս այնուհետեւ կեղծեօք նոցա անկանին 'ի պատրանս :

## 40

### ՏԱՃԻԿ ԵՒ ՈՒՐՈՒՐ

| | |
|---|---|
| Սէզ, հասափ խոտ (սազ) | Սպանդանոց, (սալախանէ) |
| Լեարդ, (ճիյէր) | Նուսխայ, օրինակ |
| Անհմուտ, տգէտ | Եփոյ, եփելը |
| Համեմել 'ի ճաշ, համով ընել | Բոյթ, մեծ մատ |
| Սադրել, գրգռել, դրդել | Անզգաստ (փոլըզըն) |
| Առնուլ 'ի միտ, հասկնալ, սերտել | Ջնջել 'ի լեզ, լզելով աւրել |
| Ուրուր, (չայլագ) | Զայնել, պոռալ |

Խահագործել, ճաշ ընել

---

Շարժէ անմիտ վրէժխնդրութիւն ըղձիծաղ ։
Ըղձեռանէ կախեալ սիզիւ լեարդ գառին
Ածէր 'ի տուն իւր 'ի Տաճկաց ումն 'ի յեփ ․
Այլ անհըմուտ 'ի համեմել զայն 'ի ճաշ,
Ի սպանդանոցն հայցէ զնուսխայ եփոյին,
Եւ յեզընդան բուԹոյ մատին, որպէս սովոր են Տաճիկք,
Գըրէր որ ինչ մըսավաճառըն սադրէր ։
Արդ մինչ 'ի գնալն իւրում առնոյր ընԹեռնըլով զայն 'ի միտ,
Ուրուր յանկարծ յերկնէ 'ի վայր խոյացեալ,
Ի ձեռանէ անըզգաստին յափըշտակէ զճաշն 'ի բաց ։
Ցայնժամ նորա փուԹանակի ջընջեալ զեղունգն իւր 'ի լէզ,
Զայնէր ըղհետ Ուրուրին ․ «Ե՛րԹ, ո՛ անմիտ, գիտ ըզնուսխայն,
Խահագործել, եԹէ կարես, զորս քոյին» ։

41

## ՄԱՆՈՒԿՆ ԿՈՎԱՐԱԾ

Շրջըրջել, [illegible] կամ [illegible]
Սողոսկել, գլորել՝ սողալով
Ջքնաղագիւտ, հազուադէպ
Առաթուր, ոտքի տակ
Կորակոր, ամօթէն վար նայելով
Կոխան առնել, կոխել
Վարել, վարուել
Ամօթապարտ, ամչնալու բան գործող
Ի խոնարհ արկանել (զաչս), (աչ-
Աթուր, ոտք [ քը) գետինը ձգել

---

Մանուկ ոմն արածէր զկով իւր 'ի մարգագետնի ուրեք՝ որ կից էր ընդ պարտէզ գեղեցիկ ։ Շրջըրջեալ զաչս իւր յայս- կոյս և յայն, ետես կեռասենի մի ծանրաբեռնեալ կարմ- րերանգ պտղովք և փայլփայլակի թողեալ զանասունն՝ սողոս- կեցաւ ել 'ի ծառ անդր առ 'ի քաղել զայնոսիկ, իսկ կովուն համարելով զինքն լքեալ, եմուտ 'ի պարտէզն յայն, և ճա- րակեցաւ զբազումս 'ի չքնաղագիւտ տնկոց, առաթուր կո- խելով և զայլս ։ Պահապան մանկանն տեսեալ զնա 'ի պար- տիզին՝ փութաջաւ էջ 'ի ծառոյն, և դիմեալ 'ի նա, գաւա- զանաւն եհար զնա ուժգին ։

Յայնժամ խոյս տուեալ հիքին 'ի հարուածոց անտի կո- խան արար ընդ ոտիւք զածուս ծաղկազուարճս ։ Իսկ հայր մանկանն դիտելով զայս ամենայն 'ի հեռուստ՝ եկն մատեաւ առ որդի իւր և ասէ ցնա ․ « Ո՞ ուրեմն իցէ արժանի այդ օրի- նակ ուղղութեան, դո՛ւ, եթէ անասնեակն, զի ոչ ճանաչէ նա զբարի և ոչ զչար, իսկ դու ընդհակառակն թերացեալ զտանիս նախ 'ի պարտուցդ պահ ունելոյ նմա, և ոչ այսչափ միայն, այլ և 'ի զայրոյթ գրգռեալ՝ իբրեւ անբան ոք վա- րեցար ընդ նմա » ։

Ամօթապարտ և կորակոր զաչս 'ի խոնարհ արկեալ ման- կանն, խոստացաւ այնուհետեւ խնամով հսկել զնովաւ, և մի երբէք տալ զանձն 'ի բարկութիւն ։

## 42

### ՄՈՒՐԱՑԻԿ ԵՒ ՆԱՍՐԷՏՏԻՆ

Ի ճահ, յարմար
Կառուցանել, շինել
Ստիպաւ, (ամէլէ)
Խարխուլ, խախուտ

Ճիգն, մեծ աշխատութիւն, ջանք
Կարկառել զաջ, աջ ձեռքը երկնցնել
Լնուլ լցցէ, լեցնելով լեցնէ, այ-
[սինքն՝ շատ լեցնէ

Տաժանումն, յոգնութիւն

---

Ի ճահ իւրում անմըտութեան խրատել զանմիտն է արժան։
Երբեմն իւր տուն կառուցանէր Հագարացին Նասրէտտին։
Առ շինուածոյն ըղկայ առեալ մուրացիկ ոմն անցաւոր,
Բարձր 'ի տանեացն 'ի վայր կոչէ զճարտարապետն ըստիպաւ։
Նա ընդ խարխուլ սանդուղս 'ի վայր ճըգամբ մեծաւ իջանէ.
Եւ իբրեւ գայ, ողորմութիւն 'ի նմանէ
կարկառելով զաջ մուրացիկըն խընդրէր։
Ցայնժամ ըղհետ իւր 'ի վեր,
Ընդ նոյն սանդուղս ըղնա նովին տաժանմամբ
Ածեալ մինչեւ անդր 'ի տանիս, ասէ ցընա Ծերունին,
«Լընուլ լըցցէ տէր ինքն ըղպէտըս քոյին»։

---

## 43

### ԳԱՆՁԱՊԱՀ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

Ի սկզբան անդ, առաջ
Աւագութիւն, մեծ պաշտօն՝ պաշտօ-
Արդարամտութիւն, հաւատարմու-
Յաճախել, շատնալ [թեան
Յանձն էին նմա, անոր յանձնուած
Թանկագին, սուղ [էին
Յաւելուլ, աւելցնել՝ ըսել դարձեալ

Վարել կենցաղ, ապրիլ
Հարուստ, ճոխ (ընչաւոր)
Մտախոհ կալ, մտածման մէջ կենալ
Գնացք, ընթացք, վարք
Ձեռնթափ լինել, ձեռք քաշել
Վեհ, բարձր
Ցասումն, բարկութիւն

---

Թագաւորի ումեմն պարսկի յոյժ սիրելի էր գանձապահ իւր, որ 'ի սկզբան անդ ոչ այլ ինչ էր բայց հովիւ պարզ, և ապա եհաս 'ի բարձրագոյն աւագութիւնս, արդարամտութեամբն իւրով և հանճարով:

Վասն որոյ յաճախեցին նմա նախանձաւորք, և ամբաստան եղեն զնմանէ առ իշխանն իբր այն թէ խորէր նա յարծաթոյ և 'ի թանկագին իրաց անտի՝ որ յանձն էին նմա: Եւ յաւելուին զի պահէր զայնոսիկ զգուշութեամբ 'ի սենեկի ուրեք փակելոյ ահագին դրամբ երկաթեաւ: Եւ իբրեւ յայց ել իշխանն նախարարին իւրում, ետես արդարեւ դուռն մի գաղտնի, որպէս պատմեցաւ նմա: Իսկոյն ետ բանալ զայն և յապուշ հարաւ ոչ այլ ինչ գտանելով անդ բայց սրինգ մի և եթ, ցուպ և մախաղ և աղքատին հանդերձս հովուականս:

Գանձապահին տեսեալ յայնժամ զզարմացումն տեառն իւրոյ, ասէ. «Հովուական վարէի կենցաղ 'ի մանկութեան իմում, և դու, ո՛վ արքայ, դու ետուր ինձ թողուլ լքանել զպայմանն իմ նախկին առ 'ի յանձն առնել ինձ զմեծամեծ պաշտամունս՝ զորս ընում: Զօրհանապազ մտանեմ 'ի սենեակ այսր՝ հարուստ մի ժամ կալ մտախոհ յառաջին վաստակս, և սրնգաւս յեղանակել երգս ախորժելիս յունկն իմ, որպէս երբեմն նուագէի 'ի գովեստ Արարչին: Թո՛ւլ ինձ [illegible]էս եթէ զրպարտութիւն ինչ արարեալ է ոմանց զգնացից իմոց: Ներեսջիր ինձ արդ ձեռնթափ լինել 'ի գործոյս և դառնալ 'ի հայրենիս՝ ուր անցուցի զբարեբաստագոյն աւուրըս կենցաղոյս»:

Խելամուտ եղեւ իշխանն վեհից առաքինութեանց պաշտօնէին և գրգռեալ 'ի ցասումն ընդդէմ զրպարտողաց նորին, գիրկս էարկ գանձապահին իւրում և ոչ միայն չեթող նմա հեռանալ 'ի նմանէ, այլ և հաստատեաց զնա 'ի պաշտամունս իւր, և մեծապարգեւ մեծարեաց զնա:

## 44

### ԿՌԻՒ ՄԿԱՆՑ ԵՒ ԱՔՍԻՑ

Շանթ , կայծակ
Ի պարտութիւն մատնիլ , յաղթուիլ
Տալ ճակատ , կռուիլ
Աքիս , (կզաքիս) անասուն
Վէպ , պատմութիւն
Լայնատարր , ընդարձակ , լայն
Անդնդախոր , շատ խորունկ
Անձաւ , (մաղարա)
Նուրբ , բարակ
Կապելայ , գինետուն
Հապշտապ , (վախէն) աճել
Մազապուր զերծանիլ , հազիւ ա- [զատիլ
Սաղար , զօրավար
Արկածք , գլխու եկած վտանգ
Ազն , ինք , ազգ
Աւագանի , պատուական մը ծէծերը
Խաժամուժ , անկարգ խառնուրդ

---

Ի պարտութիւն մատնեալ Մըկանց 'ի տալ ճակատ ընդ Աքսից ,
( Որոց վէպք 'ի կապելայս նըկարին ) ,
Մինչ դառնային 'ի փախուստ ,
Հազիւ անկեալ 'ի նուրբ ծակտի հապըշտապ ,
Զերծան ուրեմն 'ի մահուանէ մազապուր ։
Բայց սաղարք նոցին եղջերս 'ի գըլուխ իւրեանց բերելով ,
Նըշանաւորս 'ի ճակատուն երեւել
Զի զհետ իւրեանց այլ զօրականըն գայցէ ,
Կառեան 'ի դըրունս անդ և դերի 'ի թըշնամեաց վարեցան ։
Զորըս զենեալ յաղթականին , սուզեալ ժանեօք առ ընկլոյզ
Ի լայնատարր որովայնին յանդընդախորն 'ի յանձաւ ։
Յորժամ արկածք չարեաց զազինըս շուրջ պատեալ պաշարեն ,
Վըտանգի աւագանին . իսկ խաժամուժըն դիւրաւ
Պատըսպարեալ գտանէ անձին ապաստան ։

## 45

### ԵՐԵՔԻՆ ՁԿՈՒՆՔ ԿԱՐՄՐԱԽԱՅՏՔ

| | |
|---|---|
| Կարմրախայտ, կարմիր ալաճա ունե- [ցող | Մկանունք (ջուրց), (ջրերուն) ե- [րեսը |
| Բարեբաստ, երջանիկ | Առ ինչ, ինչու համար |
| Խաղխամ, (ֆորմուլէ) | Ճախր առնուլ 'ի ճեմ, քալելու [ատեն թռչկոտել, ցատկել |
| Լայնածաւալ, խիստ լայն | Խայտալ, ցատկել (ուրախութենէն) |
| Ծուփք, (ջրոյն) երեսը | |

Առն միոջ էին երրեակ ձկունք ոսկեփայլք՝ զորս եդեալ յականակիտ ալիս լճակի, արկանէր նոցա յաճախ փշրանս հացի՝ ասելով. «Ձկունք մանրիկք, եթէ կամիք լինել բարեբաստք, մի անցանիցէք երբէք ըստ խաղխամդ այդ՝ երթալ 'ի լայնածաւալ լիճ անդր՝ որ առընթեր կայ, և մի լողայցէք ընդ մկանունս ջուրց յորում ժամու չեղէց ես առ ձեօք»։

Ի միում աւուրց ասեն ցմիմեանս լճաբնակքն. «Ահա արդարեւ այր խստասիրտ, որ 'ի տանջանս մեր դնէ զհաճոյս իւր. առ ինչ ոչ 'ի վեր ելցուք երբեմն 'ի ծուփս անդ ալեաց, և զինչ վտանգ իցէ մեզ եթէ գնասցուք 'ի լիճ անդր»։

Ասէ մի 'ի նոցանէ. «Երթայց անդր ճախր առնուլ 'ի ճեմ»։ «Եւ ես, ասէ միւսն, զբօսայց սակաւիկ ինչ յարեւու»։ Սակայն երրորդն ասէր ընդ միտս իւր. «Այրս այս սիրէ զմեզ, զի յոյժ ցանկալի է նմա վայելել 'ի տեսիլ մեր, և ջամբել մեզ փշրանս հացի։ Անշուշտ իրաւունք են նմա արգելլոյ մեզ զայս՝ ոյց թէպէտ չիցեմ խելամուտ, այլ սակայն հպատակ եղէց»։

Եկաց մնաց նա 'ի խորս անդ ջուրցն, թէպէտեւ խաղառնէին զնովաւ եղբարք իւր և ծիծաղէին զանմեղութեամբ նորա։ Այլ զինչ դէպ եղեւ։

Որ չոգան 'ի լիճ անդր մեծատարած, եկուլ զնա գայ-

լանձուկն մի, և անդր 'ի վերայ հասեալ խայտացելումն ընդ երեսս ջուրց՝ յափշտակեաց զնա յօդս 'ի վեր և ճարակեցաւ։

Մի և եթ ոք զերծ եկաց յաղէտից անտի. այս այն էր՝ որ իմաստուն գտաւ և հնազանդ։

ʌʌʌʌʌʌʌʌʌʌ

## 46

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՆՈԽԱԶ

| | |
|---|---|
| Հնարիլ, ջանալ | Ցորդառատ, շատ առատ |
| Խուսափել, փախչիլ | Դաւանս նիւթել, խաբէութիւն ը- |
| Ցանգէտս, ցեխոտուրով | Ճահիճ, (գուբեր) [նել՝ խորհել |
| Ոլորտ, բոլորտիք, կողմերն | Ալեւոր, ճերմակ մազեր ունեցող (ծե- |
| Նոխազ, արու այծ [լոծ | Ի վեր վազել, վեր ցատկել [րունի) |
| Ծարաւահիւծ, ծարաւէն մաշած՝ հա- | Շրջափակ, չորս կողմը բոց |

---

Այր խորամանկ եթէ 'ի վտանգ անկանի
վնասուք այլոց հնարի անտի խուսափել։
Աղուէսու անկեալ յանգէտս 'ի ջրհոր,
Մինչդեռ փակեալ կայր շուրջ 'ի բարձր ոլորտից,
Դիմեալ նոխազ ծարաւահիւծ 'ի նոյն վայր,
Եհարց թէ .քա՞ղցր էր ջուրն և Ճ՞ր յորդառատ։
Իսկ նա դաւանս նիւթելով «էՀ այսր, ասէ, բարեկամ,
Այնքան է ջրոյս քաղցրութիւն, զի ոչ յագիմ ըմպելով»։
Եւ իբրեւ էջ Ալեւորն,
Աղուէսն ընդոստ ընդ բարձր եղջերսն 'ի վեր վազեաց 'ի դըրոյն,
Եւ զՆոխազն եթող խրրեալ 'ի շրջափակ ճահճի անդ։

ʌʌʌʌʌʌʌʌʌʌ

47

### ՃԱԳԱՆԱԿՔ

| | |
|---|---|
| Որկրամոլ, շատակեր | Հրանուտ, կրակ դարձած |
| Թխաթոյր, գոյնը մուխ (գօմեր) | Գաղախ, մոխեր |
| Երկբայել, տարակուսիլ | Ճչել, պոռալ |
| Առնուլ գնոց, ստակով առնուլ | Արագ արագ, շուտ շուտ |
| Նա աւանիկ, նա մանաւանդ | Վերառաքել, վեր հանել |
| Բունալիր, ծէր լեցուն | Գողօնք, գողցուած բան |

Ազգի ազգի, տեսակ տեսակ

---

Մատթէոս էր մանուկ ոմն յոյժ որկրամոլ: Ի միում յաւուրց եւտես 'ի վաճառանոցի ուրեք շագանակս գեղեցիկս, և զի չէր երբէք նորա ճաշակեալ անտի, եհարց ցվաճառող կինն՝ եթէ լաւագոյնք ինչ արդեօք էին պտուղքն այնոքիկ թխաթոյրք ։

Պատասխանի ետ կինն և ասէ. « Զիք ընդ այդ երկբայել. գնոց առ 'ի ամանէ, տէր իմ պատանեկիկ, և տեսցես որպէս անուշահամք են պտուղքս, նա աւանիկ յորժամ եփեալ լիցին ընդ ջերմաջերմ մոխրով» ։

Այլ Մատթէի զամենայն զարծաթ իւր սպառեալ վասն ազգի ազգի մրգաց, ոչ այլ դարձուցանելոյ վաճառողին զթիկունս, և յայնժամ ձգեալ զձեռն իւր 'ի կողով անդր շագանակացն՝ էառ բունալիր և խոյս ետ անդէն ։

Ապա եկեալ 'ի տուն ծնողաց իւրոց՝ գաղտագողի էջ 'ի խոհանոցն, և ոչ զոք գտեալ անդ՝ անցեալ եկաց առ կրակարանին, եդ զշագանակսն ընդ հրանուտ գաղախաւն, և իբրեւ 'ի ջերմութենէ անտի սկսան չչել, նորա զուարճացեալ 'ի ձայնէ նոցին, և վասն արագ արագ եւս խորովելոյ զայնոսիկ, ծածկեաց ընդ բոցավառ ածխովք, և փչէր ուժգին ։ Յանկարծ մի 'ի շագանակաց անտի պայթուցեալ մոխիրս և ածուխս վերառաքեաց ընդ երեսս խօթամիտ մանկանն, որ մեծագոչ աղաղակաւ ընթանայր վեր 'ի վայր ընդ

տունն բոլոր , որպէս թէ զլոյս աչացն կորուսեալ ։ Ի ճայթմանէ անտի և 'ի գոչիւն աղաղակի մանկանն , ծնողք նորա և սպասաւորք որ 'ի տանն՝ զահի հարեալք ընթացան ։ Յայնժամ յայտնեցան գողօնք նորա , որովք յանցապարտ զանձըն կացուցեալ էր , և շատ իսկ կրեաց տառապանս մինչեւ յաչացն բժշկել , և խելամուտ եղեւ զի որկրամոլութիւն թերութիւն է անարգ , որ և զմարդիկ առաջնորդեալ կարէ ածել 'ի գողօնս ։

---

## 48

### ԱՒԱԶԱԿ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

| | |
|---|---|
| Հուժկու , ուժեղ | Ջհետ ձգել , ետևէն քաշել |
| Արի , քաջ | Ուժգնապիրկ , ուժէն կապկպած |
| Կորզել , խլել , յափշտակել | Աղերս արկանել , աղաչել |
| Ոսոխ , թշնամի | Սուսեր , սուր |

---

Բարիս յայլոց յանիրաւի պահանջէ այր չարագործ ։
Յաւազակէ յանկարծ երբեմն ըմբռնեալ
Քահանայ ոմն , հուժկու բազկաւ և արի ,
Կորզեաց ըզսուր 'ի ձեռանէ ոսոխին ․
Եւ զնա ըզհետ առեալ ձըգէր ուժգնապիրկ ։
Աղաչաւոր յայնժամ գողն արկ զայս աղերս ․
« Խնայեա՛ դու յիս որ հանապազ 'ի բեմին
“ Խաղաղութիւն ամենեցուն ” քարոզես » ։
Ում քահանայն՝ « խաղաղութիւն արդարութեամբ յաջողէ »
Ասաց և զնա սուսերըն հանդերձ ած աւանդեաց ատենի ։

---

49

## ԱՌԻՒԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Ողջոյն, ամբողջ
Թաւալգլոր անկանել, գլորել իյնալ
Աղերսական, աղաչող
Երթ յետս իմ, կորսուէ առջէս
Խրոխտապանծ, գոռոզաբանութեամբ
Վարմ, որոգայթ (թակարդ) [պարծող
Դէմ դնել, երթալ

Մանուածապատ, ոլորած՝ պատած
Պրծել, խալըսել
Ծայրասուր, ծայրը սուր
Եղծանիլ, աւրուիլ (շէնքը)
Ապրիլ, ազատիլ
Բանս 'ի մէջ արկանել, խօսք բա-
[նալ ընել

---

Զօրն ողջոյն պարտասեալ յորսոյ՝ ննջէր Առիւծ յայրի ուրեք շուրջ զորով զբօսնոյր ամբոխ բազմութեան Մկանց ։ Մի 'ի նոցանէ 'ի սողոսկել ընդ ժայռս 'ի վեր՝ Թաւալագլոր անկաւ 'ի վերայ Առիւծու՝ որ ընդոստ 'ի քնոյ լեալ՝ կալաւ ըզ խօթամիտն հզօր ճիրանաւն իւրով ։ Աղաչէր զնա Մուկն աղերսական բարբառով և ասէր ․ « Ցի՛ս, ո՛ Առիւծ, յակամայից մեղայ քեզ, զի ոչ կարացեալ կալ յոտին սահեալ անկայ 'ի վերայ քո ։ Օրհաս մահուս ոչ յիմիք լիցի քեզ պիտանացու ․ արդ շնորհեա ինձ զկեանս իմ, և ծանիցես զիս արդեօք երախտապարտ քեզ մինչ 'ի սպառ » ։

« Ե՛րթ յետս իմ » գոչեաց Առիւծն խրոխտապանծ, 'ի վեր առեալ զճիրան իւր ․ և Մուկն ոչ հեալով պատասխանւոյ՝ խոյս ետ արագընթաց ։

Իսկ Արքայն անտառաց 'ի մտանելն անդրէն 'ի քուն, ոչ դադարէր 'ի մրմռելոյ, « Թուի ինձ, ասէր, զի զերախտագիտութենէ բանս արկ նա 'ի մէջ, հետաքրքրական իմն է գիտել թէ զիա՛րդ կամ իւ իւիք մարթ իցէ ինձ գոլ երախտապարտ Մկան » ։ Յետ սուղ ժամանակաց մինչդեռ 'ի խնդիր կաղնոյ շրջէր Մուկն ընդ անտառս՝ լուաւ մռնչիւն իմն յուսահատ, և ասէր՝ դէմ եդեալ յայն կողմն ․ « Ահա առիւծ մի անկեալ

'ի վտանգ »: Ապաքէն եւեթ յայնժամ զԱռիւծն' որ խընայ-եաց երբեմն 'ի կեանս իւր' ըմբռնեալ յորոգայթի, զոր ոմն յորսորդաց եդեալ էր յորս էրէոց: Լարք նորա ճարտարո-րէն հիւսեալք մանուածապատ պրկեալ կային շուրջ զԹա-Թիւք Առիւծուն, ցորչափ գուն գործէր նա պրծել զանձն 'ի վտանգէն. և ոչինչ օգնէին նմա ոչ ճիրանք նորա ահար-կուք և ոչ ժանիք ծայրասուրք:

Յայնժամ ասէ Մուկն. « կա՛ց միա, սիրեցեալդ իմ, Թե-րեւս եղէց քեզ պիտանի »: Զայս ասացեալ սկսաւ կրծել զԹելս վարմիցն, որ մի ըստ միոջէ քակեալ և եղծեալ' ելս փախստեան ետուն Առիւծուն: Եւ այսպէս ապրեցաւ նա 'ի ձեռն Մկանն:

Տես քանիօն ճշմարիտ է զի ամենայն ոք կարօտ գտանի փոքրագունի ումեք քան զինքն, և զի ամենայն գործք բա-րիք զարժանաւորն ընդունին զվարձ:

50

## ԱՐՋ ԵՒ ՄՐՋԻՒՆ

| | |
|---|---|
| Խիթալ, վախնալ | Գոռեխ, էշամեղու (էշէք առըսը) |
| Նուաստ, խոնարհ | Բոռեխ, (եաբան առըսը) |
| Հնարիմաց, հնարք գտնող | Պիծակ, (աթ առըսը) |
| Ստորերկրեայ, գետնի տակ եղող | Տիզ, (կէնէ) |
| Նախահոգ, առաջուընէ հոգ տանող | Մժիխ, (սէվրի սինէկ) |
| Տնտեսութիւն, տան կառավարու- | Բրէտ, պիծակ |
| Համազգի, նոյն ազգէն եղող [Ըն—ն | Կարեկից, ցաւցող |

Հարկանել, խայթել, կծել

---

Որչափ հըզօր ոք և իցէ, պարտի խիթալ 'ի նուաստից,
Զի հնարիմաց ճարտարութիւն յաղթէ յաճախ զօրութեան:
Ըզբոյն Մըրջեան զըստորերկրեայ փորեաց Արջ
Եւ զնախահոգ տընտեսութեան նորա եկեր ըզվաստակ,
Յայնժամ երթեալ միաբանէ նա ընդ իւր

Գունդ համազգեաց, գոռեխ, բոռեխ և պիծակ,
Տիզ և մրժիլս և բրէտ և այլ նըմանիս,
Որ կարեկիցք ըմին՝ դիմեալ հարկանեն
Զաչս, ըզռընգունս և զլըսելիս գազանին.
Եւ առ ցաւոցն յորժամ բացեալ նորա զբերան իւր գոչէր,
Նոքա 'ի փոր նորին մըտեալ զաղիս նորա խոցոտեն։

---

## 51

### ԿԱՂԻՆ

| | |
|---|---|
| Անյողդողդ, հաստատամիտ | Սայրասուր, բերանը սուր |
| Արդարակորով, շատ շիտակ մարդ | Բուռն հարկանել, բռնել |
| Խիթալի, կասկածելի | Սնարք, գլխոյն վերեւն |
| Որեար (յոգ.), մարդիկ | Շեշտ, շիտակ (զարնելը) |
| Ապարանք, պալատ | Ջէնընկէց լինել, ձեռքը յետ: |
| Ցելուզակ, ավազակ | Կաշկանդել, կապել |
| Ցարդինս ածել, յառաջ բերել՝ [կատարել | Վասն էր, պատճառ |
| | Խեճեպ, կեղեւ |

---

Ծերունին կոմս Հենրիկոս էր այր անյողդողդ և արդարակորով։ Որչափ սիրելի էր նա բարեաց՝ այնքան ատելի իսկ էր և խիթալի չարամիտ որերոյ։ Ստահակք յոգունք՝ որ 'ի դիպահոյշ կալեալ էին վասն դժնէից գործոց ինչ իւրեանց, միաբանեցին ընդ միմեանս, և վարձս ետուն միում յինքեանց զի սպանցէ զնա 'ի վաղիւ անդր 'ի գիշերի։

Ի նմին աւուր եղբօրորդիք կոմսոյն յայց եկին առ նա։ Հաճ և գոհ ընդ տեսիլ սիրալիր մանկանցն, պաշտեաց անդէն նոցա՝ տանձ և խնձոր և ողկոյզս խաղողոյ և կաղինս և ազգի ազգի միրգս։ Իբրեւ մեկնեցան նոքա, և ինքն չոքաւ 'ի քուն մտանել՝ յանձն եղեալ պաշտպանութեան Տեառըն և ննջեաց անխռով։

Ի մէջ գիշերի՝ մարդասպանն որ գաղտագողի մտեալ էր

յապարանսն, եկն 'ի սենեակ անդր, և առաջնորդեալ 'ի լոյս ճրագի՝ մերձ մատեաւ յանկողին կոմսոյն, ունելով յաջում դաշոյն սայրասուր:

Այլ յեղակարծ լսելի եղեւ ճայթիւն մեծաձայն, և կոմսըն ընդոստ 'ի քնոյ յարուցեալ ետես զչարագործն. բուռն եհար իսկոյն զհրացանէն՝ որ կախեալ կայր առ մնարիւք մահճին և իբրեւ պատրաստէր արձակել զայն չեշտ 'ի հարուած, յեղուզակն՝ զդողանի հարեալ և զէնընկէց եղեալ՝ խնդրէր 'ի նմանէ շնորհել զկեանսն:

Ցայնժամ կոմսոյն կոչեալ զսպասաւորս 'ի ձայն զանգակին, դիմեցին նոքա 'ի ներքս և յարձակեալ 'ի յայրն չարագործ կաշկանդեալ կապեցին զնա պնդութեամբ: Կամեցան ապա գիտել զվասն էրն աղմկին, որ զարթոյցն 'ի քնոյ զՀենրիկոս, և տեսին զի մի 'ի մանկանցն անզգոյշ արկեալ էր 'ի վերայ տախտակամածին խեճեպ կաղնոյ՝ զոր աւազակին ջաղխեալ էր ընդ ոտիւք իւրովք 'ի գնալն: « Բարերար Տէր, գոչեաց յայնժամ ծերունին, վերնախնամ տեսչութեամբ քով կեղեւ ինչ կաղնոյ փրկեաց զիս 'ի մահուանէ և զյանցաւորն մատնեաց 'ի ձեռս արդարութեան »:

Այսպէս պատճառք դուզնաքեայք կարեն երբեմն իրս մեծամեծս յարդիւնս ածել:

52

## ԳԱՅԼ ԵՒ ԱՆԴԵԱՅ

| | |
|---|---|
| Զառամեալ, ծերացած | Կարկել, պատրաստել |
| Ապաշաւել, զղջալ | Ընդ հուպ, շուտ օրէն |
| Պահ ունել, պահպանութիւն ընել | Հէն, աւազակ |
| Անդեայ, եզ՝ կով | Նախճիր, որսորդութիւն |

Զի սովորոյթ հնացեալ փոխի 'ի բնութիւն,
Ուսուցէ զայն առաջիկայս քեզ առակ:

Գայլ զառամեալ չոգաւ առ հօտն ասելով.
« Ապաշաւեմ, տըրտմեցուցի ըզձեզ շատ ,
Աւել 'ի տան ձերում թողէք ածել ինձ ,
Պահ մանկըտւոյդ կալայց յայլոց 'ի գայլոց : »
Նոքա 'ի գութ շարժեալ ընդ այն , սաստեն շանց ,
Կարկել մի՛ ուրս ծերունւոյն մեղանչել :
Ընդ հուպ 'ի հէնըն զըղջացեալ զարթեաւ քաղց ,
Եւ 'ի սովոր նախճիրս մինչ այն ինչ ըզժանիս արկանէր ,
Հասեալ շընեարն ըզնա հազիւ հալածեցին խածատմամբ :

53

## ՓԻՃԻՆ ԼԱՅՆԱՆԻՍՏ

Գամագիւտ լինել, ուզածը առաջ [գտնել
Ունել առ իւր, քովը պահել
Ականակապ, ծանրագին քարերով [զարդարուած
Ժխտել, մերժել
Զորմէ բանք լինէին, որուն վրայ կը [խօսուէր
Եղո՛ւկ, աւա՛ղ
Առ 'ի հաւաստիս բանիցդ, խօսքդ [հաստատելու համար
Խելայեղիլ, խելքը փախցնել
Տա՛լ հրաժեշտ ողջունի, «Մնաք [բարեաւ» ըսել
Անկանիլ, անցնիլ
Սուղ ինչ ապա, քիչ մը ետքը
Ի պատճառս կարճմտութեան, ան- [համբերութենէն պարտասելով՝ կեղ- [ծելով
Ցամել 'ի գալ, գալու ուշանալ

---

Երիտասարդք երկու Պետրոս և Վահան անուն՝ 'ի միում աւուրց երեւեցան յատեան դատաստանի : Խօսել կալաւ առաջինն և ասէ . «Ընկան ամք երեք յորմէհետէ ուղեւորեալ եղէ 'ի տար աշխարհ , և զի համարէի զնա իբրեւ զմի 'ի լաւագունից բարեկամաց իմոց , ետու սմա ունել առ իւր մատանի մի ականակապ , այլ արդ ժխտէ տալ զառանդն իմ» :

Իսկ Վահան ձեռն առ սրտին եդեալ՝ պատասխանի ետ և ասէ . «Երդնում 'ի պատիւ իմ, զի անծանօթ է ինձ ամենեւին մատանիդ՝ զորմէ բանքդ են , թուի խելայեղեալ բարեկամ իմ վաղեմի » :

Յայնժամ ասէ Դատաւորն . « Պետրէ , և լցէ՞ քո վկայ ո՞ք առ 'ի հաւաստիս բանիցդ » : Պատասխանի ետ և ասէ Պետրոս . « Եղո՛ւկ , 'ի պահուն յորում յանձն արարի նմա զմատանին , չգոյր այլ ո.ք վկայ բայց փիճին լայնատարած՝ առ որով հրաժեշտ ողջունի տուաք միմեանց » :

Կրկնեալ անդրէն վահանայ ասէ . « Կա՛զմ և պատրաստ կամ յերդնուլ , զի ոչ իսկ ճանաչեմ զծառն զայն՝ որպէս ըզ մատանին » :

Ի վերայ եած Դատաւորն և ասէ . « Երթի՛ջի՛ր , Պետրէ , հատանել ոստ 'ի փիճւոյդ , և բեր զայն առ իս . իսկ դու , վահան , դարձի բարեկամիդ մնասցես աստ » :

Սուղ ինչ ապա յետ մեկնելոյ պատանւոյն , 'ի պատճառս կարճմտութեան ասէ Դատաւորն ցվահան . « Ջկարեմ 'ի միտ առնուլ թէ ընդէ՞ր Պետրոս յամէ 'ի գալ , բա՛ց զպատուհանդ և հայեա՛ց , ո՞չ դեռ ևս երեւի ո.ք » :

Պատասխանի ետ վահան և ասէ . « Բայց , Տէր դատաւոր , չէ հնար զի դարձցի այսր 'ի ժամուս , քանզի ծառն հարուստ միով փարսախաւ հեռի է աստի » :

Յայնժամ գոչեաց Դատաւո՛րն . « Ստախօս ժպի՛րհ , երդմամբ ուրեմն գամագիւտ լինէի՛ր հաստատել , զի բնաւին անծանօթ էր քեզ ծառն այն : Գիտես ապա զմատանին որպէս և զփիճին : Դարձո՛ վաղ զաւանդն առ ստացիչն իւր , և դու 'ի պատուհաս նենգութեան քո արկցիս 'ի բանտ » :



## ՎԱՌԵԱԿ ԱՌ ՄԱՐԳԱՐԻՏՆ

| | |
|---|---|
| Բազում այն է զի , շատ անգամ | Տարփաւոր , սէրող |
| Աղբեւք , ( կէտադրելէ ) | Վիպել , պատմել |
| Ցարգ , պատէն , արժէք | Հասու լինել , հասկցող ըլլալ |

Ի խնդիր բլրոյ վառեակ 'ի յաղբեւս,
Ցանկարծ գլտեալ մարգարիտ,
«Ով մեծդ, ասէ, և պատուական, անկեալ յանարգ 'ի տեղւոջ.
Թէ ոք յարգի քում տարփաւոր քեզ ստատանօր հանդիպէր,
Ցառաջին պայծառութիւնդ այնուհետեւ դառնայիր.
Իսկ իմ գտանել ըզքեզ, որ զբուտ յոյժ առաւել մեծարեմ,
Ոչ քեզ օգնէ ամենեւին և ոչ ինձ»:
Զայս այնոցիկ վիպեմ որ չեն հասու իմոցս իմաստից:

## 55

### ԱՅԾԱՐԱԾՆ ՊԱՐԿԵՇՏԱԿՐՕՆ

| | |
|---|---|
| Պարկեշտակրօն, | բարի վարք ունեցող |
| Այծերամակ, | այծերու խումբ |
| Խոնարհել աւուր, | երեկոյ ըլլալ |
| Խուն ինչ, | քիչ մը |
| Հայթայթել, | ճարել |
| Բոկանի, | բոպիկ |
| Վայրավատին, | ցիրուցան |
| Խոնարհիլ 'ի վերջ կոյս, | վերջանալ |

| | |
|---|---|
| Պնդել, | կարծրացնել |
| Պաղեալ, | սառած |
| Ջառաղեմ, | խոժոռ՝ դէմ երեսով |
| Գեռ, | ցեխ |
| Գործակից լինել, | մէկու մը հետ [գործ ճեղքել |
| Ձերծ կալ, | ազատ մնալ |
| Շաղախել, | շաղուել |
| Արարք, | գործ |

Աղքատն Արամայիս արածէր զայծերամակ իւր յայգուէ մինչև 'ի խոնարհել աւուրն: Խուն ինչ չահ էր նմա 'ի վաստակոց անտի իւրոց, զի չկարէր իսկ հայթայթել զոյգս կօշկաց առ 'ի պատսպարել զոտս իւր բոկանիս ընդդէմ ծայրասուր ժայռից ուր գնայր 'ի խնդիր վայրավատին այծուցն, կամ ընդդէմ փշոց մացառաց՝ ընդ որս հարկ էր նմա անցանել: Ի վերջկոյս խոնարհել աշնայնոյ, յորում ժամանակի սառամանիք պնդէին զերկիր, առաւել եւս կրէր տառապանս:

Ի միում աւուրց մինչդեռ մանկիկն խաչնարած արտաս-

ուալից աչօք կծկեալ կայր ուրեք՝ առ 'ի ջեռուցանել զոտս իւր պաղեալս, այր ոմն ձառադէմ, զոր ճանաչէր նա դատապարտեալ յաճախ վասն գողութեանց իւրոց և եղեռանց, մատեաւ առ նա ասելով. « Սիրեցեալդ իմ, եկ մտանել ընդ իմեւ 'ի ծառայութիւն, զի քան զքոյդ շահաւէտ է արուեստ իմ, գնեցից քեզ կօշիկս և հանդերձանս. և յայնժամ ոչ լիցին քեզ պէտք վաստակոց և ոչ եւս թաւալեսցիս ընդ գեռ և ընդ տիղմ»: Պատասխանի ետ մանուկն և ասէ. «Ո՛չ այդպէս, նախամեծար համարիմ գնալ հետիոտս և կալ մընալ պարկեշտակրօն քան շահել արծաթ բազում՝ գործակից քեզ եղեալ: Գիտես իսկ ապաքէն 'ի փորձոյ զի չէ մարթ ումեք զերծ կալ հանապազ յարդար վրիժուց մարդկան: Մայր իմ ասէր ցիս յաճախ՝ զի լաւ է ունել ոտս աղմաթաթաւս քան շաղախել զձեռս յանիրաւ արարս»:



56

## ԿԱՐՈՒԱԿ ԵՒ ԴԵՐՁԱԿ

| | |
|---|---|
| Կարուակ, (եօկէճէ) | Կարկատել, կարկըտել |
| Բարք, բնաւորութիւն | Հոլովիլ, դառնալ |
| Աւուրն պարէն, օրուան հաց | Ակնկալ, յուսացող՝ սպասող |
| Ջեռնհաս, հասուն | Սինլքոր, պայազի (ծուղծուղիկ) |
| Հարկանել զպէտս, պէտքը լեցնել | Բազմահոյլ, շատ խումբերով |
| Մտադիւր, յօժարակամ [հաւանելի | Ցեղափոխել, փոխել |

Նսեհ, բախտ

Ի մեծանալ բարեկամիդ՝ ըզգոյշ լեր
Մի՛ զնա առ քեզ համարել նոյն, զի փառք ըզբարըս փոխեն:
Կարուակ աւուրըն պարենի 'ի շահ հագիւ ձեռըն հաս,
Սիրով ումեմըն Դերձակի էր բարեկամ սիրեցեալ,
Միմեանց ըզպէտս հարկանէին մըտադիւր.

Սա ըզնորէն ըստ պիտոյից ըզհանդերձ,
Նա ըզսորէն կարկատելով ըզկօշիկ :
Անուոյ բախտին հոլովելոյ ակընկալք՝
Որպէս յաճախ այս պատահէ 'ի վոսփոր
վերամբառնալ և սինլըքոր որերոյ ,
Դաշն ընդ միմեանս եդին յիշել միշտ զիրեարս ,
Եւ 'ի նըշան դաշինն՝ Ես նոյն եմ ասել :
Ջուարթ 'ի կարուակն հայեցաւ բախտ, եկաց երկրորդ արքայի,
Ի բազմահոյլ պաշտօնէից շուրջ պատեալ,
Բազմեալ փառօք 'ի գահոյս :
Եւ յետ աւուրց Գերձակն 'ի դուռն ուրախակից գոլ նըմին .
Եւ մատուցեալ առ նա՝ Ես նոյն եմ ասէ ,
Իսկ բարեկամն յեղափոխեալ յայնժամ ըղբարս ընդ նըսեհ ,
Պատասխանէ . Դու ըներէր նոյն էջեւ , եւ չեմ ասնոյն նոյն :

~~~~~~

## 57

### ԱՐՁԱԳԱՆԳ

Անգիտանալ , չգիտնալ
Ցապուշ կրթիլ , ապշիլ
Հարցուած , հարցում
Ի շայրոյթ գրգռիլ } շատ բարկա- [նալ
Ի բարկութիւն բրդիլ
Խօթամիտ , անխելք
Լուտանք , ըշնամանք

Մոլիլ , խաբուած վազել [ուած
Մացառաղօղ , մացառի մէջ պահուը-
Աներկեւան , ճշմարիտ , անկասկած
Վայրապար , պարապ տեղը
Խոյզ և խնդիր առնել , փնտռել
Անողոք , կարծր սիրտ ունեցող
Ակնկալութիւն , բանի մը յուսալը

---

Անգիտացեալ դեռ եւս Միհրանայ թէ զի՞նչ էցէ արձագանգ ձայնի , 'ի միում աւուր մինչդեռ գտանէր 'ի դաշտի ուրեք խորհեցաւ աղաղակել « օ՛, օ՛, օ՛ » . լուաւ անդէն զնոյն բարբառ 'ի մերձակայ անտառէն « օ՛, օ՛ » :

Մանուկն յապուշ կրթեալ սկսաւ ձայնել . « Ո՞ ես դու »
և արձագանգն զնոյն առնէր հարցուած « Ե՞ս դու » :
~~~~~~

Ի զայրոյթ գրգռեալ ընդ այն Միհրանայ՝ ուժգին առանու խօսել «Եւ՛ս դու ուրեմն մանուկ խօթամիտ» . «Մանուկ խօթամիտ» կրկնեաց արձագանգն 'ի խորոց անտառակին ։ Եւս քան զեւս բրդեալ 'ի բարկութիւն կրկնէր և երեքկնէր Միհրան զլուտանսն՝ զորս արձագանգ հաւատարիմ հատոյց յունկն իւր անդէն ։

Զայրագին ապա մոլեալ ընդ անտառն բոլոր առ 'ի գիւտ մանկանն՝ զոր համարէր մացառապօղ թագուցեալ անդ, կամէր խնդրել զվրէժ իւր 'ի նմանէ , այլ, որպէս աներկեւան իսկ է , ոչ զոք եգիտ անդ ։

Ցետ վայրապար խոյզ և խնդիր առնելոյ, դարձաւ 'ի տուն և պատմեաց մօր իւրում, թէ ստահակ ումն չար թագուցեալ յանտառին թշնամանեալ էր զնա ։ Պատասխանի ետ մայրն և ասէ . «Որդեակ իմ, զանձնէ և եթ լինիս ամբաստան , քանզի զքո բանս միայն լուեալ ես ։ Որպէս տեսանես յաճախ զպատկեր քո յալիս , այնպէս և արդ զձայն բարբառոյդ լուեալ է քո ։ Եթէ բանս ախորժելիս ասացեալ էիր , ոչ թըշնամանօք առնուիր պատասխանի » ։

Եթէ լիցուք անողոք և տմարդիք առ նմանիս մեր , չմնամք 'ի նոցանէ լաւագունի իմիք ակնկալութեան ։

58

## ՍՈՒՏ ՎԿԱՅ ԵՒ ՆԱՄՐԷՏՏԻՆ

Օրէն է , օրէնք է , կը վայլէ
Ներհակ , հակառակ (ներս )
Գաւակ , ետեւի կողմը (յետոյն, էշտոյն)
Թեկն (յգ.) Թիկունք , կռնակ
Խնդրել 'ի փոխ , փոխ առնել
Ստանալ , առնուլ , ունենալ
Շուրջ ածել , շուրջ կողմ պտըտցնել
Ծանակել , խաղք ընել
Անկանել 'ի նոյն տճիր , նոյն յան-
Շրուշակ , առնչ [ցանկին մէջ էյնալ
Անուղղայ , ուղղութեան չեկող
Ապիրատ , չար , անիրաւ

Ախորժելի է խրատ ընդ ծաղըր խառնեալ։
Սուտ զոք վըկայ դատապարտեալ ատենի,
Ըստ սահմանեալ պատժոց յաշխարհն Արեւելից,
Որպէս օրէն է անդ ներհակ հեծուցանել ըղեա յէշ,
Դէմք 'ի գաւակ, թեկն 'ի շըրուշակ, և շուրջ ածել 'ի ծանակ՝
Խընդրէր ատեանն ըզմերունւոյն գրաստ 'ի փոխ։
Նա զյաւանակն եւ միանգամ աննախանձ.
Ապա 'ի նոյն անկեալ ոճիր անուղղայն,
Դարձեալ զիշակ իւր մատոյց Ծերըն աղաչեալ.
Իսկ 'ի խընդրել զայն ատենին միւսանգամ,
Գնաց Նասրէտտին առ ապիրատն և ասէ.
« Կամ դադարեա յոճրէդ և կամ ստացիր քեզ էշ, ժանտ
դու այր »։

~~~~~~~~~~

59

## ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Դարձ առնել, դառնալ
Լոկ, սոսկ, պարզ (սալթ)
Մահապարտ, մեռնելու դատապարտուր
Պարսաւել, վար զարնել
Աւաղել, ողբալ
Տալ զանձն 'ի վերայ կամ փոխանակ (ուրուք) — (մէկու մը) համար կամ տեղը յօժարութեամբ մեռնիլ
Ազդ առնել, իմացընել
Սլանալ, թռչիլ, վազել
Շողալ, փայլիլ, վառիլ
Գրկախառն, իրար գրկած
Արտասուակցորդ, մէկուն լացող
Ցարտասուս հարկանել, լալ
Վազել, ցատկել
Ժամանել, հասնիլ
Ամբոխ, իրար անցում
Հաղորդ լինել, մասնակցիլ

---

Իբրև Դամոն և Փինտիաս բարեկամք միմեանց դարձ առնէին 'ի Սիրակուսա, դէպ եղև Դիոնիսեայ բռնաւորի ամբաստանութեամբ լըկով դատապարտել զՓինտիաս 'ի մահ։ Իսկ մահապարտն խնդրեաց պարապ, մինչև երթեալ 'ի քա-
~~~~~~~~~~

ղաք մի որ մերձ էր անդր՝ հրաման տացէ վասն իրաց իւրոց կարեւորաց. և խոստացեալ դառնալ ըստ ժամադրութեանն, մեկնեցաւ՝ թողեալ երաշխաւոր իւր զԴամոն 'ի վտանգ մահու։

Երկարաձգեցան իրք Փինտիասայ, և մօտեցաւ օրհաս սպանութեանն. ամբոխն խռնեալ, կէսք պարսաւէին զԴամոն, և կէսք աւաղէին զնա. իսկ նա խաղաղութեամբ երթայր 'ի մահ, վստահ 'ի դարձ բարեկամին իւրոյ, և յօժարագոյն եւս 'ի տալ զանձն փոխանակ նորա։

Եւ իբրև եկն եհաս ժամն դառնութեան, ահա ամբոխ աղաղակի ազդ առնէր զգալուստ Փինտիասայ։ Դիմեաց սրլացաւ նա 'ի տեղի պատուհասին, մինչ շողայր սուսեր զգըլխով բարեկամին, և գրկախառն արտասուակցորդք վիճէին ընդ միմեանս, յափշտակելով յիրերաց զբախտ մեռանելոյ ընդ սիրելւոյն։ Ընդ որ տեսողացն ամենեցուն յարտասուս հարեալ, և նոյն ինքն բռնաւորն վազեալ յաթոռոյն՝ խընդրեաց չքնաղ բարեկամութեանն նոցա լինել հաղորդ։

Տեսանես, որդեակ, որչափ ինչ կարէ բարեկամութիւն, մինչև առ հասարակ զամենեսին բռնադատել 'ի սէր և 'ի զարմանս։

60

## ԱՍՏԵՂՔ ԵՒ ԼՈՒՍԻՆ

| | |
|---|---|
| Առնել տիւ, ցորեկ ընել | Երկնախումբ, երկնքին միաբանութիւն |
| Գէթ, գոնէ | Աղօտանալ, լոյսը նուազիլ |
| Հաւանիլ, համոզուիլ | Զինչ լիցի մեզ, ի՞նչ պիտի ըլլանք |
| Կաճառ, ժողով | Արփենի, արեւ |
| Ի մարտ խիզախել, կռուի ելնել | Գալ 'ի փորձ, փորձուիլ |

Համախըմբեալ երբեմն յերկինս Աստեղաց՝
« Ցոլմամբ զօրով մեր, ասեն,
Ընդէ՞ր հանդոյն Արեգական և Լուսնի
Ոչ առնեմք տիւ, և ոչ իսկ գէթ՝ լուսաւորեմք ըզգիշեր » ։

« Ջի ոչ, ասէ ոմն 'ի ծերոց, 'ի միասին երեւիմք » ։
Հաւանեցաւ ընդ այն կանխաւն երկնախումբ ։
Այլ 'ի ծագել յայնժամ Լուսնի՝ ըզպարտութիւն յանձն առեալ,
« Եթէ այսպէս, ասեն, բընաւ.քս աղօտացաւ.ք 'ի սմանէ,
Զի՞նչ լիցի մեզ 'ի ծագել լուսապայծառ Արփենւոյն » ։
Խրատէ առակս՝ ընդ տըկարի գալ 'ի փորձ,
Մինչչեւ 'ի մարտ ընդ հըզօրի խիզախեալ։

ʌʌʌʌʌʌʌʌʌʌ

## 61

### ԵՂՋԵՐՈՒ

| | |
|---|---|
| Հնար լինել, կարելի ըլլալ | Ի վրէպ անկանիլ, վրիպիլ՝ ծուռ |
| Փոյթ, ջանք, հոգ | Հեղուլ, թափել [երթալ |
| Հոգ խնամոց ունել, խնամք տանիլ | Հեղձնուլ, մղձել, խեղդուիլ՝ մարիլ |
| Թեւակոխել, հասնիլ, մտնիլ | Ի գուճս իջանել, ծնկան վրայ գալ. |
| Հետավարել, հալածել | Մահացեալ, մեռած |
| Վարել (զգործ), կատարել (գործը) | Անպարտակիր, որ պարտքն չի տար |
| Շտապել, խիստ աճապարել | Նուագ, անգամ [վճարելու |
| Հեծեծանք, խղճուկ հառաչանք | Ոճիր եղեռն, շատ մեծ յանցանք |

---

Մանուկ դեռ եւս էր Տրդատ՝ յորում ժամանակի հայր նորա՝ որսորդ աջողակ՝ սպանաւ յաւազակէ ումեմնէ՝ զորոյ չեղեւ հնար գտանել զհետս քայլիցն ։ Մայր մանկանն յաւելեալ 'ի փոյթ և 'ի վաստակս՝ հոգ խնամոյ կալաւ զդաստիարակութենէ որդւոյն, մինչեւ թեւակոխեալ 'ի տիս պատանեկան՝ եմուտ նա յաշակերտութիւն առ ումեմն 'ի վաղեմի բարեկամաց հանգուցելոյն ։ Ի սուղ ժամանակի զարգացաւ մանուկն 'ի գիտութիւն պաշտամանն, և կամէր վարել ըզգործ հայրենի արուեստին ։

Ի միում աւուրց հետավարէր զեղջերու մի չքնաղագեղ, և էր ընդ նմա բազմութիւն որսորդաց յոյժ, մինչդեռ 'ի

փախուստ շտապէր անաստունն անցեալ առընթեր նոցա , հուր 'ի հրազէն իւր արար նա , այլ հարուածն անկաւ 'ի վրէպ ։ Ցայնժամ լսելի եղեւ 'ի մացառուտ թփոց ճիչ աղիողորմ՝ որ գոչէր ․ «Աստուած իմ , հարայ կարեվէր » ։ Տրդատ դիմեաց իսկոյն 'ի կողմն յայն՝ ուստի գայր ձայն հեծեծանացն , և ետես անդ ծերունի զոմն շաղախեալ յարիւն , որ հեղձնոյր մղձկէր , յորհաս վախճանին հասեալ ։

Ընթացան որսորդքն 'ի ձայն աղաղակին , և ժողովեցան շուրջ զնովաւ՝ որ մերձ էր 'ի մահ ․ մինչդեռ Տրդատ 'ի դաւ-ճըս իջեալ , հեղոյր արտասուս առ յուսահատութեանն և պաղատէր առ ծերունին ներել նմա , յայտ արարեալ զի 'ի ձգել զհրազէնն՝ չէր զնա տեսեալ ։ Այլ վիրաւորեալն պատաս-խանի ետ նմա և ասէ ․ «Մի՛ լիցի քեզ խնդրել յինէն թո-ղութիւն , հասեալ է ժամ զի 'ի վեր հանից քեզ որդ գաղտ-նի ինչ ցարդ անծանօթ 'ի բնաւից ։ Ես եմ հուղկահարն այն՝ որ սպան զհայր քո ։ Եւ արդարեւ աստ իսկ 'ի տեղւոջս ան-կաւ նա մահացեալ , և 'ի սմին տեղւոջ , որդեակդ անպար-տակիր զոհին , պարտ էր քեզ յանդէտս խնդրել յինէն ըզ վրէժ ոճիր եղերանս , որ զքեզ որբ 'ի հօրէ կացոյց » ։ Ի նը-ւաղել տակաւ ձայնի նորա , զայս 'ի յետին նուագ մրմնջէր , «Արդարադատ է Աստուած » ․ և ապա փչէր զոգին ։

Արդարութիւն Աստուծոյ թէպէտ յամրընթաց՝ այլ գիտէ միշտ հասանել զհետ մեղապարտին ։ Եթէ կարի յոյժ երկայ-նամիտ գտանիցի Աստուած , 'ի հանդերձելումն անցէ զմեօք պատուհաս ։

~~~~~~~~

## 62

## ՆԱՄԲԻՏՏԻՆ ԱՌ ԶՕՇԱՔԱՂՆ

| | |
|---|---|
| Ցանօթ առնուլ , ծանօթացնել ծօր- | Երկայնաւուրս մաղթել , «աղօթքն |
| Զօշաքաղ , ագահ [ծածկել— համար | Տենչ , փափաք [ աղ օրհնեան» ըսել |
| Ցեա աւուրց ինչ , տանէ մը օր ետքը | Հատուցանել զպարտ մանկանս- |
| Ցնկնել , ծնիլ ( անասնոց ) | [ցուր ; Ծնողաց հանդէպը կատարել |
| Զեղծանիլ , ելլել չարաչար ծռիլ | Նշաւակել , խայտառակել |
~~~~~~~~

Նարէստոնեայ երբեմն յանօթ առեալ կաթսայ 'ի դրացւոյն ,
Միւս այլ փոքրիկ ընդ անօթոյն ետ յետ աւուրց ինչ անդրէն ,
Իբր այն թէ ձագ էր ըզբոցովըն ցընկնեալ ,
Իբր այն թէ ոչ կամէր զայլոյ ինչ խորել :
Նա օգտակար պարզմըտութեամբ դրացւոյն զեղծեալ , էառ զայն :
Աւուրք անցին , և միւսանգամ աղաչեալ ,
Եւ խընդագին , զի ծնանիցի միւս այլ թերեւըս կորիւն .
Այլ նա դրացւոյն երկայնաւուրըս մաղթեաց ,
Որպէս թէ զպարտ մահկանացուի էր հատուցեալ հէք սանին :
Եւ 'ի բառնալ նորին բողոք՝ թէ իբրըր սան մեռանէր ,
Պատասխանի ետ խորագէտ Տերունին .
« Եթէ ծնանի սան , և ընդէ՞ր չիցէ նըմա մեռանել » :
Նըշաւակեաց այսպէս նա զկոյր յոմենչ շահու :

63

## ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆՈՒԿ

Դաղար , փարախ , օխու (ուչխուրուց)
Գամփռ , պահապան շուն
Մերձաբնակ , մօտը քօմշու
Ջբանիւք անկանել , խօօթ քըլու-
Դալար , կանաչ՝ խաշ [դուշէլ
Բուժել զքաղց , անօթութիւնը ան-
Ժուժկալ , պահեցող [ցընել
Հարկանել զպաստուք , ծալըալը
Կնձնի , (քուրս ալաճ) [անցընել
Սակաւապէտ կեալ , ազ քանաղ
Շաղիղ , չիս [ապրէլ
Զոյգ ընդ բանին , ալս խօօթը ը-
Զգօն , խէլօք [ակլըն հէփ
Գէշ անկանել , լէպաշ օլու էյնալ
Փաղաքուշ , անուշ խօսող
Ժանիք , ակռայ (քաշանաց)

Ոչխարք 'ի դաղարս իւրեանց կային յապահովի , ննջէին գամփռունք և հովիւն ընդ հովանեաւ լայնատարած կնձնւոյ երգակցէր օրնգաւ ընդ այլ մերձաբնակ հովիւս : Եկն անդր Գայլ սովալլուկ անցեալ ընդ ցանկ չըջապատին առ 'ի դէ-

[illegible] խաչանց ։ Գտանուկ մի անփորձ՝ որ
[illegible] դրամներ անկար ընդ նմա և տայ ց
[illegible] հանել կար այսր ։ Պատա
[illegible] խաս ծաղկաւէտ և գալարազգե
[illegible] ուտել քաղցր քան ՚ի գեղամի
[illegible] միասնաբանեալ լինել ճարտկաւոր ատ
[illegible] յականակիտ ալե
[illegible] . Իմ այլ խմիք պէս
[illegible] նախատակիրտ թեան՝ որ ուսուցանէ ա
[illegible] Պատասխանի ետ Գտանուկն և տայ .
[illegible] ձեռնտրեալ և սակաւիկ
[illegible] եթէ այդ այդպէսէ, եղբայ
[illegible] ՚ի միտսին ։ Եւ
[illegible] իւր գնալ ՚ի
[illegible] ժանեաց ժամ
[illegible]

[illegible] այնօցիկ,
[illegible] և [illegible] ՚ի
[illegible]

ԾԴ

[illegible]

| | |
|---|---|
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |

[illegible]

Միւսըն զի ինքըն փութացեալ կալեալ զայն ։
Վէճն 'ի յատեան ածաւ, տըւեալ ժիժմակն յաւանդ դատողին՝
Արդ երկուստեք մինչ վիճէին դատախազք ,
Նա զպարարակ միջուկն եկեր ըզխեցւոյն ,
Եւ զխեփորիցն ըզմին միում վըճռեալ ըզմիւսն եւ միւսում ։

.vvvvvvvvvv

## 65

### ԱՂՈՒԷՍՔ ԵՐԿՈՒ

| | |
|---|---|
| Խեղդամահ առնել , խեղդել | Անխայել , խնայել |
| Անցանել ընդ փորձ իրաց , փոր-[ձերէ անցնել | Ոչ առցեն զկայ երբ 'ի բարւոք } գործը աղէկ չըլ-լար, վնասնէ կըլլայ |
| Մարի , հաւ | Քարակոշկոճ , քարով ծեծուած |
| Կոտորած , արիւնհեղութիւն | Ապերասան , անսանձ |
| Յառապայս , աղօթքային համար | |

---

Աղուէսք երկու յեղակարծ մտին գիշերի 'ի հաւանոց ու-րեք , և խեղդամահ արարին զագաղաղն , զմարիս և զվառ-եակս , և կոտորածին այնուիկ յագեցան ։ Մին յերկոցունց անտի՝ երիտասարդ վառեալ յեռանդն և յաշխոյժ ցանկայր կլանել զամենայն . իսկ միւսն՝ ծեր ագահ՝ կամէր պա-հել պաշարս ինչ յառապայս՝ ասելով . « Որդեակ իմ , ընդ փորձ իրաց կենցաղոյս անցեալ իմաստնացեալ գտանիմ , զի շատ ինչ տեսի յորմէհետէ բացան աչք իմ 'ի լոյս . չէ օրէն ճաշակել զամենայն 'ի միում և եթ աւուր . յաջողեաց մեզ բախտ , գանձ է զոր գտաքս՝ յոր պարտ է մեզ անխայել » ։ Պատասխանի ետ երիտասարդն և ասէ . « Իղձ է ինձ ճաշա-կել զամենայն ցորչափ եմս աստ , և կշտապինդ յագել ցա-ւուրս ութ , զի վայրապար է այսրէն առնել դարձ . վաղիւ ոչ առցեն զկայ իրք 'ի բարւոք , տանուտէրն առ 'ի խնդրել զվրէժ մահուան հաւուցն , սատակամահ կորուսցէ զմեզ » ։

տել զհօտս խաշանց ։ Գառնուկ մի անփորձ՝ որոյ չէր ինչ տեսեալ, զբանիւ.ք անկաւ ընդ նմա և ասէ ցորկրամոլն . « Զի՞նչ 'ի խնդրել հասեալ կաս այսր » ։ Պատասխանի ետ Գայլ և ասէ . « Խոտ ծաղկաւէտ և դալարազգեաց ։ Գիտես իսկ զի չի.ք ինչ առաւել քաղցր քան 'ի գեղածիծաղ և 'ի կանաչաւէտ մարգագետնի լինել ճարակաւոր առ 'ի բուժել զ.քաղց, և հարկանել զպասու.ք յականակիտ ալեաց վտակի . զերկոսին եւս գտի աստանօր, բայց այլ իմի.ք պէտ.ք են ինձ . սիրող եմ իմաստասիրութեան՝ որ ուսուցանէ սակաւապէտ կեալ » ։ Պատասխանի ետ Գառնուկն և ասէ . « Արդարեւ ո՞չ ճաշակես բնաւ զշաղիղ անասնոց և սակաւիկ մի խոտ իցէ՞ քեզ բաւական, եթէ այդ այդպէս է, եղբայրաբար վարեսցու.ք կենցաղ ճարակաւոր.ք 'ի միասին » ։ Եւ զոյգ ընդ բանին եթող Գառնուկն զփարախ իւր դնալ 'ի մարգագետին անդր՝ ուրանօր գէշ անկաւ ժանեաց ժուժկալ իմաստասիրին ։

Զգոյշ լերո՛ւ.ք 'ի փաղա.քուշ շողոմից այնոցիկ, որ.ք առաքինիս զոլ պարծին . 'ի գործոց նոցա և ո՛չ 'ի բանից դատեսջի.ք զնոսա ։

64

## ԴԱՏԱԽԱԶՔ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ

| | |
|---|---|
| Դատախազ, դատ բացող | Խեփոր, ( [illegible] ) |
| Իրաւախոհ լինել, համաձայնիլ | Տալ յաւանդ, աւանդել |
| Ցոռի, ձեռ | Միջուկ, միջինը |

---

Իրաւախոհ լինել յոռի պայմանաւ
Ընտրելագոյն է քան վիճել յատենի ։
Զընկորս.ք երկու 'ի միասին կալան ըստուար մի ոստրէ ,
Մին պահանջէր զայն, զի նախ իւր էր տեսեալ,

Միւսըն զի ինքըն փութացեալ կալեալ զայն ։
վէճն 'ի յատեան ածաւ, տըւեալ ժիժմակն յաւանդ դատողին՝
Արդ երկուստեք մինչ վիճէին դատախազք,
Նա զպարարակ միջուկն եկեր ըզխեցւոյն,
Եւ զխեփորիցն ըզմին միում վըճռեալ ըզմիւսն եւ միւսում։

.WWWWWW

## 65

### ԱՂՈՒԷՍՔ ԵՐԿՈՒ

| | |
|---|---|
| Խեղդամահ առնել, խեղդել | Անխայել, խնայել |
| Անցանել ընդ փորձ իրաց, փոր-[ձերէ անցնիլ | Ոչ առցեն զկայ } Գործը աղէկ չել- |
| Մարի, հաւ | երբ 'ի բարուոջ } լաւ, վտանգէ կեցաւ |
| Կոտորած, արիւնհեղութիւն | Բարակոշկոճ, փայտով ծեծուած |
| Ցառապայս, աղուէսին համար | Ապերասան, անսանձ |

---

Աղուէսք երկու յեղակարծ մոլին գիշերի 'ի հաւանոց ուրեք, և խեղդամահ արարին զագաղաղն, զմարիս և զվառեակս, և կոտորածիւն այնուիկ յագեցան ։ Մին յերկոցունց անտի՝ երիտասարդ վառեալ յեռանդն և յաշխոյժ ցանկայր կլանել զամենայն. իսկ միւսն՝ ծեր ագահ՝ կամէր պահել պաշարս ինչ յառապայս՝ ասելով. «Որդեակ իմ, ընդ փորձ իրաց կենցաղոյս անցեալ իմաստնացեալ գտանիմ, զի շատ ինչ տեսի յորմէհետէ բացան աչք իմ 'ի լոյս. չէ օրէն ճաշակել զամենայն 'ի միում և եթ աւուր. յաջողեաց մեզ բախտ, գանձ է զոր գտաքս՝ յոր պարտ է մեզ անխայել» ։ Պատասխանի ետ երիտասարդն և ասէ. «Իղձ է ինձ ճաշակել զամենայն ցորչափ եմս աստ, և կշտապինդ յագել ցաւուրս ութ, զի վայրապար է այսրէն առնել դարձ. վասն ոչ առցեն զկայ երբ 'ի բարուոջ, տանուտէրն առ 'ի խնդրել զվրէժ մահուան հաւուցն, սատակամահ կորուսցէ զմեզ» ։

Ցետ այսպիսեաց բանից երկաքանչիւրն փութացաւ 'ի կատարումն խորհրդոյն. այնչափ ինչ եկեր երիտասարդն զի պայթուցեալ և հազիւ կարաց գնալ մեռանել 'ի խշտի իւր, և ծերն՝ որ իմաստնագոյն զանձն համարէր՝ 'ի չափու ունելով զախորժակս և սակաւապէտ կերով, 'ի վաղիւ անդր կամեցաւ դարձեալ ելանել յորս և 'ի տանուտեառնէն քարակոչկոճ սպանաւ ։

Այսպէս իւրաքանչիւր տիոց են թերութիւնք. երիտասարդք ապերասանք են և անյագք 'ի հաճոյս իւրեանց, իսկ ծերք՝ անուղղայք յագահութեան ։

## 66

### ՆԱՍՐԷՏՏԻՆ ԵՒ ՆԱՒԱՎԱՐ

| | |
|---|---|
| Պարզել զառագաստ, առագաստ | Կտաւ, իբր՝ առագաստ |
| Թի վարել, թիերը քաշել [քանալ | Ցայտ առնել, յայտնել, ցուցնել |
| Վայր, տեղ | Անվարձ թողուլ, վարձքը չտալ |
| Սակ, վարձ, գին | Ցարաժամ, միշտ |

Երկ, աշխատութիւն

Նաւարկել դէպ եղեւ երբեմն Նասրէտտինայ ընդ Վոսփոր,
Եւ արկ հընդիկ դահեկանաց սակ ընդ տաճիկ նաւաստւոյն ։
Նա աջողակ հողմոյ պարզեալ զառագաստ,
Հասոյց ըղհիւրն 'ի դէմ եղեալ վայրն առանց թի վարելոյ.
Եւ 'ի խընդրելն ըզսակ վարձուն 'ի նմանէ,
« Հողմ 'ի կտաւին, ասէ, չընչեաց և ըզնաւն ալիք մըղեցին.
Թէ դու և ես նաւարկեցաք հաւասար,
Զի՞ դու յինէն խընդրես վարձ » ։
Ցայտ առակաւս այսուիկ արար Ծերունին,
Թէ իբր անվարձ թողու ռամիկն յարաժամ զերկ հանճարոյ ։

67

## ԱՒԱՆԴ

Մթերել, դիզել, ժողվել
Խնուլ (խցան), գոցուել
Շահավաճառ, վաճառական
Լիութիւն բաւականի, պէտքը հո-
[գալու կարողութիւն
Անձկութիւն, նեղութիւն (վիճակը)
Ի կիր արկանել, գործածել
Ձեռն արկանել, ձեռք դպցնել
Լուծանել, քակել
Եւ եւս, ալ աւելի
Սրտաճմլիկ, սիրտ ճմլող
Ցանդիման լինել, դէմը ելնել
Ընդէ՞ր իցէ քեզ մնալ, ինչո՞ւ պէ-
Ճոխանալ, հարստանալ [տք մնաս
Ականատես, (վկայ) աչքով տեսնող
Ի բաց տար, տար մէջէ
Ձեռնմերձ լինել, ձեռք դպցնել
Խիճ, քարէ կտորտանք
Գամ մի, մէյ մը
Թուիմ, ինծի այնպէս կերեւայ
Գիտուն լիցի քեզ, գիտցած եղիր
Կարծրատորր, կարծր՝ խիստ
Պատառել զերկիր, հողը հերկել
Տեփորայ, փող
Կալանք, բանտ դնելը՝ բռնելը
Ծախել, հատցնել
Առասան, (չուան)
Ցայնժամ, մինչեւ այն ատեն

---

Ի մեկնել Պետրոսի 'ի բանակ իւր, չոգաւ 'ի խնդիր ֆրանսուայ բարեկամին իւրոյ, և ասէ ցնա. «Աւասիկ յաւանդ տամ քեզ հազար ֆրանգս 'ի խնայողութեանց իմոց մթերեալս, կալջիր զայս առ քեզ, մինչեւ եկից ես դարձեալ և յայնժամ յանձն առնիցես ինձ»։

Չոգաւ Պետրոս 'ի բանակ անդր, և ֆրանսուա պահէր զգանձն զայն։ Այլ արկածից 'ի վերայ հասեալ՝ խցան ճանապարհք շահավաճառից իւրոց, և անկեալ ընդ պարտեօք՝ չունէր ինչ 'ի լիութիւն բաւականին։

Մի ոմն 'ի բարեկամաց իւրոց ասէ ցնա. «Տես յոր անձկութիւն անկեալ կաս, ո՛վ ֆրանսուա, ընդէ՞ր ոչ 'ի կիր արկանես զարծաթն Պետրոսի. կարէ՛ անդան հատուցանիցես նմա»։ Պատասխանի ետ ֆրանսուա և ասէ. «Ոչ այդպէս, լաւ է ինձ մեռանել անսուաղ քան ձեռն արկանել յարծա-

*թըն յայն. տեսանես զի ոչ իսկ լուծի զբերան պարկին, յոր-մէ հետէ Պետրոս յանձն արար ինձ զայն, և ոչ իսկ բացից, ոչ ես, ոչ կին իմ և ոչ որդիք. միթէ իցէ՞ ինչ պէտք պար-զունակաց կամ բանալեաց առ 'ի պահել՝ որ ինչ յանձն եղ-եալ է առն ումեմն պարկեշտի»:*

*Անցին ամք վեց, և լցաւ ժամանակ զինուորական ծա-ռայութեան Պետրոսի, բայց ընդ երկար ոչ ոք գրոյց ինչ ըզ-նմանէ բերէր, և անգիտանայր նա թէ զի՞նչ եղեւ նմա: Գուցէ անկեալ էր նա 'ի մարտին, գուցէ գերի վարեալ առ թշնամիս. բայց ոչինչ զայսցանէ լսելի լինէր համբաւ: Աղէտք Փրանսուայ յաւելան և եւս, և արդարեւ տեսարան սրտա-ճմլիկ յանդիման լինէր աչաց այնոցիկ՝ որք միանգամ ա-կանատեսք էին թշուառութեանն՝ յոր տառապէր նա ըն-տանեօք հանդերձ:*

*Այլ ոք ասէ ցնա «Մեռա՜ւ Պետրոս. չի՞ք ընդ այդ երկ-բայել, զի ոչ զրոյցք ինչ լինին զնմանէ, դու միայն ժառան-գորդ ես նմին, ընդէ՞ր իցէ քեզ մնալ աղքատ՝ հսկելով և եթ գանձուդ՝ որով մարթ է քեզ ճոխանալ»: Պատասխանի ետ Փրանսուա. «Ճոխանա՜լ, ոչ ոք կարէ բարութեամբք այ-լոց լինել ճոխ և փարթամ. էհ, 'ի բաց տար, ոչ երբէք ե-ղէց ձեռնմերձ 'ի պարկն Պետրոսի որպէս թէ լցեալ էր այն խճով... եթէ գամ մի բացից զայն՝ թուեցայց տեսանել բազմութիւնս օձից զի ելանիցեն անտի հեղձամղձուկ առ-նել զիս»:*

*Գիտուն լիցի քեզ, զի լաւ է ինձ ճաշակել հաց կարծ-րատորր և պատառել զերկիր, քան այլոյ ուրուեմն հացիւ կեալ:*

*Փրանսուա եկաց աղքատ և եղկելի՝ փակեալ ունելով զպարկն 'ի դարանի ուրեք:*

*Եւ եղեւ յաւուր միում զի լսելի լինէին ընդ երկիրն ընդ-այն խառնաձայն աղաղակք թմբկաց և շեփորայից, և ահա գայր երեւէր գունդ զօրաց, ընդ որս էր և Պետրոս՝ որ դառնայր յետ երկարատեւ կալանաց արձակեալ:*

*Եւ տեսեալ նորա զբարեկամն Փրանսուա այնքան աղքա-տացեալ և չուառական, ոչ եբաց զբերան խօսել զարմա-*

Թոյ պարկէն, համարելով՝ զի այրն հէք 'ի Թշուառութեան անդ իւրում ծախեալ էր զայն ։

Բայց Փրանսուա չոգաւ գտանել զնա և ասէ. «Ողջոյն ընդ քեզ, որ ժամանեցերդ 'ի հայրենիս քո. ընդ երկար ըսպասեաց քեզ արծաթդ» ։ Եւ էած առ նա զպարկն կապեալ նովին առասանաւ, հաւատարմագոյնս պահելով զայն ։

## 68

### ԴԱՍՏԻԱՐԱԿ ԵՒ ՄԱՆԿՏԻ

| | |
|---|---|
| Ծափս ծափել, ձափ վուրմէլ | Պարաւանդել, կապել |
| Համբակ, աշկերտ | Կենդանութիւն գոչել, «կեցցէ» |
| Կարթ, (չէնկէլ) | Մանծաղ, երեսկոտ [պուտուլ |
| Պարան, (հալաթ) | Անժամ, փորձանք (վուքուաթ) |
| Անութ, (գօլթուգ) | Ի դէպ ժամու, յարմար ժամանակի մէջ |

Չէ բաւական տեսչի ընդ մանկունս ըզգուշութիւն ամենայն,
Զի անխոհեմ խրատու ածէ անձին վըտանգ յեղակարծ ։
Ոմն յանըզգոյշ վարժապետաց պատուէր ետ
Ծափս 'ի փուընգալ իւրում ծափել մանկըտւոյ ։
Աւուրք անցին, անկաւ սափորն 'ի ջըրհոր.
Վարժապետին խոնջեալ կարթիւք և ճանկօք,
Ապա պարան ըստուար առ ինքն ետ բերել.
Եւ շուրջ ածեալ զանթովքըն զայն պարաւանդ,
Ըզգուշութեամբ իջուցանել զինքն 'ի գուբ,
Զի զդոյլն 'ի վեր ածցէ անտի զպըղընձի ։
Այլ 'ի փուընգալ իւրում 'ի յէջս անդ յանկարծ,
Թողեալ նոցա վաղվաղակի ըզպարան՝
Կենդանութիւն նըմա ծափիւք գոչէին ։
Մանծաղ 'ի ջուրց յանժամ առեալ նորա զգըլուխ իւր 'ի վեր,
Ասէ անժամ հնազանդելոցն համբակաց.
«Ի դէպ ժամու, ո՛ յոյժ հնազանդ մանկըտեակ,
Կենդանութիւն ինձ մաղթէք» ։

69

## ԵՂԲԱՐՔ ԽՐԵՔԻՆ

| | |
|---|---|
| Ոռնակալիլ, դադրիլ, կենալ | Ընդարմանալ, թմրիլ (ցնցուիլ) |
| Կապտել, կողոպտել | Անփառունակ, անշուք, գձուծ |
| Դայլայլիկ, երգ | Ի շիջանել կայր, մարելու վրայ էր |
| Ջրւնախաղաղ, ջրով ծածկուած | Ծնելասէր, ծնողական սիրոյ յորդոր |
| Բացագոյն, ամենէն հեռու | Անողոքելի, չխղճացող |
| Եղեմնապատ, եղէգով ծածկուած | Շաւիղ, ճամբու հետք |
| Անպատսպար, պաշտպանութեան չու- | Բռնաշունչ, խիստ փչող |
| Լու լինել, լսուիլ [նեցող | Տաժանաքայլ, դժուարաւ քալող |
| Ծաղկել (ալեաց), ճերմկիլ (մազե- | Հետախաղաց, անյայտ |
| Խիտ առ խիտ, քով քով [րու) | Ջրւնակոյտ, ջրին դէզ կոյտ |
| Բարեհամբոյր, հեզ, խոնարհ | Որպէս զի, անոնք որ |
| Պար առնուլ, բոլորուիլ | Փոխել զոտն յոտանէ, ոտք շարժել |

---

Էին յրտագին աւուրք ձմեռայնոյ, 'ի սառամանեաց ոտնակառեալ կային առուք, ոստք ծառոց կապտեալք 'ի սաղարթից, և ոչ եւս լսելի լինէին 'ի դաշտս դայլայլիկք թռչնոց։

Ջրւնախաղաղ ծածկէր երկիր, և 'ի բացագոյն վայրս՝ հայեցուածոց աչաց ոչ այլ ինչ գային 'ի տեսիլ, բայց հովիտք սպիտակազգեստք և բլուրք եղեմնապատք, և ծառք հանգունատիպք ծերունեաց՝ ոյց սպիտակ ծաղկեն ալիք։

Ի վերոյ խիտ առ խիտ հիւղից գեղջն, էր տեսանել զծուխ կրակարանաց զի ամբառնայր, և շինականք բարեհամբոյրք շուրջ զհրովն պար առեալ ջեռուցանէին զընդարմացեալ 'ի ցրտոյ զմատունս իւրեանց, և հայէին ընդ պատուհանս ընդ երեսս տխուր և ամայի դաշտին։

Գաբրիէլ և Կատարինէ աղքատին վարէին կենցաղ և յոյժ կրէին տագնապս 'ի ձմեռնական խստութեանցն՝ զի անինչք էին և անփառունակք։ Եւ խղճիկ նոցա անպատսպար ամենուստեք՝ չնչէր հողմն ընդ ծերպս դրանցն և պատուհանաց, և չէր նոցա բնաւ փայտ բաւական յաւելուլ 'ի հուր անդր որ կայր 'ի շիջանել։

կային առ նոքօք երեքին որդիք նոցա մատաղատիք, զորս սիրէին 'ի գութ ծնելասէր. մանկունք առաքինիք։ Միքայէլ անդրանիկն՝ տասնամեայ էր, ութամեայ Գրիգոր և կրտսերագոյնն 'ի նոցանէ Ռափայէլ՝ որոյ չէր աւելի քան ըզվեց ամս։

Սակայն տեսեալ՝ զի հայր իւրեանց և մայր տառապէին յանողորմելի ցրտոյն, ասեն ընդ միմեանս. «Եկա՛յք, երթիցուք յանտառ անդր, ժողովել ոստս անկեալս 'ի ծառոց և կապեալ խրձունս ինչ՝ բերցուք 'ի տուն մեր»։

Զայս ասացեալ՝ անկան յուղի կոխելով առ ոտն զձիւն՝ որ խնոյր զանցս ճանապարհին ընդ դաշտն. այլ ընդ հուպ ծածկեցաւ յաչաց նոցա տնակն իւրեանց, և մոլորեցան 'ի մանուածապատ շաւիղս անտառին, ժողովելով կեղեւս ծառոց՝ որ 'ի գագաթանց նոցին 'ի բռնաշունչ հողմոց խլեալ անկանէին։ Եւ մինչդեռ այսպէս պարապեալ կային 'ի գործ իւրեանց՝ չզգացեալ իսկ զհասանել գիշերոյ, և կարի հեռացեալ գտանէին՝ տեսին զի օրն 'ի մայր իւր խոնարհէր և ոչ եւս գոյր նոցա հնար գտանելոյ զհիւղ իւրեանց։

Յայնժամ վազվաղակի զխրձունս փայտիցն բարձեալ 'ի յուս՝ պատրաստեցան դարձ առնել 'ի գեօղն։ Այլ տաժանաքայլ էր ուղին, հետախաղաղ ծածկեալ կայր ճանապարհըն 'ի ձիւնակոյտս՝ որ կուտեալ ընդ գարշապարս նոցին ծանրաբեռնէին զկօշիկս նոցա, որպէս զի յետ սակաւուց խոնջք և վաստակաբեկք պարտասեցան 'ի սպառ, և կրտսերն Ռափայէլ ոչ եւս կարէր ընթանալ։

Զի՞նչ առնել էր յայնպիսում դժնդակ պայմանի. մենաւորք գոլով յանտառի անդ՝ ոչ ուստեք նշմարէին նշոյլ ընդ աղօտ զի աւետաւորէր նոցա յարկ ինչ մերձաբնակ. և 'ի բառնալ իւրեանց զաղաղակ, 'ի տխուր միայնութեան անդ յարձագանգաց լայնանիստ անտառաց կրկնէին ձայնք նոցա։ Անդրանիկն յեղբարց անտի փորձ փորձեաց բառնալ 'ի թիկունս զՌափայէլ, այլ այնքան ծանրակիր էր բեռն զի հարկեցաւ դնել զայն յերկիր. և երեքեան եւս հարան յարտասուս։

Սաստիկ էր ցուրտն. հողմ բքաբեր շնչէր ընդ երեսս նոցին և պաղէին արտասուք յիջանել ընդ ծնօտս նոցա, ձեռք

նոցա կարկամեալք էին 'ի ցրտոյ, և ոչ զօրէին նոքա փոխել զոտն յոտանէ ։

Յանժամ փարեցան զմիմեամբք և զգացեալ Միքայելի զի անդամք կրտսերագունի եղբօրն Ռափայելի ցրտացեալք էին և պաղեալք, բուռն արար անձին ջեռուցանել զնա 'ի շունչ բերանոյն, և տեսեալ զի ոչինչ յաջողեցաւ, սակայն և այնու ոչ վարանեալ՝ եհան զհանդերձ իւր և ինքն կացեալ ընդդէմ հողմոյն՝ ծածկեաց նովաւ զմարմին կրտսերոյն ։ Ողբս առեալ հեղույր արտասուս, այլ վասն եղբարցն մանուանդ մերթ կականաբարձ աշխարէր և մերթ գուն գործէր քաջալերել զնոսա ։

Սակայն 'ի խղի անդ իւրեանց հոգային ծնողք նոցա զի յամէին նոքա 'ի դառնալ. մերթ ընդ մերթ ելանէին առ սեամս դրան և հայէին այնքան 'ի բացէ ցոր վայր զօրէին աչք, այլ ոչ ինչ գայր յերեւան ։ Գոչէին յաճախ. «Ռափայէլ, Միքայէլ, Գրիգորիէ». այլ բարբառ ինչ ոչ առնէր նոցա պատասխանի, և ոչ այլ ինչ լու լինէին՝ բայց միայն հաջիւնք շանց ոմանց՝ որ զդաշտացն լուծանէին զլռութիւն ։ Գիշերն յառաջ խաղայր, և նոքա սիրտ 'ի թնդոջ ելին արտաքս ։ Արք ոմանք տեղւոյն այնորիկ չոգան 'ի մէջ գիշերի ջահիւք վառելովք 'ի խնդիր մանկանցն. գտին ուր ուրեմն զեղկելիսն, տեսիլ աղիողորմ. մարմինք նոցա ընդարմացեալք էին 'ի ցրտոյ և թուէին կիսամեռք ։ Տեսանէին նոքա եթէ զիարդ Միքայէլ մերկացեալ 'ի զգեստուէն՝ եղբայրասէր գործովանօք խաղապատեալ էր զմարմնով հիքի մանկանն՝ առ 'ի ջեռուցանել զնա, և առ 'ի տալ ապաստանարան ընդդէմ հողմոց և տեղատարափից ձեանց ։

Զարմացեալ կային արքն ընդ անձնանուէր բոյս բարուց անդրանկին և 'ի վերայ դրկաց իւրեանց բարձեալ զնոսա՝ ածին 'ի հիւղ իւրեանց, լուցին հուր բոցածաւալ և տակաւ ջեռան մարմինք նոցա առեալ կորով և կենդանութիւն ։ Այլ թէ որպիսեաւ խնդութեամբ գիրկս արկեալ ապա միմեանց՝ փարեցան զծնողօք ծնողաց իւրեանց, ոչինչ է պիտոյ ասել զայն աստանօր ։

70

## ՍԻՐԱՄԱՐԳ ԱՌ ՀԵՐԱ

Ծատանալ, ծառանալ
Ձայն արկանել, ձայն հանել
Զմրուխտ, (զմրուխտ)
Նշողել, փայլիլ
Երփներանգ, գոյնզգոյն
Ականակուռ, գոհարով կազմուած
Բակ, շրջանակ
Է՞ր, ինչո՞ւ
Տուտն, (պոչ)
Պարզել, բանալ
Զի՞ պիտոյ է ինձ, ինծի ինչ պէտք է
Հմայք, կախարդութիւն
Գուժկան, գոյժ բերող
Եղջերիկ, եղջերաւոր ձի
Ըղձանալ, փափաքիլ
Լուծանել 'ի տրտունջ, տրտնջել

---

Սիրամարգի բողոք բարձեալ առ Հերա,
Թէ էր ինքեան չէ շնորհեալ ըզսոխակին դայլայլիկ․
Եւ նա բնաւից նախանձելի լեալ հաւուց,
Իսկ ինքն հազիւ ձայն արկեալ՝ լինի հանուրց ծաղրելի ։
Առ 'ի սփոփել ըզնա ասաց Դիցուհին․
« Սակայն գեղով դու յաղթես, յաղթես քոյին մեծութեամբ․
Փայլ 'ի յուլան քում զմրըխտոյ նշողէ,
Եւ 'ի փետուրս երփներանգ
Զականակուռ ըզբակ տուտան քո պարզես » ։
« Զի՞ բնաւ պիտոյ է ինձ, ասէ, համր և անխօս կերպարան,
Ուր 'ի ստորև կամ ձայնիւ » ։
Ցասեալ յայնժամ Դիցուհին․
« Բախտին կամօք այդպէս բաժինք ձեզ տրուան,
Քեզ գեղ, արծուոյ զօրութիւն, գուշակութիւն ագռաւու,
Սոխակի երգ, հըմայք գուժկանք եղջերիկի․
Եւ ընդ իւր ձիր իւրաքանչիւրն է միշտ գոհ » ։
Մի՛ ըղձանար այնմ՝ որ չիցէ քեզ տրուեալ
Զի մի՛ պատրեալ յոյս քո լուծցի 'ի տրտունջ ։

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Բաւական , կարող
Ժանտաժուտ , խէթ դէմքով
Բթացուցանել , բթացնել
Ցափսիթերս խաղալ , ձեռք զարնել
Ջաչացու , կոյր [ վրայ հասնելու
Անխորհուրդ , անխոհեմ
Խանդաղակաթ , սիրով կարօտով լի
Խոշտանգել , տանջել , չարչրկել
Ջառանցել , ( այլայլիլ )
Գրաւաթափ լինել , գրաւ տանուլ
Խիղճ չարեաց , խղճմտանք [ ազատել
Ոչ է ինձ պարապ , ժամանակ չունիմ
Ակումբ , ժողովարան
Աշխարհաքաղաքացի եմ , աշխարհի
Սոյգ , ճշմարիտ [ իմ քաղաքն է
Ածել զնովիմբ , վրայ բերել
Ճառագունիլ , ամօթէն կարմրիլ
Պատեան , սուրի աման ( քող )
Վահանակ ( երեսաց ) , դէմքը ծա-
Սրտմտիլ , բարկանալ [ ծկող ( երեսկալ )
Կատարած , վախճան , վերջ
Առ երի , դողը
Ասպնջական , հիւրասէր
Ներբողել , գովել
Փղձկել յարտասուս , սիրտը լնուլ
Զար , զառ [ ու լալ

---

1.— Սպարտացւոյ ուրումն կացեալ ուղիղ յաջոյ ոտին , ասէր ցԼակեդեմոնացի ոք . « Ոչ կարծեմ, Լակեդեմոնացիդ , թէ կարասցես հանդոյն ինձ կալ ընդ երկար 'ի վերայ միոյ և եթ ոտին » : Նա պատասխանի ետ և ասէ . « Արդարև ոչ , զի և սագ մի գլխովին այդմ չէ բաւական » :

---

2.— Օրէնս բազումս կարգեաց Սոլոն առ Աթենացիս ըստ քաղաքային իրաց , այլ վասն հայրասպանաց ինչ ոչ գրեաց : Եւ իբրև հարցին ցնա զվասնէրն , պատասխանի ետ և ասէ . « Զի ոչ կարծէի, թէ գուցեն մարդիկ ժանտաժուտք , որ ժըպրհիցին սպանանել զհայր իւրեանց և կամ զմայր » :

---

3.— Ոմն ղաչացու գնայր 'ի պատերազմ . ասեն ցնա ոմանք . « Յո՞ երթիցես յայդմ պայմանի . յինչ լիցիս դու

բաւական » ։ Նա պատասխանի ետ և ասէ . « Եթէ չկարացից առնել ինչ, գէթ բթացուցից զսուր թշնամւոյն » ։

---

4.— Վիրաւորեալ ոմն 'ի մարտի, չկարացեալ և ոչ քայլ մի ոտին ընթանալ յառաջ, յափսիթերս խաղայր ընդ երկիր ։ Ամաչէր զի մի ծաղր և ծանակ լիցի այլոց . Յայնժամ պատասխանի ետ մայրն և ասէ . « Որդեակ իմ, քանիօն յիրաւի է խնդալ ընդ արութիւնս քաջութեան՝ քան զամօթի հարկանել ընդ անխորհուրդ ծիծաղս » ։

---

5.— Ի միում աւուրց պատմեցաւ Պղատոնի, զի Քսենոկրատ աշակերտ իւր չարախօսէր զնմանէ, և նա ասէ . « Չհաւատամ » ։ Եւ 'ի հաստատել պատմողաց զբանսն, նա տակաւին յամառեալ ասէր թէ՝ « Չհաւատամ » ։ Իսկ 'ի ցուցանել նոցա հաւաստեօք զբանսն, ասէ . « Անհնար է թէ չսիրիցէ զիս յոր ես խանդաղակաթն գորովիմ » ։

---

6.— Մինչդեռ Դիոգինէս մերկ կիսովին 'ի սաստկասառոյց ձմերայնի, զպղնձի պատկերաւ դիրկս արկեալ կայր, Սպարտացի ոմն եհարց զնա թէ՝ « Խոշտանգիս 'ի ցրտոյդ » ։ Իմաստասէրն ասէ . « Ո՛չ » ։ Եւ կրկնեալ անդրէն Սպարտացւոյն ասէ . « Ապա ուրեմն չէ ինչ քաջութիւն զոր գործեսդ » ։

---

7.— Օտարական ոք Մինդացի եհարց ցԴիոգինէս թէ՝ « Որպէս թուեցաւ քեզ քաղաքս մեր » ։ Եւ նա ասէ ։ « Խորհրդակից եղէ քաղաքայնոցդ փակել զդրունս նորա, թէ դուցէ փախիցէ նա արտաքս » ։ Քանզի փոքրիկ իսկ էր քաղաքն և դրունք նորա մեծամեծք յոյժ ։

---

8.— Այր ոմն ասէ ցԴիոգինէս. «Ո՞ւստի ես, Դիոգինէս, յորմէ՞ քաղաքէ»։ Դիոգինէս ասէ. «Աշխարհաքաղաքացի եմ»։ Եւ միւս ոմն զնովիմբ ածեալ, ասէ. «Թողէք անդր, ասէ, Սինոպացի է դա, քաղաքացիքն դատապարտեցին զնա մեկնել 'ի քաղաքէն»։ Դիոգինէս ասէ. «Եւ ես զքաղաքացիս դատապարտեցի՝ կալ նոցա անդ»։

---

9.— Մի 'ի պատանեաց գեղեցիկ յառաջ մատուցեալ ասաց ինչ բան տգեղ՝ ընդ որ շառագունեալ զամօթի հարաւ մի 'ի հասակակից նորա մանկտւոյն. և ասէ Դիոգինէս ցամօթխածն այն մանուկ. «Քաջալերեա՛ց, որդեակ իմ, գոյնք առաքինութեան են 'ի քեզ»։ Եւ ցմիւսն ասէ. «Չամաչես հանել 'ի փղոսկրեայ պատեանէդ սուսեր կապարեայ»։ Եւ 'ի զայրանալ պատանւոյն և հանել նմա ապտակ՝ ասէ անխռով. «Պարտ է ինձ ուրեմն վահանակ ածել զերեսօք»։

---

10.— Պղատոն էր ամաց քառասնից յուղեւորեալն իւրում 'ի Սիկիլիա տեսանել զլեառնն Ետնա. Դիոնիսիոս բռնաւորն Սիրակուսացւոց ցանկացաւ տեսանել զնա, և եհարց զնա վասն կատարածի բարեաց և արդարութեան և ստոյգ մեծութեան։ Եւ յասել Պղատոնի թէ՝ «Չիք վատ և թշուառ 'ի մարդիկ քան զթագաւոր անիրաւ», սրտմտեալ բռնաւորին ասէ. «Զզառանցելոյ բանս խօսիս»։ Իսկ Պղատոն ասէ. «Եւ դու զբռնաւորի»։ Այլ փոքր միւս եւս, և կորուսանէր զկեանս իւր վասն համարձակ պատասխանւոյն. զի յարձակել զնա բռնաւորին նաւաւ յԵլլադա, հրաման ետ նաւապետին ընկենուլ զնա 'ի ծով, կամ որպէս զստրուկ մի անարգ վաճառել զնա։ Վաճառեցաւ իմաստասէրն, և գըրաւաթափ լեալ՝ ածաւ անդրէն 'ի հայրենիսն։ Եւ յետ սակաւ ժամանակի գրեաց առ նա բռնաւորն իբր ոչ եթէ 'ի խղճէ չարեացն զգաստացեալ՝ այլ առ ցանկութեան մեծարելոյ առ Յոյնս, և աղաչէր զնա՝ խնայել, և մի՛ չարախօսել

զինքենէ ։ Իսկ Պղատոն արհամարհանօք ետ պատասխանի և ասէ. « Ոչ է ինձ պարապ յիշելոյ զԴիոնիսիոս » ։

---

**11.**— Ծերունի ումն՝ որ ցանկայր տեսանել զհանդէս խաղուց յՈլիմպիա, ոչ կարացեալ գտանել անդ աթոռ մի կամ ակումբ, մինչդեռ գնայր տեղի 'ի տեղւոջէ, նախատէին զնա բազումք և ծաղր զնովաւ առնուին, և ոչ ոք կամէր զնա նստուցանել առ երի ։

Իբրև եհաս 'ի վայրն յայն՝ ուր բազմեալ կային Լակեդեմոնացիք, մանկտին բոլոր այլ և բազմութիւն յոյժ արանց յոտն կացին և ետուն նմա տեղի ։ Զայս տեսեալ Յունաց՝ ծափս հարին ամենեքեան ընդ ասպնջական բարս Լակեդեմոնացւոց և իւրաքանչիւր ոք ներբողէր զայս յեղանակ գընացից՝ որ Սպարտացւոց իմն էր սովորական ։ Իսկ ծերունին շարժեալ զգլուխ իւր և զմօրուս սպիտակափառ փղձկեցաւ յարտասուս և գոչեաց. « Եղո՜ւկ, քանի՜ն չար է զի Յոյնք գիտեն զգեղեցիկն, այլ Լակեդեմոնացիք առնուն զայն 'ի գործ » ։

ՎԵՐՋ

# ՎՐԻՊԱԿՔ

| | ՍԽԱԼ | ՈՒՂԻՂ |
|---|---|---|
| 7 էջ 2 կանոն ։ | իսկ բնութեան խնդիր ամեն հոլովով կ'ըլլայ | իսկ բնութեան խնդիր ուղղականէն զատ ամեն հոլովով կ'ըլլայ |
| 9 էջ 11 Տող ։ | զնոսա | զսոսա |
| 9 էջ 1 կանոն ։ | Թէ որոշեալ եւ Թէ անո-րոշ ածականներն | Թէ որոշեալ եւ Թէ անորոշ Թուական ածականներն |
| 11 էջ 7 Տող ։ | զկեանս | զկեանսն |
| 30 էջ 1 Տող ։ | ուր | իւր |
| 32 էջ Բառից մէջ | Ռափփի | Ռաբբի |
| 44 էջ 1 կանոն ։ | Նոյնն դերանունն աւելա-գրութիւն է՝ [illegible] բա-ռին համար դրուած | Նոյնն դերանունն [illegible] բառին համար դրուած է ։ |
| 96 էջ Բառից մէջ | հետին | հետի |
| 101 էջ 14 Տող ։ | փութաջաւ | փութացաւ |
| 121 էջ Բառից մէջ | մղձել | մղձկել |
| 121 էջ Բառից մէջ | [illegible] | [illegible] |
| 124 էջ 4 Տող ։ | դալարուզգեաց | դալար |

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ


1 Թղենին անպտուղ . . . . . . . . . . . . . 7
2 Նախանձ տան Տեառն . . . . . . . . . . . 8
3 Առաջինն 'ի պատուիրանս . . . . . . . . . 9
4 Առ տիս մանկութեան . . . . . . . . . . . 10
5 Պատանին պատուիրանապահ . . . . . . . . . . 11
6 Փարիսեցին և մաքսաւոր . . . . . . . . . 12
7 Երկու լումայք կնոջն այրւոյ . . . . . . . . . 13
8 Գոհութիւն 'ի վերջ տարւոյ . . . . . . . . . 14
9 Բժշկել 'ի շաբաթու . . . . . . . . . . . 15
10 Կուսանքն իմաստունք և յիմարք . . . . . . . . 16
11 Մի բարձընտիր լինել 'ի կոչունս . . . . . . . 17
12 Վասն ընտրելոյ զպայման կենաց . . . . . . . 18
13 Տալ զկայսեր՝ կայսեր . . . . . . . . . . . 19
14 Ջուրն կենդանի . . . . . . . . . . . . 20
15 Հանդերձ հարսանեաց . . . . . . . . . . . 22
16 Աղօթք տէրունական . . . . . . . . . . . 23
17 Մեծատունն յուսացեալ յինչս իւր . . . . . . . 24
18 Տրտունջք մշակացն . . . . . . . . . . . 25
19 Սերմանացանն . . . . . . . . . . . . 26
20 Աղօթք երեկորին . . . . . . . . . . . . 27
21 Մշակք այգւոյն . . . . . . . . . . . . 28
22 Անառակ որդին . . . . . . . . . . . . 29
23 Զղջումն առ Աստուած . . . . . . . . . . 30
24 Սամարացին . . . . . . . . . . . . . 31
25 Այլակերպութիւն Յիսուսի . . . . . . . . . 32
26 Ուրախութիւնս յերկինս ընդ դարձ միոյ մեղաւորի . . 33
27 Վախճան ամպարշտաց . . . . . . . . . . 34
28 Մեծատունն անողորմ . . . . . . . . . . 36

29 Ընթրիք Բաղտասարայ . . . . . . . . . . . 37
30 Ողորմածութիւն Տովբիթայ . . . . . . . . . 38
31 Երգ 'ի նախընծայ արտասուս Յիսուսի մանկանն . . . 40
32 Սողոմոն խնդրէ յԱստուծոյ զիմաստութիւն . . . . 41
33 Գութ մայրենի . . . . . . . . . . . . . 42
34 Անանիա և Սափիրա . . . . . . . . . . . 43
35 Իղձք առ Աստուած . . . . . . . . . . . 44
36 Եղիա և ողջակէզ իւր . . . . . . . . . . 46
37 Ապաշխարութիւն Նինուէացւոց . . . . . . . . 47
38 Առեղծուած 'ի Յովնան . . . . . . . . . . 49
39 Եօթն եղբարք Մակաբայեցիք . . . . . . . . 50
40 Դաւիթ և Աբիսողոմ . . . . . . . . . . . 52
41 Երգ 'ի ծնունդ Փրկչին . . . . . . . . . . 53
42 Դանիէլ և թշնամիք նորա . . . . . . . . . 55
43 Գողիադ և Դաւիթ . . . . . . . . . . . 56
44 Երկայնմտութիւն Յոբայ . . . . . . . . . 58
45 Զգարուն և զամառն դու ստեղծեր . . . . . . 60
46 Ջրհեղեղ . . . . . . . . . . . . . . 61
47 Դաւիթ և մանուկ նորա . . . . . . . . . . 62
48 Զորեցունց եղանակաց ընդ իրեարս վէճ . . . . 64
49 Հաւատք Աբրահամու . . . . . . . . . . 65
50 Յովսէփ և եղբարք իւր . . . . . . . . . . 66



1 Ծերունին և Մահ . . . . . . . . . . . 69
2 Բադ և Խլունջն . . . . . . . . . . . . 69
3 Առիւծ, էշ և Աղուէս . . . . . . . . . . 70
4 Նասրէտտին և պարտատէրն . . . . . . . . 71
5 Այգի . . . . . . . . . . . . . . . 71
6 Եսովպոս և ստահակ . . . . . . . . . . 72
7 Գայլ և կռունկ . . . . . . . . . . . . 73
8 Արջ սովեալ . . . . . . . . . . . . . 73
9 Կրիայ և Արծիւ . . . . . . . . . . . 74
10 Անմիտ ինքնամատն . . . . . . . . . . 75
11 Գայլ և Պառաւ . . . . . . . . . . . . 75
12 Խոզ և Քաղդեայ . . . . . . . . . . . 76

13 Եղն և որթատունկ . . . . . . . . . . . . . . 77
14 Նասրէտտին և կոչնականք . . . . . . . . . . . 77
15 Էշ և Աղուէս . . . . . . . . . . . . . . . 78
16 Աղուէս և Արագիլ . . . . . . . . . . . . . 79
17 Շուն, Ագաղաղ և Աղուէս . . . . . . . . . . 79
18 Դամոն, ծիրան և մարդիկ . . . . . . . . . . 80
19 Թռչունն կարմրալանջ . . . . . . . . . . . 81
20 Նասրէտտին և ժպիրհ . . . . . . . . . . . 82
21 Ընկոյզ . . . . . . . . . . . . . . . . . 83
22 Գորտ և Արջառ . . . . . . . . . . . . . . 84
23 Ծիպուռն և Մրջմունք . . . . . . . . . . . 85
24 Մկունք և Կատու . . . . . . . . . . . . . 85
25 Աղբերակն . . . . . . . . . . . . . . . 86
26 Նասրէտտին 'ի հարսանիս . . . . . . . . . 87
27 Էշ և պարտիզպան . . . . . . . . . . . . 88
28 Շուն ծննդական . . . . . . . . . . . . . 89
29 Կին և աղախնայք . . . . . . . . . . . . 90
30 Ծառք պտղաբերք և ուղեւոր . . . . . . . . 90
31 Հասկք կրկին . . . . . . . . . . . . . . 91
32 Գեղջուկ ընդ ընկուզենեաւ . . . . . . . . . 92
33 Անձրեւ . . . . . . . . . . . . . . . . 93
34 Եղջերու առ աղբեր . . . . . . . . . . . . 94
35 Բեկոր փայտի . . . . . . . . . . . . . . 95
36 Հայր և որդի . . . . . . . . . . . . . . 96
37 Ճանճ և Առիւծ . . . . . . . . . . . . . 97
38 Կատու և Ողնի . . . . . . . . . . . . . 98
39 Կատու և Մկունք . . . . . . . . . . . . 99
40 Տաճիկ և Ուրուր . . . . . . . . . . . . 100
41 Մանուկն կովարած . . . . . . . . . . . . 101
42 Մուրացիկ. և Նասրէտտին . . . . . . . . . 102
43 Գանձապահ Թագաւորին Պարսից . . . . . . . 102
44 Կռիւ Մկանց և Աքսից . . . . . . . . . . . 104
45 Երեքին ձկունք կարմրախայտք . . . . . . . . 105
46 Աղուէս և Նոխազ . . . . . . . . . . . . . 106
47 Շագանակք . . . . . . . . . . . . . . . 107
48 Աւազակ և Քահանայ . . . . . . . . . . . 108
49 Առիւծ և Մուկն . . . . . . . . . . . . . 109

50 Արջ և Մրջիւն . . . . . . . . . . . . . .
51 Կաղին . . . . . . . . . . . . . .
52 Գայլ և անգեայ . . . . . . . . . . . . . .
53 Փիճին լայնանիստ . . . . . . . . . . .
54 Վառեակ առ մարգարիտն . . . . . . . . .
55 Այծարածն պարկեշտակրօն . . . . . . . .
56 Կարուակ և Դերձակ . . . . . . . . . .
57 Արձագանգ . . . . . . . . . . . . . .
58 Սուտ վկայ և Նասրէտտին . . . . . . . .
59 Սէր բարեկամութեան . . . . . . . . . .
60 Աստեղք և Լուսին . . . . . . . . . . .
61 Եղջերու . . . . . . . . . . . . . .
62 Նասրէտտին առ զօշաքաղն . . . . . . . .
63 Գայլ և Գառնուկ . . . . . . . . . . .
64 Դատախազք և Դատաւոր . . . . . . . . .
65 Աղուէսք երկու . . . . . . . . . . . .
66 Նասրէտտին և Նաւավար . . . . . . . . .
67 Աւանդ . . . . . . . . . . . . . .
68 Դաստիարակ և մանկտի . . . . . . . . .
69 Եղբարք երեքին . . . . . . . . . . .
70 Սիրամարգ առ Հերա . . . . . . . . . .
Այլ և այլք . . . . . . . . . . . . . 134 —



[illegible]

[illegible]

[illegible]

